Գոչել առ դա ու առ կարծիս .
“ Դարձիր , դուստր իմ , դարձո սիրունն .
Օ՜ հօտդ յարօտից յայլեդ 'ի բունն .
Յոսկեձեղուն յիմըս տաճար՝ ,
Դու ճոխ քան զիս՝ մի մերձենար .
Տուն է ցաւոց սա քեզ անդէտ ,
Օ՜ր ու մեղմն երգք խնդաւէտ .
Դարձիր դուստր իմ դարձ 'ի յայլսն ,
Գոհ ընդ բնութիւն , հաշտ ընդ Լուսին .
Դու երջանիկ , և տխրալէս ,
Իսկ ես 'ի կարծ երազատես .
Դառնամ 'ի տուն աչք 'ի լալին ,
Յարհեստական իմ եղկութիւն .
Գոհ ընդ փարախդ անմեղութեան ,
Սիրեա զԱստուած , պահել քեզ զայն „ .

1825

1 Այսպէս և անդր ալաստ են յանդքն , ըստ որում պայմանեալ էին քերթողքն 'ի տուեալ բանի յանդան յաւելուլ յիւրմէ տողս երկոտասան , և անդ աւարտ տալ խմաստից :

## ՑԵՑ ՈՍԿԵՐԱՑ ՍԻՐՏ ՀՈԳԱՑ

### ԲԱՆ

Տամ երանի անհոգ մտաց
Որ միշտ 'ի խոյզ ըղձօսանաց.
Իւր շատացեալ անմեղութեամբ,
Չէ աւարձակ գոհ է ինքեամբ.
Բայց սիրտ հոգած բեռն է անձին,
Բեռն և այլոց, բեռն աշխարհին.
Ու վայելել յինքեան գիտէ,
Նա ու վայելք թէ զինչ իցէ.
Զխորդ այլոց վայելել տայ,
Որ իւր անձին զայն գըլանայ.
Ի գիւտ տանջի միշտ վայելմանց,
Նա և վայրապար 'ի խոյզ է այնց.
Ու զայն խնդրէ 'ի մարդկութեան,
Նա և յանմարդի օտարութեան,
Նըման ոչ ինչ յէից նըւաղ,
Բայց նա կարօտ զօր հանապազ.
Զի չէք նորա անդորրութիւն,
Հոգք և վարանք նըմա են թիւն.
Բայց զի հոգաս անձըն ցաւած,
Հիմ ոչ ըմպես զոր ետ Աստուած.
Վտակք ոսկւոյ զքև անցանեն
Զերդ Տանտալեայ զոր վէպք կեղծեն.
Ջուրք են ոսկի յոր դուն հըպիս,
Բայց զերդ Միդաս աղեօք սովիս.

Ի զուր փախչիս ընդ ջուր ընդ հող,
Յորչափ 'ի քեզ այդ միտք ձախող.
Յոսկեձոյլ նաւ քեզ ուղեկից
Անանջրպետ հող սրտակից.
Եւ ոչ նըժոյգ երագընթաց,
Յապահովէ ըզքոյդ գընաց.
Բայց սուրհանդակք ցեց և վշտանք,
Քան զքեզ կանխեն 'ի քոյին վանք.
Խնդրեա զահոյս գիրգ և քընքուշ,
Բայց ընդ բարձիւ ցանեալ է փուշ,
Ի տրտամ գետնի առ քո դրանդեօք
Հեգ պաշտօնեայդ նընջէ անհոգ.
Բաժակ գինւոյն զոր նայն քամէ,
Ձոխս քան ըզքոյդ երագ ածէ,
Գանձ Կրեսոսիդ թէ զիմ բառնայ
Զանդորրութիւն, մա դու ըզնա.
Եթէ առնէ սա զիս կարօտ,
Քո պէս հոգած ձեռն 'ի ծընոտ.
Եւ թէ 'ի սուղ աւուրց կենցաղ
Զբոսայ անմեղ ինձ ըղձիծաղ,
Կա զայն առ քեզ ոչ նախանձիմ,
Անհոգ վայելք բաժին են իմ.
Նընջեմ 'ի յարդ բայց միշտ զըւարթ,
Ոչ 'ի տաճարդ ոսկեզարդ.
Որդ ձեղուն հոգոց է բոյն,
Գփշերանայ բըւէճք 'ի նոյն,
Յայգ և ցերեկ զանձ երազես,
Ինչ 'ի միում դու վայելես.
Հոգք 'ի շահել հոգք 'ի ծախել
Միտք թըւաքանք զոսկին հաշուել,
Իսկ ես անհոգ մնայիմ 'ի ճաշ,
Թէ կայ բաժակ կարդամ վաշ վաշ.
Ընկերք զըւարթք առնեն ուրախ,
Եւ ոչ զանձուց հոգք և զրմբաղ.

Գանձես այլոց , շռայլ ժառանգ
Ընչքդ վատնէ զանխայեալ գանգ .
Ծիծաղեցի , բայց և գլորով
Ընչքս ածցէ , լեր ապաւով .
Որ զինք ծխուրէ զարկղ 'ի տածել ,
Օ՜ ինչ կոչեցից յանխիմ ասել .
Քերթողդ դու լեր բերկրամիտ ,
Թէ սուղ ունիս նաքարակիտ .
Նա քո վարանք սուղ եղիցին ,
Սիրտ քո և միտք թէ գոհ լիցին .

1825

---

# ԱՌ ՄԵՆԱԼՔԱՍ

## ՔԵՐԹՈՂԱԿԻՑ

### ԲՌՆԱՑԱՆԳ

Բարեհրաւէր քերթողակցաց ձայն անուշակ
Քաղցր է սրտիս քան զգարնային փունջ մանուշակ .
Քերթողական թէ և շիջեալ վառի յիս ոյն ,
Զի 'ի բերկրել ըղձանձրացեալս սիրտ 'ի մոյն ,
Գփխեմ , զաւիծ յետ իւր ճաշուն ձայնէ իւր որջ
Զի 'ի գագար առ իւր կորեամբք գառեալ 'ի մոյչ .
Նա յիս անգայր քաղցրիկ քընոյն հրաւէրք եկին ,
Զամանձնանալ յետ սեղանոյն 'ի խուղ մեկին ,
Բայց զայն հրաւէր այլ հրաւիրան եկեալ և եղծ ,
Սիրոյն նեկտար պարզեալ յուզդոյս զըմպելեաց մեղծ ,
Բայ , Մուսայդ , ժամ է լըսել սատարել արդ ,
Յոր ոչ բաւէ , քև զօրացեալ ամբառնայ մարդ .
Օ՞ն երգեցից բանականիս զինչ իցէ անկ ,
Յիւր բնութենէ քանի՛ օտար կըրից իւր մանկ .

Թէ սայթաքեալ ուղղահայեաց կըշիռ սկան ,
Ընդպատակ երբ չեշտակի եհար մական .
Իսկ 'ի բաւիղ խոր կենցաղոյն թիւր և ոլոր ,
Ո՛չ խորդ գընայ անառաջնորդ , և ոչ մոլոր .
Ո՞չ տեսանես երթա՛ն երբեք ձագք քո ալի ,
Յետ և յառաջ թէ ոչ զնոքօք զըգայ մարի .
Դարմանակալ միշտ է նոցա անգղ և ոլի ,
Կուզ կամ աղուէս թանգուզելով 'ի թաւ մորի .
Մ՝ատակախանձ թէ պակասէ ժիր և ատակ ,
Մ՝անրի գայլոց երխվարաց ջոկի մատակ .
Իսկ անասուն ոչխարակաց յամենուստ ահ ,
Թէ ոչ հովիւ յապահովէ մերձ կայ իւր մահ .
Զ՛օր առաջնորդ պիտի և քեզ , թէ հատ աղաս
Մ՝արմնոյդ բուժիչ թէ քոյդ անձ մաղձ և մաշաս .
Պարան խնդրես հանել զանկեալն 'ի գուբ անել ,
Յաղեկատիդ զըննես լսես զիլ 'ի մանել .
Պակասեցի տեսուչ հոգւոյս միակ և եղ ,
Ա՛յդչափ կարօղք և ինքնաբաւք թըւիցիմք մեզ .
Երբ մերըս միտք վատթարանան 'ի բնէ միշտ եղկ ,
Ո՛ ընթրայն ջեռուցանէ ըզբարըն մեղկ .
Ո՛ւ միշտ վճռէ արդարադատ մըտաց ատեան ,
Ո՛ւ միշտ ուժէ յաղթել կըրից անբան մատեան .
Արա , չօգնեն թէ գիր և միտք , սատար քեզ մը ,
Քո կայծ աղօտ անխուղ շիջեալ փոխի 'ի մուր .
Քաջ առաջնորդ լոյս է մըտաց , բուժիչ է աղ ,
Թէփ 'ի նաշհոյդ զատուցանէ որպէս թէ մաղ .
Թէ կոյր հըպարտ քարընդոստնի , ցաւ է բայց մը .
Որ առանց աճուլ ոլորմ , անկի 'ի մոյր .
Այլ ձիթենի ոչ մըշակեալ միշտ է ամուլ ,
Զիք ձեռք 'ի կուլթ , քամել յինզոլ զայն 'ի մանուլ .
Զէ ինչ այս նոր , գիտեն ըզայն կանայք և արք ,
Խոստովանին պիտեան զոլ և խուժք և մարք ,
Բայց միշտ թըւիմք մեր յաչս անձանց խելահաս այր ,
Այլ ոչ մանկիկք կաթին կարօտք ունել միշտ մայր .

Իմ Մ՚ենալքս, նոր տուրեւառ գոչեա, Ռաւն,
Նատուր նեկտար, ընկալ քաղցու 'ի քոյդ մատան.
Հաստահասցի գուցէ եւ այս յերջանիկ օր
Տըհաս քաղցու 'ի Թաւուկեալ յարգանդի մօր.
Բայց մի կըրկնէր, զոր աչացուխն ասաց Ռնա՚,
Բայց զայս ընկալ 'ի քերթողէս սիրոյ մննա.

1825

---

ԲՈՐԲՈՔ ԿՐԻՑ

# ԿՈՒՐԱՑՈՒՑԻՉ ՄՏԱՑ

Թէ զքո վառեալ կըրից բորբոք
Ու չիջուցին խըրատք ողջք,
Կըշտամբանաց լուր դու զըողջք,
Զոր հազներգէ Մուսայս անմք.
Մ՚իտք քո անսանձ նըժոյգ աշխոյժ
Ճանաչ վարչաց, պարծի յիւր ոյժ.
Ի վիհ զըլի, խոցի անբոյժ,
Բայց եւ հեծեալն ունի զիւր տոյժ.
Նըրբ 'ի յուզման կայր քո սէգ միտ,
Թուէր հանգոյն պայծառ վըճիտ.
Բայց համգարտեալ տես դու ճշգրիտ,
Զոր սուզեցար 'ի խորափիտ.
Զի՞նչ կարծէիր համգարտ ըզփառս՝
Զոր միտք տային կըրիցդ անսաստ.
Ու ախորժէր զոռող քո լաստ,
Ըզխոհական ուղչին նըրպաստ.
Դատրիչ կարծես զանձինդ անաչառ,
Կըրից յորժամ աղմուկք 'ի վառ,

1 Ահա՛ քահանայապետ. Տես 'ի Յովհ. Թ. 24.

Ի դատ անձին թէ չես խելառ,
Բայց չասեմ ես ըզգօն խոպառ.
Ըզսէր անձին ունիս հրապոյր,
Ընեալ զախտիւք շքեղ մնգոյր,
Փայլէ չքնաղ որ արջնաթոյր,
Սակայն մնաց չըտայ անդոյր.
Լինել ըզգօն լոկ յիւր կարծիս
Ոչինչ օգտիցէ, ասա, յաստիս.
Ըուծանա՞յ միթէ ազիս,
Թէ զաւխծուն առնու զագիս.
Ի կենցաղոյս անել բաւիղ
Գտցես արդեօք ճեպնին շաւիղ.
Մ՚ի 'ի բիւրուց հազիւ զուղիղ,
Նշխո յընթաց զելից խաւիղ.
Նթէ կըրից տանիս պաշտօն
Մ՚ի ակն ունիր առնուլ ինչ ձօն,
Բայց ապաշաւ զաղտագողօն,
Կ՚ատաւկք քոյին հողմոց 'ի ցրօն.
Որպէս յորժամ ձըգես ըղխոփ
Յապառաժուտս 'ի կարծրակոփ,
Կամ երբ 'ի ծակ ղնես կողոփ
Բ՚զքո կըթեալ պըտուղս ամփոփ.

1825

ԱՆՄՏԱԾՈՒԹԻՒՆ·

# ԱՌ ՄԵՆԱԼՔԱՍ

Զի՞նչ այն օգուտ եթէ հաւաղ
Իջնաւ իւր փուտ խըլըեալ յաւաղ,
Ի լալ հըստի, ասես, զափանք,
Իզզող ջարդեալ հայիլ ակամբ.
Ո՞չ լաւագոյն քան զայդ աւաղ,
Կալ ըղձուրայն չընաւել վաղ·
Նաւք ծովուն են են անաստ,
Նկըն չանհուն 'ի փուտ քո լաստ.
Նոր 'ի ցամաք նա կայր անքոյթ,
Ընդ էր արագ առնուլ ըղձոյթ,
Չէր պարտ բեդեկ մըխել 'ի ծով,
Ոչ հաւաքել ճիգնադըրով.
Զո՞ր տաս պարսաւ, դու Մենալքա,
Յայդ հէգ արտցաւ քեզ 'ի դէպ գայ·
Ի քեզ գտցես ըղձոյն արատ,
Ի գործ թէ չես հախանձըկատ.
Թէ չախորժես զանալէտ աշխար,
Լեր հօդածու խորհեաց յերկար·
Զի մի զօր վայ յանմիտ հաւորդ,
Տացես ըղվայ և քեզ ձախորդ.
Թէ զգուշաւորք 'ի նոյն ընթաց
Են ուղեւորք նոյն վտանգաց,
Մի անզգամներ, փորձ քո յետին
Քեզ ցաւաբեր, բայց այլք օգտին.

Զէ բանական ոյր անձին միշտ
Դաս անագան կըթէ զնա միշտ .
Դոյն այգ հրահանգ զբաստուց 'ի ձահ ,
Միոյն վըտանգ միւսոյն չէ շահ ,
Ընկերութիւն՝ փորձել զփորձեալ ,
Որ այլոց թոյն մի այնմ անձկալ .
Լիցի քո փորձ վըկայ անարգ ,
Թէ միտք անզգոյշ չունին ըզ յարգ .
Ի մեզ յինչ պէտ համձար և ուշ
Խորհե՞լ զանպէտ 'ւ անձին անյուշ .
Թէ ոչ խորհիս՝ թող քեզ ասեմ
Զոր յանձն ունիս անուն վըսեմ ,
Գուցէ խոկմա յետ քո մահուն ,
Պիւթագորայ ՝ պէս շաղփաղփուն ,
Կրկին 'ի կեանս յառնել նորոգ
Ըզզոյն առնել վասն այն անհոգ .

1825

---

# ԳՈՎԵՍՏ ՅՈՒՆԱՑ

## ԲՌՆԱՑԱՆԳ

Զելլենական զարմիցն ըզպերճ
Ըղձում գովել նիւթ ոչ բառերչ ,
Վարժեաց ուսմանց մեծըն Սողոն
Զազգ սովորեալ յանզգոյծ գողոն .
Զոսկորդ ձըկանց և զխեչափառ
Իմաստութեանց լից լուսափառ .
Նա որք վարժեալք քաղել զծորոտ ,
Զարեստական ուսան զորոտ .

1 Պիւթագորաս իմաստասէր զհոգեփոխութեան կարծիս Յունաց վարդապետէր .

Երբ զՊառնասեան արբին գինի
Թողին ըզձէն զաւար հինի ,
Եւ Ըստըղկան կուսին ծաւի
Հարեալ 'ի գեղ իւ մարդ դաւրի ,
Երգեաց Որփեւս ըզմարդ ծաղկաց ,
Ափիւր քերթողաց երաստ եկաց ,
Որք քաղէին կաղին 'ի մօր
Ուսան ձըգել զյուռթի արօր ,
Ազգ պանծալի Թրակեան զաւակ ,
Որ նախ 'ի ձիոց սատեաւ զաւակ .
Ո՛վ լակոնեանք զօրք և տիտանն ,
Ընդաղթք 'ի մարտ ըզգաստք 'ի տան .
Ըստիկեցիքդ 'ի մարտ հակիրճ
Յաղթօղք Պարսից ըերանցն 'ի կիրճ .
Ըզձեր յիշեմ բիւրուց ըզխումբ
Ի Պնտոսին մինչև 'ի թումբ .
Թեմիստոկլէ , կայ քո համբաւ
Ըզգաց 'ի յազգ մինչ ցօր ամբաւ .
Յիշէ ըզնոյն և Քըսերքսես
Զոր ամօթով 'ի բաց քերքես .
Ո՜ ընդ Յունաց կաց 'ի դիմի
Եւ սարգենեաւ 'ի գլուխ ձեռի .
Եւ ո՞ գիտուն զոր ոչ Հելլէն
Կըրթեաց յիմաստ յիւր սուրբ Լեռնէն .
Ի ձէնջ ուսան անգէտ Մուսայք ,
Ոչ զոք 'ի յայնց զաւակ քուրայք .
Եւ որ ըզձեր չէարբ բաժակ
Տըգէտ է նա և անձաշակ .
Ըզքո վերջին արդ փորձ եսուր
Ըզթշնամի վանեալ գեղդուր .
Գընէր յարեանդ աշխիւ ձապաղ ,
Ըզատութիւն քեզ անըզգաղ .

# ՊԱՐՍԱՒ* ՅՈՒՆԱՑ

## ՆՈՅՆԱՅԱՆԳ

Ազգ պանծալի երբեմն պերճ,
Ամենայնիւ կաս արդ ըստերչ.
Եւ զոր ուսոյց Թաղէս, Սողոն,
Եգիպտական էր այն գողօն.
Արհեստ քո արդ է զխեչափառ
Կամ ձուկն որսալ լուսնոյն 'ի վառ.
Հեռի 'ի քէն նախնին որոտ,
Թուղթ քաղեսջիր տընկեա հօրոտ.
Ի կապելայս նխատ 'ի գինի
Կամ պարապեաց յարհեստ հինի.
Կամ շրջարեալ աչօք ծաւի
Եղ 'ի կաղքաւ, իւ սիրտ դաւի.
Ի գլուխ քոյին փունջք են ծաղկաց,
Ոչ սաղաւարտ որ նախ եկաց.
Ձեռաց քոյին ըմբռն արօր
Հերկել ըզկորդ կամ զէճ ըզմօր.
Ոչ այն նախնին այժմուդ զաւակ,
Որ 'ի ձիոց ոստոյր զաւակ.
Ոչ Աքիլլէս 'ի քեզ տիրան
Եւ ոչ Ոդեւս ըզգօնն 'ի տան.
Ուրդ Լակոնեանք 'ի խօսս հակիրճ,
Արդ վայրասունք լերանց 'ի կիրճ.

* Զպարսաւս զայս 'ի փոքր ևեթ քերթողական արուեստի խնա արարեալ, 'ի նոյն 'ի յանգս զնելոյ և զպարսաւ բռնազբօսելով. որպէս Ճարտասանիցն նախնեաց էր սովորութիւն զընչինս գովասանել, կամ զցոփելին պարսաւել.

Աւազակէն միշտ խումբ առ խումբ
Ծովեզերաց կացեալ 'ի քումբ .
Ո՛ւր Ատտիկեանց նախնին համբաւ
Կամ Կորընթեանց արուեստն անբաւ .
Դու որ անձամբ զանձըն քերթես ,
Իշխեա՞ս վանել ըզՔսերքսէս .
Ոսոխ յառնել դու 'ի դիմի ,
Յորչափ նախանձ 'ի քեզ ձեռի .
Ջընջեա 'ի քէն զանուն հելլէն ,
Ասպատակող լեառն 'ի լեռնէն .
Փախստակա՜ն 'ի քէն Մուսայք ,
Թէ և պարծիք թէ յայնց քուրայք .
Ձեզ Կաստաղեան թափեալ բաժակ ,
Այց գըժտութեան քաղցր է ճաշակ .
Օ՜ր հայրենեաց սէր ցարդ եռուր
Վարժեալդ 'ի հէն և 'ի գեղդուր .
Զօգտէ առ զա՛հ արեան ճապաղ ,
Յախտից ըզգեստ կալ անըզբաղ .

1829

# ԱՌ ԱՌԱՆ ՍԻՍԱԿԵԱՆ

## ՁԵՂՋ ԸՆԴ ՊԱՐՍԱԻՆ ՅՈՒՆԱՑ

### ՆՈՅՆԱՅԱՆԳ

Թէ ազգն Հելլէն երբեմն ըզգօն և զինուք պերճ
Արդ յիմաստից և յամենայն բարեաց ըստերջ ,
Մի զարմանար , ծնցի կըկին Լիկուրգ Սողոն ,
Թողցեն զարձեալ յոր հանմնկեալ կան 'ի գողոն .
Ի նըւազիլ լուսոյն ծիրրի և խեչարփառ .
Եւ պատարի յորժամ լուսինն է լուսափառ .

Եւ երբ թխագին երկինք հողմուտ յամպրոպ յորդոտ ,
Եւ գեղեցիկն 'ի դաշտ տապաստ դնի ծորոտ .
Նա խորշակաւ հարաւահողմ խամրի գինի ,
Եւ ատտնկեան մեղուն փախչի 'ի սաստ ծինի .
Մ՛ի լար Նաան զոր դուն սիրես ազգն այն ծաւի ,
Պահէ զխոր բուն , խամրի այս բայց ոչ դաւի .
Տեսցես ընդ հուպ ըղլակմնեան ըղմորդ ծաղկաց
Նա Լ խզուրկաւ որպէս փթթեալ երբեմն եկաց .
Գիտէ Հելլէն սուսեր շարժել ձըգել զարօր ,
Եւ զամենայն երգել սըրինգ Մուսայից մօր .
Պարձեալ տեսցես 'ի յաւմնեան զարմին զաւակ ,
Որ Հերակլէս , Թեսևս , Նէբուլլ յաշխոյժ զաւակ .
Եւ որ յայժմուս յանարգ արհեստ կամ լուռ 'ի տան ,
Վաշել Միլոն և կամ Կրատէս ըմբիշ տիտան .
Թէ զոյ 'ի քեզ զարի Յունաց յոյս ոչ ծակիրձ ,
Պարձեալ տեսցես ընդ կորընթեան վաղել ընդ կիրձ .
Հիմն Ագիսեայ սոքա ծընունդք որոց և խուռնք
Զեղխական զխտաց քանդել պարիսպ և բուռնք .
Սոցա խորախոյս Թուկիդիդէս մեծն 'ի ծաւմբաւ ,
Որ վիպագրէ ըղհարց նոցուն արարս աւմբաւ .
Թէ ոչ ուժեաց կալ առաջի զօռ Քրսերքսես ,
Զինչ նորահաս անզօր ձագարք զոր դու քերքես .
Պարձեալ տեսցես նոր Ձեմարան գէմ 'ի դիմի
Յոր Պըղատոն եկցէ 'ի զահ , համբակ ձեմի .
Եւ ամենայն այլաբեզոյք ուսցին ծեղլէն ,
Ոչ մեկնեսցին 'ի պատմատեան 'ի սուրբ լեռնէն .
Որ Թէոկրիտ և նոր Սոփոկղ համեն Մուսայք ,
Եւ երգեսցես . քաղցրիկ իմ Յոյնք ուստի բուսայք .
Եւ զու առեալ ըզյոնական անոյշ բամակ ,
Ըզմայլեսցիս 'ի յերգ հովուաց յիւզոյն ձաշակ
Եւ ես առ քև լացից առ տէր . . . . ,
. . . . .
Նոր կասեսցէ բազմադարեան արեանց ձապաղ ,
Ընդ հայրենեան որթովք նստցուք մեք անդրդաղ .

1829

# ԼԻԿԻՏԱՍ ԱՌ ԱԼԵՔՍԻՍ

**Tu nihil invita facies dicesve Minerva.**

***Hor.***

## ԲՌՆԱՑԱՆԴ

Օ՜ որ խիթացեալն յիս Ապողոն ոչ տայ պարգեւ
Չիշխեմ երգել թէ և գրոց տաղիւս առ քեւ·
Օ՜ խորդ մատչել 'ի տօնական աւուրըս ըսեմ,
Նա հիւր անկոչ զպար Մուսայից այսօր խաբեմ·
Վեհ այս կացուրդ այլ սիրտ խնդրէ և այլ միտք լուրջ,
Նա ոչ որ ցանգ ըղձին բայլիք յածեալ զայ շուրջ·
Հեշտ են Մուսայք առ պաշտօնեայս բայց և վըրագ,
Նրբ ոչ տանին նոցին պաշտօն արագ արագ·
Լաւ ինձ յանտառս նստել զօրէն հաւուց համերց
Ի լուր գեղգեղ Ապեղմնից առուացըն մերձ·
Այլ 'ի ժամու առ ազատել զիս անեալեր,
Ըս Աղեքսիս երգել միայն ազդումն եբեր·
Մ՛ի մեղեդեօք բարձրաբարբառ ձնչել զիւր կուրծ
Մ՛ինչ յեկամուտ երկար ցաւոց զոլ անձնապուրծ·
Դաւել ախորժ զառողջարար խոտոյն աւիշ
Օ՜ որ կարկառէ Ասկղեպիադ ճարտար բըժիշկ·
Նա թէ ազդէ ըղձոր քամնակ կորել սուսերբ
Մ՛ի զոչեսցես ոչ այլ ժուժիմ, կամ մինչև յերբ·
Ո՛ր պատանեակ հիւանդագին նստեալ առ մարբ,
Ոչ ըղձեղուոյն ձեռամբ նորա բաժակ կարբ·
Զեռն 'ի դիտակ երբ արկանես զննողդ աստեղց,
Տես թէ թօնուոք լիցին 'ի գեղջ մեր ջրրահեղձ·

Շանթիւք ամառն աշուն պտղովք լիցին ամէթ ,
Զերթ լուսնացոյց աստղագուշակ յիւր գիրըս եդ ։
Ըներ ահա զոր ինձ ետուր յանգ 'ի վերսէր ,
Խնդրուածոյդ մի անլուող զիս դու ասէր ։
Թէև քաղցրասցի երգս անպաճոյճ քան ըղձանուրց ,
Յետ կարդալոյդ արկ 'ի մախաղդ և կամ 'ի քուրձ ։

1826

---

## ՄԱՀ

### ԲՌՆԱՑԱՆԳ

Պայծառ մենեւանդ ,
Բարձրը գահաւանդ ,
Զմահուն երբևեկ ,
Զառնեն անարեկ ։
Նըր սուրն առլեբեր
Շողի 'ի մըբեր ,
Ու յարկդ երկնաձեւ
Ու բանք քո վըսեմ ,
Ու քաջ զօրաց տարւմ ,
Որդւոց և կամ զարմ ,
Ու ողբք բազմավէպ
Մեղկէն զայն հանդէպ ։
Ու խոկ քաղաքորմ ,
Նոյ գեղ իշխաքորմ ։

## Ի ՆՈՅՆ ՑԱՆԳ ԲՌՆԱԶԲՕՍ

## ՀԱՐՍՆ ԱՊԱՇԽԱՐՈՂ ԱՌ ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԻԿ

### ՆՈՒԱԳ

Ըզքօղ պատառեմ խըզեմ ըզգլխակ ըզզարդ մեհեանիդ
Վազեմ առ մըտուր ուր Մ՚անկիկ փեսայս ձըջէ վառն իմ աւեղ ,
Ոչ բարբառ է սա որպէս 'ի Մ՚ըլին առ իւր երբևէկ ,
Որ զիմ նախանձըր կապտեալ 'ի շնորհաց արար անարբէկ .
Նոյն և ես կապտեալ , բայց ըղեօք փարեմ զոտիւքդ երկնաձեմ
Վաւըն քոյ ըղեաց դարձեալ ընդգըրկել յառաջասատ վըսեմ .
Տայ ինձ քաջալեր ըսպաս երկոցուն գըաստուցդ աւըներէր
Ըզհարսն ոչ մերժես բազմեալդ 'ի յանարգ 'ի խոտոց մըրբերս ,
Ո՛վ Թափուհի անձառ . հրաշից իւր տեսօղ առ ըզհովուաց տարմ ,
Բայց ոչ լըռեցից և ես ընդ ձայնից պարուցն երկնազարմ .
Լացից 'ի վերայ գողտրիկ քոյ ձեռաց զիմ ձառ թաղմալէպ ,
Մ՚ինչ քո ժըպտեսցին աղուական աչկունք Թաղծելոյս հանդէպ .
Ոչ այլ ախորժեմ բացօթեայդ փեսայ տուն կամ քաղաքում .
Կացից և լացից , տաց ըզքեւր հանձոյր բուրմանցք իւղաքում .

1823

## ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՑԵԱԼ ԱՌ ՀԱՐՍՆ ԱՊԱՇԽԱՐՕՂ

### ՆՈՅՆԱՅԱՆԳ

Հարսն ապերախտ ո՛ր զոր ետու
Ինձ ընծայեղ սուրբ մեծաւանդ,
Իմ Աստուածեան անուն պատկեր
Իմով մտօքն քանդակեալ անդ.
Բայց դու կապէնք զայն ձօնեցեր
Ինչ հոմանեաց դաւ երբեակ.
Արդ քո պընդիմ ըղձեա լալով,
Ոչ շանթ 'ի յաջ մի ածաբեկ.
Մանկիկ եմ հէգ պարզեմ ըզթաթ
Ապաշաւոր եկ առընթեր.
Թէ սարսէիր յիմոց շանթից,
Սուզի 'ի ծով զաստուտից մրրկեր.
Աստուած եմ քո բայց ոչ նոյնպէս
Նոբր տես Մինս զիս երկնածեմ.
Ձմեռնայ Մանկիկ ես Հինաւուրց,
Տախտ իմ մսուր ոչ գահ վըսեմ.
Թէ պատկառես յաչաց զուարթնոց,
Թողլի ահա ըզնոցա տարմ.
Փոխան նոցին անբանք կըրկին,
Իմ պաշտօնեայք արքայազարմ.
Իբր առ Մովսէս, ոչ որոտամ
Այլ լամ ճըչեմ ճիչ բազմավէպ,
Ոչ զի դողամ, ոչ զի ցաւիմ,
Այլ հըսկելիմ սիրոյս հանդէպ.
Եմ բացօթեայ, ոչ զիս ծածկէ
Դաբիր նեբքին ուչ քաղաքորմ.
Մասիր սիրեա, և համբուրեա
Օծեալ ըզգլուխ իմ խղաքորմ.

1824

# Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ

### ՆՈՑՆԱՑԱՆԳ

Եկայք 'ի տես Տիկնոջն երկնից,
Բայց չէք ոսկի չէք մեծեւանդ.
Ծընաւ Մանուկ աստուածային,
Աղքատ մերկիկ յաղքատին անդ.
Զաստուածութիւն նորա յայտնէ
Զուարթնոց երկնից լոկ երգեակ.
Ընդեղ հովիւքն 'ի տես շողոյն
փայլակելոյ կան ահաբեկ.
Ծառայս խընդրես ոսկեձամեակ.
Զարջառ եւ գէշ տես առընթեր.
Մըսուր խոշոր օրոց նորա,
Եւ բարձ փափկիկ յարդին մըրքեր.
Հիմ ոչ նըմին ըղձեր փետուր
Մատուցանէք գունդք երկնաձեմ.
Իմ մատաղիկ Էմմանուէլ,
Զոխայ 'ի ցուրտ, ուր ձորձ վըրեալ.
Իւր վարուժնեակ երբ ծընանի
Բոյն հանդերձէ ծիծառնցըն տարմ.
Ընծայն ինչ 'ի չէք գանձոյ
Մինչ ծընանի Աստուածեան գարմ.
Ա՜վ աղետից. զայս ամենայն
Զայնեն առ քեզ տարք բազմավէպ,
Իսկ դու ապուշ ոչ հաւատաս,
Եւ ոչ աչացդ որ կան հանդէպ.

Որդ երթ գըրգեաց աշակերտ զու
Գալըպա կառո պերճ քաղաքում.
Յօղ խուր աչաց սընալք 'ի յորդ
Իջքո ձաղէն գէս խըղաքում.

1824

Ի ՆՈՅՆ ՅԱՆԳ

# ԱՆՈՒՆ ՅԻՍՈՒՍԻ

Դուք ինձ օրհնեցէք ով պարք երկնաձեմ
Զանուն Յիսուսի զանուն զայն վըսեմ.
Եւ դուք անտառաց ով երաժիշտ տարմ,
Ազգ ազգ գազանաց և կայտառաց զարմ.
Ըզսա երգեցէք ալիք ահարեկ,
Յորժամ խոխոջէք 'ի ձեր երբեակ.
Եւ ես հէգ քերթող նըստեալ յափն հանդեպ
Երգեցից նըմին նըւագ բազմաձայն.
Ճընչեցից 'ի դաշտ և 'ի քաղաքում,
Ըզխընկելին զայն Անուն խըղաքում.
Զայս տաց նըկարել յիմ յարկ յիմ մըքեր
Ամենայն ուրեք սա ինձ աղըներ.
Զայս տեղ քանդեցից յակն մանաւանդ,
Արկեալ զիմ ուլամբ նընջեցից ես անդ.

# ԱՌ ՄԱՀ

## ՅԻՇԱՏԱԿԱՒ ՏԷՐՈՒՆԻՈՅՆ

Ո՜վ դու Մահ, անարեկ
Ինձ քո միշտ երթևեկ.
Երբ մանուկս աղնիբեր
Բոյդ յայտնի խոր մըրբեր.
Գոյ ամէն մարդկան զարմ,
Ի սմբանից նոյն և տարմ.
Ընդ արաղք բազմավէպ
Տարադէպք և հանդէպ.
Ընդ գըլուխք իշխարքում,
Ընդ ամուր քաղաքում.
Ընդ ոսկի մենեւանդ
Եւ քաջաց անդրի անդ.
Ո՜վ, տեսիլ քո վրնամ
Ինձ միտ տայ երկնաձեամ,
Ու սիրել զոր բառնաս
Ու խընդրել զոր ոչ տաս.
Երանի՛ թէ գործել
Պիտի էր մեզ զերդ գըրել.
Ո՜վ դու մահ ահագին
Ոյց 'ի քէն երկընչին.
Ո՜վ դու մահ ըղձալի
Որ երկնից անն ունի.
Թէ Յիսուս չէր ծընեալ
Եւ վասն իմ ոչ մեռեալ,
Օտար էր քո յիշատակ
Ի լսել իսկ դըժընդակ.

Իւր օրոց մանկական
Նշկեւոյս ապաստան,
Իւր ցօղիկ մըխիթար,
Իւր արիւն ինձ սատար.
Իւր շիրիմ ինձ բունիկ,
Յոր յարեայց զերդ փիւնիկ,
Ու կըրկին մանկանալ
Նաւ յեթեր յարանալ.
Դու Յիսուս յայս ըստէպ
Դիր մատամբ քո կընիք,
Զարհուրել թըշնամեայս,
Պընդել զայն 'ի հոգւոյս.

1824

---

Ի ՆՈՅՆ ՅԱՆԳ

ՅԻՍՈՒՍ ԶԳԵՍԱԼ ԲՌՆԱԲԱՐՇ Ի ԳՈՂԳՈԹԱ.

ՆՈՒԱԳ

Հարսըն սաղիմեան, այս այն է փեսայդ զոր խնդաքուրմ
Կասծոյ գիտակաց գովէիր խոյլով 'ի քոյդ քաղաքում.
Սա այն որ ըզքոյդ զըրուատէր զուլանց չըքեղ մեծեանին
Ընդ քեզ ելանէր առ քեւ ըզմայլիլ զըւարթ 'ի մարմանին.
Զըգձըզգեն ահա տեսանք մըտրական քոյդ յանկըրեան զարմ
Ու մարգիկ գոգցես, այլ վագերց վոհմակ, կամ վարազուց տարմ.
Նու ճըր, և զխմըդ. — Թաղկանայ իւր քայլ, զըլթէ յերբեկի,
Խաչ յուս ելանել 'ի սար Գողգոթայ 'ի սարն անարգի.
Մայր լոկ ընդ նըսա այլ հէք զի՞նչ զօրէր օգնել աղբերիքեր.
Նա՛ յն զի աղեկէզ տեսլեամբ յաւելոյր ցաւոց իւր մըրքեր.
Մաղեցի քերթօղս. «Տէր յո՞ հեմ երթաս, ահա զամ հանիդէդ». —
Հայեցաւ ողորմ, հառաչեաց ցաւոք հառաչք բազմամլէդ. —
«Բո վամն յԱղամեան՝ դուռըն քեզ անտի բանալ երկնային.
Նորթ լաց, մի զըլթէր. — Ու իմն աւ զըմիեցայ յայն պատգամ վըսեմ.

## Ի ԾՆՈՒՆԴ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

### ՅԱՌԱՋԻՆ ՅԱՆԳՍ ԲՈՆԱԶԲՈՍ

Ծնընդեան Մարիամ, հընչէն տիեզերք և մեր քաղաքում,
Օն արէք մանկունք և սուրբ օրիորդք պըճնեալք իշխաքում .
Տեսանեմ քերթօղս հիւսել գըւարթնոց յերկնից դարևանի
Երկնից Դըշխոյին ըզգերծ արքունին թագ և մենեւանի .
Կասեսջիք , գոյակք , շարաթ տեսան է այս , մի այլ երբևէկ .
Մ՝ի գայցեն 'ի տոն լոկ գիւաց փաղանդ 'ի խորս անարեկ .
Արմն երգեցէ 'ի Թաւոտ մայրիս գեղգեղ հաւուց զարմ ,
Արմն մանուկներ և զու ժիր մեղուաց պաշտօնասէր տարմ .
Արմն փըթթեցին ծաղկոցք և Մուրեան անուշից մըրգեր ,
Դըղեկըք 'ի յեռամս երէցք 'ի բուրվառ բեմին առըներ .
Արմն հաղներգուս ձօնեցից խմարհ զիմ վառն քաղմավէպ
Երկակի Ծնընդեանդ Արդուոցս և Կուսին հայիմ ես նանդէպ .
Բայց զինչ զօրացի տաղ իմ երկրաքարշ . դուք զաւք երկնածեմ
Իջէք ձայնակից Մերաստեան տոհմիս տաւղօք ձեր վըսեմ .

---

## Ի ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

### ՍՐԲՈՑՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՆԱԽԱՎԿԱՅԻ

### ՆՈՅՆԱՅԱՆԳ

Օ՜ ընչ խուռն 'ի դաշտից , Թափուր զՍաղեմայ հայիմ քաղաքում ,
Նորին Մ.ըքայի եցէ այդ հանդէս օծունն իշղաքում .
Հրեշտակն 'ի մարմնի կոծի քարանձից . տեսիլ անարեկ .
Ճաշէն վիրգք ընդ օդ , գոչիւն խառնաձայն հրատապ երբևէկ .

Բոլորք գօտեպնդեալք անկեալք ըզմիով զերդ գամբռաց ըղտարում
Մոլեալք մրմնջեն. քակտի՛չ է դա մեր զօրէն և ըզգարում.
Մ՛ի միայն տեսի հըզօր պատանի անգործ ՚ի հանդէպ,
Զօրձոց պաշտպան ընտանեց քաջալեր ՚ի ձայն բազմավէպ.
Յելեալ էր երկինք, մառախլին յաջմէ հօր խոր ՚ի վեր անդ.
Հրեշտակք մի զմիով պատրաստել նրմին փառք և մենաւանդ.
Կարկուտ քարընկէց հեղձոյց, բայց Թըռոյց զօղն երկնաձեմ.
Տէր Թող, առձայնէր. զողդոլթեան լերին արձագանգ վրեժ.

---

## Ի ՆՈՅՆ ՑԱՆԳ

### ԱՌ

## Մ Ո Խ Ա Կ Ն

Հիւրըդ մայրեաց երգեցիկ զարմ,
Օ՛խարդ սըրտիս ախորժ ձեր տարմ.
Զըմերայնոյն բուք անաբեկ
Ո՛հ, ինձ յամէ զձեր երթեւեկ.
Նո՞րք ըղտոլխուր ոգւոյս մրթեր
Բարբառեցայց ձեզ առընթեր.
Ի ձեր տարփամ նըւագ վըսեմ
Յերկրէ աստի զօղ երկնաձեմ.
Նըզգեսջիք ինձ երգ բազմավէպ,
Օրհներգ Հաւատչեա ունկան հանդէպ.
Ինձ ոչ պիտի պերճ քաղաքում,
Ոչ դերասան մեղկ խըղաքում.
Ոչ գահ ոչ ցուպ ոչ մենաւանդ,
Երկինք իմ գահ վերանկեմ անդ.

# ՄԵՂՈՒ

### Ի ՆՈՅՆ ՅԱՆԳՍ ԲՌՆԱԶԲՕՍ

Եթէ զփեթակ զխոես որպէս քաղաքորմ,
Եւ զմայր մեղուաց որպէս զըշխոյ իշխաքորմ.
Ըզքանչացիս ընդ սըխրալի նորա տարմ,
Եւ ասացես զինչ առ նոքօք մերըս զարմ.
Օ՜ ինչ կարգ զինչ խելք, զինչ ճեպք անխոնջ յերբեւեկ
Կանխեն զիզեն, ոչ ինչ եղեալ անարեկ.
Ի ցուրտ ձըմեռն երբ տիրէ սով աւրներ,
Նոքա ջերմիկք զխուրեանցն ուտեն ըզմըրբեր.
Դու, բանականդ, կարգեալ 'ի գործ դու վըսեմ
Եստ ոչ զիզես պաշար յուղին երկնածեմ,
Որպէս տըղայ գունտ 'ի ձեռին խաղաս յանի,
Կամ յօրինես քեզ խաղալիկ մենեանի.
Օրհաս մահուն թէ քեզ հասցէ 'ի հանկէպ,
Միթէ անսամ բաղբաղանաց բազմավէպ.

---

## ՀԱՄԱՇՈՒՆՉ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

## առ վրոյր քերթօղ

### ՅԱՌԱՋԻՆ ՅԱՆԳՍՆ

Սա խմաստնանալ զի է մեզ խոնջիլ 'ի գիր բազմավէպ,
Յարացոյց հերկք 'ի մատեան բնութեան ունիմք միշտ հանդէպ.
Եղ դու 'ի մարմնոդ զըննել ըզգործոն ըզՄեղուացըն տարմ,
Խըրատ կըշտամբիչ ըզվատաց խուժան և ըզգըժտօղ զարմ.
Համզլին 'ի փեթակ երբ զայլըս տանջէ ձըմեռն անարեկ,
Ի գալ գարնայնոյն սըփռին ըզծաղկամբք 'ի ժիր երբեւեկ.

Շատ իսկ է անձանց համայն և այլոց նոցայն հօծ մըրբեր ,
Մէիշն 'ի ճաշակ և մամն 'ի վաստակ գլխոյն աւրընբեր ,
Նշխարի կարգամ ճարտար միաշունչ ճանճիկք երկնաձեմ ,
Գործունելոց անձանց բըզզէք խոհական խմաստըս վըսեմ .
փեթակ ձեր զինչ այլ, բայց թէ կարգաւոր ամուր քաղաքորմ ,
Մանկունք վաստակեն , տիրէ համայնից զըշխոյ իւղաբորմ ,
Ով լընու ըղձիձ թէ մըշակք զըժտեալ գործեն աստ և անդ .
Այս մութին ինձ ուխտուք խընդրելի , ոչ զանձ մեծեանդ .

1824

# ՈՒՆԱՅՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

## Ի ՆՈՅՆ ՅԱՌԱՋԻՆ ՅԱՆԳՍ

Դու որ կանգնես զարպաս շքեղ օթել քեզ անդ ,
Միգաս նազես 'ի ձորձ պայծառ 'ի մեծեանդ ,
Խիթայ լիքք մահ մըտել յամուր 'ի քաղաքորմ ,
Մինչ ինչ ածէ 'ի խոպոպիս յայտ իւղաբորմ .
Ով քեզ ազգեն կուրացելոյդ գիրք բազմավէպ ,
Նա ոչ գագաղք շեղջ շեղջ գիոց աչացդ հանդէպ .
Կարծես թերևս զոգւոյդ գիպուած զերդ շանց ըղտարմ .
Խաբիս խաբիս , ոչ չըքամաս անմահից զարմ .
Բան և հաւատք յամնեն ըզքեզ թէ անարեկ
Բեզէն ապա փորձեա զմտախ . դու երբ և եկ .
Խաբիս խաբիս . մահ կըլանող յուըըն մըրբեր ,
Գործոյք է խոր ոչ վէրբերէ զօր առ ընբեր .
Օն վերանենա յաստեղանց յարկ երկնաձեմ ,
Ով այս գետին , այն է քո տուն անմահ վըսեմ .

1824

ՅԵՐԹ ՂԱՐԱՄԵԱՆ ՌԱՓԱՅԵԼԻ ԱՍՊԵՏԻ Ի ՊՈԼԻՍ

# Նոռագք քառեակ

## Ի ՆՈՅՆ ՅԱՌԱՋԻՆ ՅԱՆԳՍ ԲՌՆԱԶԲՕՍԵԱԼ

### Ա.

Ո՜ն բերէք ինձ բոլորք ծաղկանց և մենևանդ ,
Ի պսակել ըզպարեկամ նոր երբևեկ .
Ըզերանդըլի չեղև ինչ խոչ կատարել անդ
Զ՝ խիր ըզխորհուրդ թէ և գոյին խէթք անարեկ .
Խաստօնոյն է փորձել զհամայն զոր առընրեր ,
Նա զայն ընտրել որ զինքն ածէ յուղ երկնածեմ .
Նա ինչ օգտէ բեռն անպիտան ընչից մըրեր ,
Թէ ոչ ըզմարդ յիւրըն տանի 'ի կէտ վըսեմ .
Տես ըզվեհանձն ոստանկանաց արծուեաց ըզտարմ ,
Ո՞րբ վայրապար հետամարեն 'ի թիթռանց զարմ .
Քաջն 'ի քաջաց գիտակն ունի գործ բազմավէկ ,
Կանգնէ Ազգին կոթող անջինջ հանուրց ծանեկպ ,
Համբաւ նորա ոչ քանակի յիւր քաղաքում ,
Վստաց թողու ըզզարդ պանծոյն գէս իշխաքում .

1824

### Բ.

Պանի օրհորդք անմեղ պաճուճեալք յակի մեծևանդ ,
Յուսով առթելոյ ըզքո սիրտ եղէն առ քեզ երբևեկ .
Ընութիւն և օրէնք ձրգէին ըզքեզ յերկնաղէր լուծ անդ ,
Իսկ դու չըզխոհեմ յինչ խէթ կեղակարծ եղեր անարեկ .
Նթէ բարձրագոյն կրօնից հրաւիրան լըսեր առընրեր ,
Պփել թեանդ 'ի բըլրակ Պառեն յուղին երկնածեմ ,

Ո՛ն, զի այլ ծըփաս 'ի յայդ յորդածուփ մելամաղձ մըրբեր ,
Անց 'ի յասպարէզ կողոպտել զըմբըշաց մըրցմանց վըրևեւ .
Ազգ ազգ երգոց կայտառք ամենայն և օդայնոց տարմ ,
Անուան Հաստողին խայտալ և օրհնել ձագախառն 'ի գարուն ,
Որպէս հաւաստէ տիեզերական սոփեր բազմավէպ .
Իսկ դու ունելով ըզբան և զաշխարհ միշտ 'ի տես հանդէպ ,
Ու բարգաւաճես ոչ զԱզգիդ անուն ոչ ըզքաղաքում .
Ասա ո՞ւմ քո գանձք , և ո՞ւմ բուրեսցեն քո վարդք իւղաբուրմ .

1824

## Գ.

Ես թափառեցայց 'ի գեղ վաղանցուկ յուսկի մեծաւանդ
Ընթող զըստերաց որք զինև բըղխեալ աննեն երբեմն .
Օ խնդս պահեցի առոյգ մանկութիւն զերդ ցանկապատ անդ ,
Արդ զալեբեկ տես հրապոյրք աղուականք զիցեն անարեկ .
Ոչ այլ սէր այլ գութ այլ ազգակցութիւն կան միշտ աւըներ .
Ու զերկիր խորհիմ , այլ իմ պողոտայ բարձր և երկնաձեւ .
Քառանդորդք անմահք խնդըս զանձուց մըլթեր առ մըրբեր ,
Գան ինձ ոչ եօթնեակք , այլ բիւրք սիրատունք 'ի զըպըրոց վըրևեւ .
Զայն տուք Թորգոմեան որոց աղքատաց , խըռնեսցին 'ի տարմ ,
Ընդրդի եմ ես , 'ի ձեզ սերեցայց յանպակաս 'ի գարուն .
Այլ պարծեցայց , պարծեսջիք և դուք սոփերք բազմավէպ
Կ խայել առ յապայս զինոց զաւակաց Եւրոպայ հանդէպ .
Ոսկայնոց թողում պաշտել զիւրեանց տուն յամփոփ քաղաքում ,
Ինձ այս փառք պխոլն այս երկնամատոյց գալինի իւղաբուրմ .

1824

## Դ.

Ու գանձ խընդրել , իմ Աղեքսանդրէ , ոչ քայր մեծաւանդ
Որպէս ըզխորդ լըսել տարաշխարհ ողջին երբեմն .
Դու զինչ խորհեիր զինեն կամ զայլոց 'ի ձեռս քո անդ ,
Ուր մեր ծըփայլն 'ի ծով բաղմայոյզ խորհուրդք անարեկ ,
Բայց արդ զի հայինք ըզքեզ դարձուցր մեզ մօտ աւըներ
Ո՛վ ոչ կայթեսցէ բաղխօք պարզեռեք առ զահ երկնաձեւ .

Յիշէն հասարակ զօր առ մեզ սիրոյդ արգասեաց մրգեր.
Նաւ ծերք և մատաղք և որ Գըլուխս է 'ի նոր գահ վըսեմ.
Տես և ըզմանկունս չէն երկուք միայն, մեղուաց է այն տարմ,
Օր 'ի քո անուն պատուեցեր արժան ձօնեալ 'ի քո գարմ.
Իշխանութեանց ազգաց զիզլն ըզմխիթարանք հատոր բազմավէպ,
Օր քեզէն զխուս յանձնուկ 'ի պահու արձանեալ հանդէպ.
Ինձ թող զայն ամէն, ու թողից զանունդ յայս նեղ քաղաքում,
Արփուեցից յաշխարհ ըզքեզ դըրուատիս 'ի քարտ խըղաքում.

1824

---

# ՏՈԿՈՍԻՔ ՄԵՀԵԻՍԱՆԴԻՆ

## ԱՌ ԱԻՍԱՆԴԱՏՈԻ ՔԵՐԹՈՂՆ

### Ի ՆՈՑՆ Ի ՑԱՆԴՍ

Ասա՛ զըտեր ըզբաղմոզանձ զայդ մենեանդ ;
Որ ինձ վաշխեաց տոհմակամօք քան ըզլի անդ.
Ի խաղ կատակ քերթողական թէպէտ վըսեմ
Արդ ինձ եցոյց այլ ինչ սանդուղք նոր երկնաձեմ.
Հայներգական մեր արուեստից քաղցըր մրգեր
Օգտէ բազում, խնամք սըրտից թէ առըներեր.
Ընդէ՞ր քերդօղք ձօնել զերկնից են անարժէկ,
Մ՛խըտ փայլաքարշ աննեն զխըրեանց աստ երբեք.
Օ փաղփուն ջահին յածին որպէս թիթռանցըն տարմ
Յոր ընդ կենաց կորուսանեն և զխըրեանց գարմ.
Նա քեզ տխպար ոչ երկարեմ, ձմ բազմավէպ,
Ի քոյ թերթից զօր համապատ ունիս հանդէպ.
Մզէ, զննուորք, ըզրանէք առնուլ ըզքաղաքում,
Արիւն թափէք. զինչ ձեր թոշակ. հայց խըղաքում.

# ՅԵՏԱԴԱՐՁ ՄԵՀԵՒԱՆԴԻՆ

## ԱՌ ՎՐՈՅՐ ՏՈՒԻՁ ՅԱՆԴԱՑՆ

### Ի ՆՈՅՆ ՑԱՌԱՋԻՆ ՑԱՆԳՍ ԲՌՆԱԶԲՕՍԵԱԼ

Քերթող հանճարուեստ, առ զոր առ 'ի քէն տուեալ մենեանի,
Զի մի ինչ խափան վաստակոցդ արկցէ քեզ իմ երթեւեկ.
Պարապիմք կեղծեօք որք ոչ ինչ բերեն զերդ արուդ ինչ ունի,
Զունիմք մեզ սատար զազգայնոց ըղփոյթ յուսմանց անարեկ.

Աշխոյժք ոգեշարժք երբ առ քերթողաւ նըստին ապրեկեր,
Դիւր է ամենայն թըռչիմք 'ի Պինդոս 'ի լեառն երկնաձեմ.
Բայց մինչ ամփոփի զոր ինչ և տողեմք ուղնչից մըրկեր,
Թէ և ինքնարդոյ միտք մեր ընծայեն զայն որպէս վըսեմ.

Դու 'ի քոյդ մատիր հընութեանց փեթակ մեղուաց քոց 'ի տարմ,
Նա յիմ բազմաձիւղ Թորգմեան բառից' յազգաթիւ 'ի զարմ.
Նկեսցեն աւուրք յոր քոյդ պըսակին երկունք բազմավէպ,

Ո՞ գիտէ առ երբ ծագեսցէ արև և խոյս հանդէպ.
Թէ հասցուք յամէօք՝ առնումք յաղթութեանք որպէս քաղաքորմ,
Հիւսեալք ըղձըլխոյլ զերկայնմըտութեան ըղձարդ իշխարորմ.

1 Քանզի Քերթողս պարապէր յայնժամ 'ի Բառարան իւր 'ի հայ բարբառոյ յետալա-
կանն, և Վրոյր ընդ հարազատին 'ի Թարգմանութիւն հնախօսութեանն Բոլէնի.

1824

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ.

## *ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԽՈՐԺԱԿԱՑ*

*Ծաղկէ գարուն քաղցր 'ի կանաչ,*
*Սահմին առուակք քաղցրակարկաչ.*
*Երգէ սոխակ գլուըլըն ււաչ,*
*Յայտնել ըղձեր և ըղձառաչ.*
*Փըթթին և վարդք այգուն վաղքաջ,*
*Ձորով արև տայ գլուր պատպաջ.*
*Բայց մինչև յե՞րբ գըման յառաջ.*
*Թօշնի և վարդ, թօշնի կակաչ.*
*Ամենայն ինչ ունի աւարտ,*
*Ժամանակաւ գընայ յաղարտ.*
*Եւ քոյդ, անձն իմ, իղձ տարապարտ,*
*Ընդ նոյն սեւեալ և քոյին պարտ.*
*Ազադուն բաստ նոյն և պարարտ,*
*Սահմին գընան երագ համգարտ.*
*Տալ տապանին անխծապարտ,*
*Պահակ մահուն զոր խնդրէ պարտ.*
*Բեղ զինչ տենչաս ձո՞յլ հոյակապ,*
*Կամ յաղթական կամարակապ.*
*Գուռ զաշխարհիս գլխատաղապ*
*Ո՞չ արդ 'ի Հռոմ տեսեր գըշխապ.*
*Ձ խմ՛րդ իւր շուք և լոյս հրատապ,*
*Անցին շիջան խուճապ խուճապ.*
*Սըրբինդ ցանկաս քաղցրաբարբառ*
*Թէ Պինդարեան ճարտա՛ր կիթառ.*
*Կամ գովեստից խո՛ւնկ 'ի բուրվառ.*
*Բարձցէ զհամայն մահն անպատկառ.*

Սփոփեսցիս յանձուկ պատուառ,
Սնունդ 'ի թաղ չիջելափառ .
Զոր ընթերցցի անցորդ քարիառ
Ի բողբոջեալ չիրմիդ մարմառ ։

---

## ԱՇԽՈՅԺՔ Ի ՔԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ

## ԶԱՓ

## ԵՒ ՊԷՍՊԻՍՈՒԹԻՒՆ

### ԲՈՆԱՅԱՆԳ

Քերթողական աշխոյժք հրատապ, թէ երազէն յընթացս ըշտապ,
Զանձէն երբէք տաղ հոյակապ, որպէս երգեաց գիրկեան կարապ ։
Թէ անիմաստ է իմ բարբառ, ոչ քաղցրանայ լարն 'ի կիթառ .
Նա թէ սաստիկ հրաշից բուրվառ, խունկ ոչ ծըխի, կիզու խայառ ։
Թէ նըկարիչ կարծէ պայծառ ներկ խըծողել յիւրըն պատառ,
Խաբէ որպէս իմաստապառ, հանճար ախտի չափ անաչառ ։
Պայթի սոխակ յիւրըն առաչ, թէ ոչ ըղթոք կշռէ յառաչ .
Զննեա 'ի դաշտ անբաւ կանաչ, ոչ զոյգ գտցես երկու կակաչ ։
Կասկամ միայն զագրակարկաչ, միշտ նոյն կրկնէ ոլորդ կառաչ .
Որով չըտայ ունկան մարմաչ, որպէս սոխակ սիրակարկաչ .
Սոյնպէս բնութիւն ձօխ և պարարտ, վարի յիւր գործ գեղեցկաւարտ
Սքեաս քերթօղ ոչ զիւրըն պարտ, ուսցի անտի պահել յիւր քարտ ։

## Ի ՍԱՏԱՐԻՉՍ ՌՈԼԵՆՆԵԱՆ ՀՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

### ԲՌՆԱՑԱՆԳ

Մեղուք գործօն, ձեր լի փեթակ
Եհաս 'ի կուժ քաղցր 'ի յաւարտ.
Արժան իրաւ բազմաքանդակ
Ոչ մի այլ շատ տողել ըզքարտ.
Եւ ես ունիմ յայն վայելել
Յանուշարար յաւէժ պարարտ.
Զխորդ իմձ քաղցր յեղանակել
Որ 'ի լընուլ սիրոյ զիմ պարտ.
Յորժամ զըւարթ էր իմ սոխակ,
Գիտէր երգել զիւր մեղմ առաջ.
Նաեւ ձըմեռն և գօս դուրակ,
Շարժէր զիւր երգ որպէս կանաչ.
Այլ երբ 'ի սուգ սիրտ իւր 'ի քուն,
Եւ երբ տըխուր տխպք ընդ առաջ,
Ջանի երգել թէ և գարուն,
Թէ և փըթթի կըեռեան կակաչ.
Գործոյդ լըման 'ի գըրուատս,
Վայել արժան տաղ հոյակապ,
Այլ անպարապ ժամանակիս
Կըրճիմըն մեծ հապճեպ ըշտապ.
Աշխոյժք մնաց թէ կայր 'ի յիս,
Շիջաւ ամօք այն վառ հրատապ.
Թէ երգք էին ըսպառեցան,
Զոր իմ փողեաց նուագ բարբառ.
Թէ խունկք էին յիս սաբայեան,
Տըւաւ առատ այն 'ի բուրվառ.
Ընկլին ըղմեօք այդ ամենայն
Թատրոնական որպէս պատառ.

1825

## Ի ՆՈՍԻՆ

### ԲՈՒՆԱՑԱՆԴ

Գարնանաբեր առանց ցօղոյ
Ոչ ուռճանայ մատաղ ուղէշ ․
Ոչ սէգ ատեւծ անյոյս յորդոյ ,
Յանդուղ լերանց առնէ գլուխ էջ ․
Եւ որ զինուոր ըսպարտացի
Խիզախեաց իւր առնուլ պատնէշ ,
Թէ ոչ սալար իւր մըտացի
Պերճ մըրցանակ կանգնեաց ընդ մէջ ․
Իջաք և մեք յառոյգ մեր տես
Յարեակէզ փոշոտ կըրկէս ,
Ըղըրաբիմ հայկեան զարմիս ․
Ըրկատեսաք մեզ 'ի մօտոյ ․
Ո՞վ թէ քանիս նըկարէի
Յիմ մենարան պատկեր պէսպէս ․
Բանի արժան էս հոլէի ,
Եւ պարսեան վէմ կոփածոյ ․
Ա՛յն ամենայն անգոյ անդրիք ,
Ոնացին զարդիս խեղացս 'ի տիպ ,
Եւ կարծեցեալ հասուն խայրիք
Եսուն միայն ճաշակ տըտիպ ․
Յայս հայեցեալ ոչ վառի միտ ,
Եւ ոչ բերի խորախոյս 'ի սիրտ ․
Ընցեալն ազդէ թէ ոչ ճըշգրիտ ,
Բայց մարդկօրէն կասկած և խիրտ ․
Գուշակողիս թէ ծանրալուր ,
Պատրի իւր տաղ ոչ պատրի գիրկ ,
Ես ընդգոզել ըզՍանատուր
Ընդ իւր Սանից յաւէժ և պիրկ ․

1828

### Ի ՆՈՍԻՆ

### ԲՌՆԱՑԱՆԳ

*Որ զոլոմպեան եզ 'ի մըտի կըլթել զուղէ,*
*Խուղեալ մարմնով և յապաժոյժ յասպարէզ էջ.*
*Մ՝արտ եզ հըզօր ընդ ախոյեանս իբր ընդ պատնէշ.*
*Ըզգետնել զայն և կամ ձեռամբ ունել ընդ մէջ.*

*Մինչ ընդհատ Մուսքդ՝ անցեալք յայս նոր կըրկէս,*
*Հասէք ահա 'ի յաղթական մէտ 'ի մօտոյ.*
*Հանդիսադրին թողում ածել պըսակ պէսպէս,*
*Ինձ կամք ձօնել երգ՝ ու արժան ձոյլ կոփածոյ.*

*Թէ կամքն իցեն վարձահատոյց Ձըմարտատուիդ,*
*Ոսկի քան զոսկի արժէ տըկար բայց սեւըն սիրտ.*
*Օ՜խ յերազի ձոխացուցին ցընորք անտիկ,*
*Բայց յարթմընի անոյշ գինւոյն զըտի զայն դիրտ.*

*Ցեսի տեսի պարզեալ սիրով առ իս ըզգիրկ,*
*Համբոյր ժըպտի և բանք սուլիչ ողջ և գիրգ.*
*Բայց 'ի փարել իմ ըղձոլաւ գըտայ ես գիրկ,*
*Նշդեգն ունայն ես զըրկէի 'ի ծոց իմ պիրկ.*

1 Ամ.-ւտ. Նրկոցին Հիւրմիւզեան հարազատ, Թարգմանիչ Հնախօս պատմութեանն Ռոլէնի Գաղղիացւոյ:

## ՎԻՃԱԿ ՔԵՐԹՈՂԱՑ

### ԲՌՆԱՑԱՆԳ

Որ 'ի պխեան էջ 'ի կըրկէս ,
Կայր իւր խրախոյս ծափ և հանդէս .
Արժանացաւ պըսակ պէսպէս
Ըզպինդարեան երգ 'ի Թեբէս :
Հանճարեցին զայրըն 'ի մօտոյ
Զանուն նորա անել արգոյ .
Տաշել զարձան իւր կոփածոյ
Պատուել յանձայն ազգաց յետոյ :
Դու հեգ քերդող բայց ոչ խնձէշ ,
Որ միշտ ձըգնիս իբր 'ի պատնէշ ,
Գոհ թէ գըտցես վարձ խերևէշ ,
Զառնուս ինչ այլ բայց սին ուղէշ :
Նոր և հին դար քանի ըներ մէջ ,
Երբ Օգոստեայ փառքն էր անշէջ .
Ոսկեալ կըշռիւր կէս միայն էջ .
Քերթողք այժմուս մուրան 'ի մէջ :
Ի՞ւ զօրացի քերթող անսիրտ ,
Դուռըն բախել ըղխօթասիրտ .
Հացկատակին երբ պատուի դիրտ ,
Իսկ քերդողին անպատուի քիրտ :
Հասաք 'ի դար գեղեցկակիրթ
Բայց յընտրութեան տակաւ անկիրթ .
Ա՛տ պարարէ զխըրըն քաղկիրթ ,
Հեծէ Պըլուտոս յաղօրիս կկրթ :
Յըրուի տկի ցանկ լրագիրկ ,
Այլ քերդողաց դատարկ է գիրկ .
Սաշէն զուղէղ ըղձայաղիրկ ,
Բայց լաւ քան զայն համձարազիրկ :

Դու հագներգուդ այդչափ թէ գիրգ,
Մի այլ տողէր տաղ և կամ գերք.
Ո՛չ մի լիցի. քերթութեան կերք
Նշրգեն անձին, զանձք թէ և պիրկ.

---

## ԱՌ ՍԻՍԱԿԵԱՆՆ ԱՌԱՆ*

**Non semper seria.**

### ԲՌՆԱՑԱՆԳ ԵՒ ԲՌՆԱԿԱՐԳ

Ոչ միշտ ձրգտէր քաջ Մ՚էոնիդ գիղխական չայնալիձ.
Նոր զի յագոն զըւարթանայր իւր կայտառացն 'ի ձաձիձ.
Նաւ ոչ Տուզզոս միշտ 'ի բեմի, այլ 'ի Տուսկուլ խաղայր խիձ.
Չէ ինչ ամօթ զոսկի զաւազ եթէ չափէ նոյն կաղիձ.
Դու, Սիսակեան, զխոես զաւիհն քերցս հնևերեակ բարբառ,
Թէ զան առ մեզ, չառնեմք երես՝ զառնամ անզրէն 'ի կամար.
Ինձ ընդ նոսին երբ սիրտ զըւարթ քաղցր է կայթել խաղ անչար.
Ոչ միշտ ժուժեն միտք վաստակեալք խոնջիլ քրտնել անդադար.
Եթէ զիպուած բռնազբօսիկ ինձ կարկառէ նըպատակ,
Իմ մեզուօրէն ձախրէ զնոյա քերթողական ախորժակ.
Գիտեմք անշուշտ նիւթեալս աւիշկ չէ ինչ ախորժ յօրինակ,
Նա ո՞ զխոէ վարձահատոյց լիցի ներող ժամանակ.
Ոչ շուք անձանց այլ զխրտւթիւն միայն խնդրեմք մեր կենաց,
Ոչ թէ պըսակ զոր բաղձն ազահ հեգ քերթողին ոչ հիւսեաց.
Բանասեղն եւսոս թէ մինչէ անկն ունիցի ինչ բարեաց.
Իմ, Սիսակեան, լուր նըւազիս. թէ չախորժես կաց 'ի բաց.

1825

* Որ և ինքն նոյնին յանգօք դարձոյց նմա պատասխանի. Տես հտ. Ա. 143.

ԱՌ

# ՍԻՍԱԿԵԱՆՆ

## ՆՈՅՆԱՅԱՆԳ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Զի լռեցեր, ո՛ Սիսակեան, ըղձայնալիձ,
Որսալ փքնով որս 'ի պարակ հանես 'ի ձաճիձ.
Նման եղուկ. 'ի զուր հարան նետք քո 'ի խիձ,
Նաւ քո վաստեալք կըկոցեցյն յականակապիձ.

Նոյին այն դաշտ յոր սեաստուք մեր բարերար,
Կորովաձիգ տայլն բազկաց քօղես կամար,
Իսկ 'ի ժամու են համադասք բարի և չար,
Բրտունք արգդյք վաստակք նանիր յոյս անդադար.

Նետք քո զինալն բայց 'ի կարծեաւդ ոչ նպատակ,
Նա 'ի զգածիլ ունկըն պիտի սիրտ 'ւ անուրժակ.
Զգուած մատանցդ լեցի այլոց լոկ օրինակ,
Պատմել յապայս բայց ախորժէ թէ ժամանակ.

Մ՝ի զարմանար յայլընդայլոյ հետըս կենաց.
Նոյն ձեռք քակեն զանալէտ ստայն զոր նախ հիւսեաց.
Ովէ ձեռընհաս չեւք աւարտել ինչ 'ի բարեաց,
Նա ինչ քրտնինք. ես ոչ խնիթամ կասիլ 'ի բաց.

1825

# ՅՈՒՍՈՎ ԽԱԲԻՄՔ

Նու մի որսորդ լարեաց երբեք զիւր լայնալիճ,
Յանօրս շամբակ, կամ յանթաշուն ցամաք ճահիճ.
Խուզեն և սաթք յաղբիական ափանցն 'ի խիճ.
Խորշի աղուէս բանիլ կրկէն 'ի նոյն կապիճ.
Իսկ մեք աւաղ. ըզՅոյս կարծեմք մեզ բարեբար.
Ո՛ւր մեր Ճըրգանց որպէս պատրիւք կանգնիլ կամար.
Խաբի ռամիկն յիւր անըրջոց բարի և չար,
Իսկ մեք յուսով երազանօք միշտ անդադար.
Ո՜ ինչ մեր ըղձից զինչ և Ճգանց զի՞ նըպատակ.
Փառք և ոսկի յագեցուցին զմեր ախորժակ.
Դիպուածք անցեալք դեռ չեղիցին մեզ յօրինակ.
Մինչ 'ի պատրանս անցցէ ուրեմն իմ ժամանակ.
Նշղուկ զինև. ընթացք համբուն իմոց կենաց,
Մաշուած ունայն զօր պատ 'ի պատ սարդըն հիւսեաց.
Որպէս իմ մըտղուկք, չէք անդ հաստատ մասն 'ի բարեաց,
Օր մի հողմանք զոստայն ըզկմախս տացեն 'ի բաց.

1825

# ՅԱՄԵՆԱՅՆԻ ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ

Թէ ոչ կըշռէ ակըն զխոտող,
Ինչ ոչ արժէ ձիգ լայնալիճ.
Թէ ոչ ըղձամ զխոտէ որսող,
Զարժեն և խուռն հաւքն 'ի ճահիճ.
Նաւ չերթայ հարթ յիւրըն դադար,
Եթէ Ճախրէ անբեռն անխիճ,

Եւ ու դիտէ ակըն Ճարտար ,
Թէ փակ իցէ ակնակապիճ .
  Եւ ինչ օգտէ քեզ պարագայ ,
Թէ և աջող և բարեբար .
Թէ ու գիտես գործել ըղձայ ,
Ի գործ պէսպէս սանդուղիք կամար .
  Շրջէ ըզգօնն ըզբընաւ ինչ ,
Ի լուացոյն թէ և այնք չար ,
Եւ որ գոյն է և կամ ոչինչ
Ուղղէն ըզնոյն խելք անդադար .
  Թէ իւր տարփանք անկարանան
Լինել ժաման յիւր նըպատակ .
Փոխէ խակոյն աներկեան
Ըզվայրապար զիւր ախորժակ .
  Նախնեացն առնու ըզպատմութեանց
Զանցըս պէսպէս իւր օրինակ .
Ի ներկայէն կամ 'ի կարծեաց
Կարգայ զգալոցն ժամանակ .
  Ըզգօնութեան թէ կայր քանուն ,
Ուղիղ արդեօք էր գիծ կենաց ,
Ոչ նոյն դատակ քակէր համբուն ,
Ճարտարարուեստ զոր նախ հիւսեաց .
  Որ ինչ ուղիղ արդարաչափ ,
Միշտ 'ի կարգի յաչըս բարեաց .
Իսկ եթէ վրէպ այն 'ի մի չափ ,
Չէ ինչ արդոյ խոտի 'ի բաց .

1825

# ԳԱՐՈՒՆ

Սիրեցեալդ իմ, էանց հիւսիս ,
Զի՞ այլ յամեմք աստ 'ի սարիս ·
Փոխանակեաց ահա զեփիւռ ,
Կայտառէ բնութիւն բոլորասփիւռ ·
Ամպոց գընաց ցուրտ հովանի ,
Այերք օդոյն մեզ ջերմանի ·
Բանան ահա տես դուռք գարնան ,
Բարիք ամէն ընդ նոյն դառնան ·
Աշտամակեաց արեւն 'ի լոյս ,
Հաշտ է ընդ մեզ երկնից դըշխոյ ·
Ո՞չ տեսանես ըզդաշտ դալար ·
Զի ոչ թողու ըզտաղաւար ·
Արտաքս ահա ոստնու մըշակ ,
Յողջոյն ծիծռան գարնան գուշակ ·
Ամանչէ արդ աշխոյժ արջառ
Ի մատակաց զարել կաձառ ·
Ի մօրէ վազէ բարձր 'ի բըլուր ,
Եւ որթք ըստ մարց թողուն մըսուր ·
Խաղան խայտան ազատք յարօտ ,
Արձակաշունչ օդոյն կարօտ ·
Զհաստահարուստ նա զիւրն երբուծ
Տայ մըտադիւր յարօտ 'ի լուծ ·
Կայթէ խէթկլիչն յերինջըս ցուլ ,
Եւ կայթս առնու ամիկն եւ ուլ ·
Զարգելական հօտ իւր հովիւ
Տայ մակաղել առ հեշտ առուիւ ·
Հընչեն անձաւք անտառք լերինք
Եւ արձագանգք քաղցր 'ի սըրինգ ·

Տես ըզմիջատս հողադարան
Եւ ըզխորդոյըն կարաւան ·
Զխմորդ հորդին երամ երամ,
Կենդանանայ մեռեալ չերամ ·
Զարդարին թուփք ծառք 'ի սաղարթ ,
Եւ ազգք հաւուց ճըճուեն զըւարթ ·
Ու այլ 'ի գոմ սիրէ ըզնինջ
Եւ անդէորդ առ լուրն երինջ ·
Ուլ ըզկաթնեղ ձըմէ զըստին
Ի ձարակացն իւր վերըստին ·
Եւ զոյլխարակ գեղադանդուր
Ի միջօրեայն ածէ 'ի ջուր ·
Քաջն արտաւլար կազմէ ըզխոփ
Որ հիւսի շունչ ու սըրտատրոփ ,
Ըզկորդացեալ փըշրէ ըզբունծ ,
Հարթեալ 'ի ցան և յառատ հունձ ·
Հընչեն մայրեք հովանախիտ
Ի խոխոջմանց ականակիտ ·
Իսկ արտահունձ քաջ նախահօգ ,
Արդէն յուսով լայնէ զիւր գոգ ·
Գիտէ թըւով քանի օրայք
Բերցեն յետոյ իւր արտորայք ·
Խոյս տայ պըւէտ 'ի սարաւանդ
Ու 'ի հօգոց զոլ պարաւանդ ·
Ընկեալ 'ի կողմն առ 'ի թաւալ
Ըզմարմանդիւք ցօղածաւալ ,
Յառի ծառոց յոստ վարսագեղ
Կամ 'ի ծաղկանց 'ի գեղ աստեղ ·
Ներգէ զիւր տաղ բանայ զիւր ծոց ,
Հեղուլ ըզցաւ և ըզբիւր խոց ,
Կան ունկընդիրք դաշք գեղջեկից ,
Եւ դասադաս հօտք ասրալից ·
Սոխակ նստեալ անդ 'ի սօսի ,
Ներգէ նըմին պատասխանի ·

Իւրեանք միայն լսեն միմեանց
Ըզխանդակաթ երգ հեծութեանց.
Նա գեղգեղէ զհաստիչ գարնան,
Յանոյշ նուագ թէպէտ անբան.
Սա բանական՝ նիւթ հանճարէ,
Ըզձայն նորա 'ի փոխ ածէ,
Յերկուց երգչաց մի լոկ դըրուակ,
Մին բանահիւս՝ միւս բազմերգակ.
Աւաղ ինձ ո՛ տայր և զսոխակին
Ըզդայլայլիկ զարմանալին,
Զի երկոքումբք 'ի բան 'ի շուիչ,
Փառաւորէի զգարնան հաստիչ.
Գէթ նոյնաբար սիրտ իմ փղձկէր,
Ի գարնանի՝ հաստչին 'ի սէր.
Թէպէտ արժան սիրել ըզնոյն,
Ընդ չորս բաժին բոլոր տարւոյն.

1825

---

Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ

# ԱՐՏԱՎԱՐ ԱՌ ՄԵՂՈՒ

## ՏՈՒԱՐԱԾԱԿԱՆ

Թէ քաղցր ասես, Մեղուդ գործուն,
Զիմ երեկեան մարդ ազազուն,
Արդ փունջ առատ կապեմ զարդիս,
Արածել անդ երբ և հաճիս.
Թէ զիս տեսեր թողեալ զարօր
Անգործ որպէս 'ի տօնից օր,
Մի ծիծաղիր մի զարմանար,
Նշինք մրգոյս խօթք 'ի դադար.

Յաւել և զայն, 'ի գեղջ մերում
Ի Բեթղեհէմ տան անպատում.
Նշրթեալ էիր ո՛վ թէ և դու,
Զինչ տեսարան, սիրուն Մեղու.
Յանուշահոտ 'ի քարայրի
Նոր ինձ անդէն ծաղիկ դաշտի.
Ոչ թէ նարդոս ոչ թէ հօրուտ,
Ոչ ասպուզան և ոչ մօրուտ.
Յորոց այնչափ առեր դու քաղ
Շիթ անուշակ 'ի քոյին մաղ,
Զիմ պարարել քըմաց ճաշակ
Ի քոյդ խորխոխ 'ի քաղցրուակ.

Բայց ոչ բաւեմ զանունդ յիշել
Առանց ցօղոյ ընդ մետ ածել.
Ո՛վ իմ մանկիկ զիա՛րդ սիրուն,
Աստուած և մարդ տէր գերաբուն.
Դու մեսիայդ վերնապատգամ
Զոր իմ չետես հայր Աբրահամ.
Բայց 'ի քարայր և 'ի մսուր,
Ի շո՞ւնչ հիւսի . . . ո՜հ այդ անլուր.
Զի՞մ ոչ 'ի վանս առեր դադար
Թէ և փանաք եմ արտաւար,
Կայր իմ օրոց և սուրբ գըգաթ
Իմ մօրչ զատանց քեզ 'ի փաթաթ.
Անդէն ըզքեզ զետեղէի
Կըրկուտ 'ի խուղ լուցանէի.
Որդի եղէ ես հօր իմոյ,
Բայց ոչ յայդ տիպ այլընդայլոյ.

Դարձայց, Մեղու, յանկել զիմ բան.
Այնչափ չըքնաղ տեսիլ մանկան,
Այնչափ կարմիր իւր այտք շըրթունք,
Այնչափ քաղցրիկ ծաղկեալ աչկունք,

Այնչափ անոյշ էր ցօղ աչաց
Մինչ և գաղղէն՝ դառնիճ լերանց .
Իսկ լանջք փափկիկ որպէս յասմիկ ,
Նարկիզ նարդոս ոտք և թաթիկ .
Մինչ ըղձողք թէ բըղձէր ,
Դու մեղր անուշ գողանայիր ,
Նա ընտրէիր քեզ 'ի փեթակ
Իշտուրբ մըսուր զայն խառոշակ .
Օ՜ ինչ բան ասեմ զօրխորդէն ,
Իզմայր մանկանն աստուածեղէն .
Շուշան և վարդ չեն ինչ ասեմ,
Նա երկնային գեղն այն վըսեմ.
Նա՛ւ , Մեղու , յետ այս տեսլեան ,
Մարթ էր դառնալ ինձ 'ի գութան .
Ձեռք բըրտացեալք չախորժէին
Կրկին 'ի մաճ 'ի վար անդին ,
Վասն այն խուսեալ եղէ հասու
Յայս ծաղկուտ խաղ Յորդանանու .
Նոկայ յորսայս , անցիցն յիշմանց
Դիւրել զիմ սիրտ հեշտ եղեգանք .
Ի տես մատաղ հօվիւ էի ,
Հօրն իմ խաշանց ես հովուէի ,
Իժժամ դատարկ 'ի յողն անկեալ
Նա վըտակօք անդ խոխոջեալ ,
Արբընդէի զօր հայրս Նաւփ
Ինձ երգ ուսոյց գետոյս առ ափն .
Յիշեմ զիմերդ սըրինգ նորա
Էր համբաւեալ 'ի գեղջս Յուդայ .
Այլ երջանիկ այն սուրբ օրեր
Օ՜ երդ խաբուսիկ եանց ըստուեր .
Արդ գործ վարեմ արտավարի ,
Ձեռք փապարեալք 'ի կորդ երկրի .
Օ՜ ինչ քաղցըր մեզ չինականաց
Բայց նըւագել զերգըս դաշտաց ,

Զարօտ լերանց զաղբիւր վըճիտ ,
Ըզհովանիս անտառախիտ .
Բայց առաւել ըզՆա երգել
Որ ըզնոյն եկն 'ի հաստել .
Այսպէս երբեմն Յեսսեան հովիւ
Հաւ մեր երգէր յայս քարաքիւ .
Լըւա՞ր Մեղուդ զերգոյս պատճառ ,
Թէ էր թողի ես զխմս արջառ ,
Դարձիր 'ի քոյդ դարձիր դադար ,
Երթ յընկերաց գործունեայ պար .
Մինչդեռ աջող է եղանակ
Մեղր ամբարեա 'ի քոյդ փեթակ ,
Ոչ միշտ գարուն ոչ միշտ աշուն ,
Ձմեռըն գայ քեզ սառնատուն .
Զորոյ զեղեամն[1] անարգասու
Յիմ գագաթան տեսանես դու .
Ընչքն յինէն ծաղիկք տիոց
Թօշնեալ որպէս յաւուրս հընձոց .
Գործեա , Մեղու , դու ինձ անհատ
Ի մեղր 'ի մոմ բըղխիմ առատ ,
Զի 'ի Սաղիմ յորժամ երթայց ,
Ի տուրք տաճար նըւէր տարայց .
Արդ արեւմուտք ծիրանանան ,
Զըլխին կատարք կարմեղոսեան .
Եզանց բառաչք զիս 'ի պառակ
Ըզքեզ կոչեն 'ի քոյդ փեթակ .

1824

1 Ալեւորեալ խակ էին հերք քերթողիս 'ի յօրինելն զայս , թէպէտ չև ես ծերացեալ .

# ԿՏԱԿ ՄԵՂՈՒԱՑ

Ժիր Մեղուն-'ի փեթակ ,
Ի մահուն-եւ կըտակ .
Արդ լուայք-որդեակք իմ,
Մ'ի փըքսայք-թ'էք ուշիմ .
Կար մարմնոյդ-անատակ
Չէ օգտոյդ-հանգուճակ .
Ախոյեանք-ձեր յաճախք ,
Արջք գազանք-որդ մարախք ,
Յայդ դաշտաց-համասփռամ,
Ահէ հոլուեաց-ձեր երամ,
Կրթեսջիք-մեղր անբաւ ,
Ձեզ հերիք-'ւ այլոց բաւ .
Նայց ոլիշ-թ' արածէք ,
Ի ոչ մի շիչ-պատարէք .
Սայրապար-սովեսջիք
Ի մի պար-կոլիջիք .
Դուք 'ի ձեր-յողջ ըղձիձ,
Մահարեր-լեալ գահիձ.
Մեղուացն այն-գունդ լըսող
Օ մայրենին-ոչ եթող .
Համամիտք-'ի վաստակ ,
Սիտ առխիտք-'ի պարուակ .
Մինչ ցայսօր-բարգաւաճ
Ի բան մօր-կան միշտ հաճ
Յաձախեաց-նոցա զարմ,
Ոչ ձըձեաց-արգել տարմ.

Պատուեցան-յարքայից .
Ձօնեցան-մուսայից .
Երթայ մամ-առ մուսայս
Ակընածմ-յանդեղայս .
Եւ սուրբ բեմ-կայ 'ի վառ ,
Յայս վըսեմ-երկ պայծառ .
Ի մայրեաց-մեղուալից
Պետ յորդեաց-մեղրալից ,
Օ որ ըմպէ-և Կլիտոս
Օ այն ժայթքէ-յԱմպարոս .
Ով թըռչնակք-դուք ըզգօն ,
Ձեզ երգակ-վէհ Մարօն .
Յոժ պակաս-յանցանէր ,
Մեմփիս զայս-թէ պաշտէր .
Քան զՄ'ջխա-և խլատոր
Օ անգոյ դխ-զայլ ցընոր .
Ձեզ դըշխոյ-նոյն և մայր
Գունդ արգոյ-միշտ եղբայր .
Ով թըռչունք-նազելիք
Փառազունք-գովելիք ,
Ի մի գունդ-խըմբելոց
Նարեմնունդ-վարժելոց ,
Նըզգեւջիք-օր աւուր ,
Ազգեւջիք-զայս 'ի լուր .
« Ոչ Մեղու-միայնակ
Օ խըր լըմու-ըղփեթակ ,, .

1823

# Ի ՏԱՊԱՆՆ ԱԲԵԼԻ

## ԵՂԵՐԵՐԳ

Գիտեմ, Աբէլ, լացին հերիք
Ծնողք ըզքոյդ ոսկերոտիք ·
Եւ ծխրդայիդ որչափ շուրջ էր,
Ըզքոյդ Տապան թացին լալիք ·
Բայց և ընկալ ախորժաբար
Ըզքերթողիդ՝ տըխուր քընար,
Որ ըղձաձեաց սըգաւորս
Ըստ առկախեմ յիմ մըխիթար ·
Որ եմն հիւսեմ ընդ փունջ ծաղկանց
Ըս սափորոյ սուրբ ոսկերաց,
Ի մահարձան և զայս հագներգ
Քանդակեցից ՚ի ցօղ աչաց ·
Ուսցին տոխակք զայս գեղգեղել,
Ուսցին զեփիւռք ըզսոյն հնչել.
Եւ որ անցցէ առ քոյդ շիրիմ,
Խոնարհեսցի զիմ տաղ սերտել ·
Նախավըկայդ անմեղութեան
Փրկչին խոց տիպ և արձան ·
Ըզքո ծնողաց թէ և անպարտ,
Լուծեր նախկին ըզվրէժ մահուան ·
Խառնեաց նախանձ սուրբ քո զարիւն
Յողջակիզիդ անբիծ աճիւն ·

1 Ըղեքերգովին, նա ինքն է Կեսներ, որ զգանչելապէս քերթեաց զՄահն Աբէլի յեր-կակ Երգս, զոր և ՚ի գերմանացի բնագրէն ՚ի մեր լեզու (՚ի 1828, և ի միւս ՚ի 1830), ՚ի յոյժ թարգմանութեանն ըղեղերգս ձօնեաց Ընձեղէն թարգմանիչն ·

Բայց ոչ զօրեաց ջնջել յերկրէ
Զարդարն անուն շքեղ փայլուն ։
Որ զք ըղձցդ կարդայ եղեր ,
Քո պէս բերցէ սիրտ անեպեր ·
Տեսցէ զանմեղդ անձըն ցաւած ,
Չիք երջանիկ յերկրի օրեր ։
Մանուկ անբիծ թէ խուզարկու
Ի տես մաշի սըրբոյդ մահու ,
Ուսցի ըղձցդ յանձըն անկել
Աստուածատենչ սիրտ սիրարկու ։
Թէ արտասուէն ծընողք դժբախտ
Զոր կորուսին մանկիկ անախտ ,
Նախանձողաց լալոնք ըղձեն
Բուժէ վնոցա զաչացըն ախտ ։
Հարսըն պարկեշտ թէ առ շիրիմ
Զխըն հեկեկայ ըզմըտերիմ,
Ըզթխըրզայն լացցէ նըւագ ,
Բայց լի անմահ յուսով կամիմ ։
Նախանձաբեկ միտք ախտակիր
Թէ զկայենին ունի բասիր ,
Զարհուրեսցի , նախանձ դժնեայ
Յենուլ ու գըլեաց ըզնա յոձիր ։
Բայց 'ի նորայն մի մոլեսցի ,
Յանյուսութեան ախտ լըբենի ·
Քաղցըր լուէ ունկն աստուածեան ,
Ձայնից խոնարհ զղջականի ։
Նա ո՞ւր փախչիս դահիճ Կայեն ,
Խիղճ և Աստուած ըզհետ պընդլին ·
Փախչէլ կամիս առ յԱստուծոյ ,
Ո՞ն առ Աստուած փախիր կըրկին ։
Լո՞ւր դու ձայնին զոր Մեհալա
Յունկըն քոյին լալով կարդայ ·
Չիք մեղք անթող , քաղցր և Աբէլ ,
Իւր խակ արիւն քեզ պաշտպան կայ ։

Անխռասարդ կամ ալեւոր
Թէ զիմ կարդայ ըղձըլուագ նոր,
Ու փայեսցէ թէ չեմ Ռ.բէլ.
Խորասուզեալ չարեաց 'ի խոր.
Գուէթ, ասասցէ, թէ չեմ անմեղ,
Զանմեղութիւն զխոեմ շըքեղ.
Ու ըղխիղձ սուրբ միշտ ցանկալի,
Ինձ կայենին ցուցցէ երկեղ.
Ու այս խղճի բարբառ անկեղծ,
Միշտ Ռ.բելին ներքող անեղծ.
Բան ըղնխաղ ողբերգութիւն,
Զոր Բերթողիս հանճար ըստեղծ.

---

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱԳԱՏԻՒ

# ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐՆ

## Ի ՄՈՒՏՍ ՆՈՐՈՑ ՏԱՐՒՈՑ

Երջանիկ ծընունդ նորածին տարւոյս,
Յորում զօղ շընչեմ տեսանեմ ըղլոյս.
Ռ.ԺԼ գէր երջանիկ մուսայն բարեյոյս,
Բզքոյդ տեսանէ զՌ.րև և ըղլոյս.
Նուազեալ նորափայլ յանդ Մըխիթարեան,
Կենդանագործել 'ի հասակ աճման,
Զարմատ հաստարուն մայրից բազմամեան,
Նոյն և ըղմատաղ խաւարծիլ գարնան.
Կան այն 'ի ծագաց Դաւկիոյ[1] օտար,
Տեսեալ ըղձաձանչ լուսոյդ բարեբար,

1 Դաւկիա գաւառ յՈւնգարիա, յորում է Պաշպալով քաղաք Հայոց. ուստի զուգս զայս և զոմանս 'ի յետագայ եկեղոյն գրե քերթողս.

Խայտայ սըլանայ 'ի Հանդըրին դադար ,
Այսպէս հարկանէ զընտել իւր քընար .
Արե՛ բարձրացեալ 'ի մեր զողխակ ,
Ընթացիր անխոնջ նըմին հանգունակ .
Այլ ընդ խաւարման ծիր արջնատեսակ ,
Աչք իմ մի տեսցեն և ոչ յԱզլիւսակ .
Ի ջերմ ճառագայթ շողոյդ արդաւանդ ,
Իմ Մըխիթարեան ծաղկեսցի մարմանդ ,
Բայց Ասիա նըմին դարեւանդ ,
Եւ ուր կորդ պարեխք փըթթեսցի և անդ .
Լուծցին և սըզոխք պաղեալ Գըռնովլայ ,
Ախրտք կամք խեթահայք՝ գաղափարք նորա .
Եւ թէ ոչ սիրեն մըտադիւր կամայ ,
Յարգեսցեն զանխուլ մըտօք ակամայ .
Գարուն մըշտադեղ զեփիւռ հեզասիկ ,
Ի ծագել արփւոյդ տիրեսցեն այժմիկ .
Որպէս յեդեմեան դարաստան քաղցրիկ ,
Հիւսիս և խորշակ քև տարաշխարհիկ .
Այսպէս անճառու երգեալ իմ Մուսայ ,
Յերկնաբաշխ աջոյդ թըռչակ ըղձանայ
Յիւրըն տաղաւար զափամբք Գըռնովլայ ,
Ու իւր հագներգակ զըւարթ խոյանայ .

1812

## ԱՌ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ

## Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱԹՈՌԱԿԱԼ ՎԱՐԴԱՊԵՏ

## ԱՐՁԱՆ ՍԻՐՈՅ

Պանդուխտ սուրհանդակ, փութա 'ի յընթաց,
Յառատեղէ յԻնդղին երկայն է գնաց.
Ըզծըրար սիրոյս զաւանդ յարգանաց,
Ի ձեռըս մատոն որ զիս քանդակեաց [1],
Ա զխոէ գըրոցես ըզնա մնացեալ,
Յիւրըն տաղաւար ճիքեամբ շատացեալ
Եւ կամ առ Պաւղոս վարժիչ իւր կանխեալ,
Զիմաստից խորոց ըղձանօք խնդրեալ [2],
Եւ կամ առ հըսկօղ լուսոյ լապտերին,
Ընձամնձրոյթ երկնել ծընունդ նորածին.
Կամ խորհըրդական 'ի տուն խորհըրդին,
Կամ քըրտամբք ձըռնշեալ 'ի մամուլ տըպին.
Ուր և նա գըտցի մի ինչ բարբառիր,
Հերիք է նմա քարտէս խորագիր,
Ծանիցէ զընտել ըզմատըն և գիր,
Եւ ըզսիրտ անկեղծ մատին թելադիր.
Զոր 'ի բոլանդակ աւուրըս տարւոյն,
Ուխտիւք փափաքեմ առ 'ի Բարձրելոյն.
Երգել միանգամ 'ի գըլուխ տարւոյն,
Ո՛ք գըլացի 'ի լուր սիրելւոյն.
Բայց զի՞նչ երգեսցէ անդաշնակ իմ լար,
Մեծ քան ըզքոյին արժանիս արդար.

1 Զի դաստիարակ էր լեալ մանկութեան քերթողիս ։

2 Քանզի 'ի մեկնութիւն Պաւղոսեան թղթոցն վաստակէր յայնժամ Աւետիքեան Վարդապետն ։

Կամ զինչ մաղթեսցէ մակացուդ ճարտար,
Որում ոչ անձկայ սիրտ սիրապատար.
Առաջին պարգև հաւատամ զարև,
Ըզկեանս արժանի պարգևաց պարգև.
Զի զերկաքանչիւր տեսանեմ առ քև
Քանի խնդութիւն ոչ զեղցի զինև.
Կեաս դու Աստուծոյ կեաս դու և անձին,
Կեաս մխիթարեանց կեաս նա և ազգին.
Ո՛վ կեանք երջանիկ 'ի մի կենդանին,
Կեանք քառապատիկ 'ի մի զուգակցին.
Արդ թէ ցանկացայց կենաց ընդ երկար,
Միթէ մեղանչեմ յիմ հայցուած արդար.
Կեաց ոչ միակն այլ քառեակ յամայր,
Ունիմ ձայնակից զազգայնոց գումար.
Յորոց հրապարակ կանգնեալ է կոթող,
Ոչ զոր 'ի Հռոմ տեսեր զող 'ի զող
Բերեալ 'ի Մեմփայ զոր Կեսար եթող,
Յիշատակ հաստեալ այլ յերկիր 'ի հող.
Եւ ոչ յոր ափչիս առ Վիտորեայ,
Ի մեծ Բաբելոն 'ի լերանց Հայկայ,
Կոթող վիթխարի անտիպար հըսկայ,
Նըշան այրասիրտ սէգ Շամիրամայ.
Ոչ, այլ քոյդ հատեալ 'ի յուռթի հանքաց,
Զոր բաղդն Հայկազանց 'ի քեզ ամփոփեաց,
Ձեռըն մենաւոր ոգի լըռակաց,
Տաշեցեր 'ի խուղ և մուրճ ոչ հընչեաց.
Կոթող պորփիւրեայ քըրտամբք սըղոցեալ
Զոր գըրիչ փիղեան կոփեաց քանդակեալ.
Ի հանդըրձն կըղզւոյն առ 'ի Հայս գըլեալ,
Ի սիրտ և 'ի միտս անկործան տընկեալ.
Դադարեաց, Մուսա, խնդութեան քարտէս,
Եւ ոչ ներբողեան առ քըննիչ տողես.
Կըշռեն ըղքո տաղ աչք իւր սըրատես.
Այլ ոչ բարեսցեն ընդոքրտիս հանդէս.

Բոպեան Ճեմարանք թէ էին գիտակ ,
Յետուէին ըզքեզ յիւրեանց Ագիւսակ ·
Եւ ոչ լոկ Հռոմեան կրօնին համարձակ ,
Անապատկաւ քարոզ ըմբիշ նըշաւակ ·
Զոսկեձոյլ գըրիչ դարուն Մեսրովբեան ,
Պահեալ յիմաստից զանխուլ Թանգարան ,
Որ ոգի Հայոց ած քեզ յերեւան ,
Ասա թէ գիտես , երգեցից և զայն ·
Այլ շնորհ ունիմ Թեւտոնեան ազգին ,
Զի քո գըրչանիշք այլ ոչ չըքացին [1] ·
Որպէս ընդնախնեաց սըգանք կաթողին ,
Խաղեալ յանդըլից 'ի վիճ առաջին ·
Ճանչեսցեն մամուլք երկնել անդադար ,
Ընդ միոյ գըրչիդ պատճէնըս հազար ·
Շատ են թէ կայցեն ընթերցողք յարմար ,
Եւ միտք կըշռադատ տալ զարժէս արդար ·
Մի ցամաքեսցի գըրչիդ քո երակ ,
Գիտուն մելանաւ ծորել ըզվըտակ ·
Արբցեն դարք ներկայք արբցեն ապագայք ,
Գոհասցին ըզքէն զամպոց բովանդակ ·
Անագան դարուց ծընունդըդ վերջին ,
Հետեւօղ նախնեաց սըրբակոփ շաւղին ·
Քամանեսցեն դարք , թէ տաղք ոչ խաբին ,
Կանգնեսցեն ըզքեզ գաղափար նախկին ·
Զայս քեզ քանդակեմ առաջին անդրի ,
Որ 'ի պարոսեան կիճ անվաանելի ·
Այլ դիւրափըշրիկ 'ի քար Աքոեալի ,
Որ գործ Կանովեան զարդ Վատիկանի ·
Թէ քեզ անդրիանդ դըրոշեմ ես այսօր ,
Մի օտարոտի թըւեսցի դա նոր ·
Իմ «Քանդակողիդ՝ քանդակօղըս նոր ,
«Քանդակ նըւիրեմ թէպէտ անտաղը ·

1 Զի գերմանացի էր Կութթէմպերկ . որ տպագրութեան արուեստ հնարաւորեաց ·

Ո՛վ թէ զօրէին սիրտք հաճներգողաց,
Յէութիւն ածել զէակըս մտաց,
Այսօր իմ ժըպկիրհ Մուսա խնդագգեաց,
Անլուրըս ցանկայր անտար լըսելեաց:
Յանկայր նա արդեօք քեզ անմահութեան,
Ձեւ էր մահացուաց օրէն բընութեան.
Նա թէ ոչ զանտոխ քան զայս եղկական
Ազնիւ հաւատայր համբակ Պաւղոսեան:
Բայց թէ ոչ զօրէ յիղձ 'ի յոյս անձին,
Գեթ անմահացիր յերգ իւր տաճարին.
Նոյն 'ի սեբաստեան դիւան պանծալին,
Անուն և զըրիչ զոյգ անմահացին:
Փըթթեաց անթարշամ և միշտ երջանիկ,
Որչափ ինչ ներէ կենցաղոյս դըժնիկ.
Մինչև քաղեսցիս հասուն գեղեցիկ,
Ի պըսակ փրկչին հատուէտ ծաղիկ:

1812

---

ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱԳԱՏԻՒ

# ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐՆ

ՍԻՒՆԵԱՑ ՆԱԽԱԴԻՏԱԳԵՏ

Ի տաճար վեհին, ուր սեռք ամենայն
Խոնկարկեն այսօր զաւիճ սաբայեան,
Ի կաղանդ տարւոյս մաղթել միաբան,
Զերջանիկ յանգուած իշխանաց նոցայն.
Նորագեա և դու Մուսայդ օրհներգակ,
Անկանել խոնարհ յատուածեան յատակ,
Կարկառել 'ի բեմ էին անքանակ,
Զայս բարեմաղթիկ օրհնութեան գըրուակ:

Ո՛վ նըշանագործ Ադոնայի տէր ,
Որ զմեր Ահարոն 'ի գահ նըստուցեր ,
Ըզցուպ ծերունի մեզ փըթթեցուցեր ,
Ի ծաղիկ և 'ի խայր մեզ գունակեցեր ։
Պահեա անթառամ 'ի ցօղ՝ երկնային ,
Ի քոյդ փոխադրեալ վայր դաբիրային ,
Զրգտեսցի արմատ 'ի խոր 'ի գետին ,
Ոստքն ամբարձուղէշք մինչև 'ի յերկինս ։
Իւրոյ ուղղութեանց ծաղկօք ըզմայլել ,
Պըտղոց արգասեօք ըզմեզ բուծանել .
Եւ լայնասաղարթ հովանեօք գըրգել ,
Ըզհօրան խաշանց 'ի տօթոյ ծածկել ։
Ըզսուր բոցեղէն , զոր երբեմն արկեր
Ահարկու պահնակ ծառոյն կենաբեր ,
Արկ այժմ ըզտովաւ զի մի առընթեր
Մերձեսցի նըմին աջ վընասաբեր ։
Տեսցէ նա զիւրն յարմատոց պըտկեալ ,
Իւրաքոյս անտառ ոստովք թաւացեալ ,
Ծաղկօք բարգաւաճ պըտղովք խըտացեալ ,
Հանգոյն եդեմեան ծառոց ջոլացեալ ։
Ընդ որոյ ախորժ բազմեալ հովանեաւ ,
Տարտամ հազներգուն խօսուն կիթառաւ ,
Յանձն իւր չըքնաղ շարժեսցէ նովաւ ,
Ըզքո երկնահաս օրհնութիւն անբաւ ։

1813

## ԱՌ ՅԱՐԳՈՅԱՊԱՏԻՒ ՏԷՐ

## Հ. ԳԱԲՐԻԷԼ ԱԹՈՌԱԿԱԼ ՎԱՐԴԱՊԵՏ

Ոչ այնպէս խայտայ ըՍպանոս արի նաւորդ բազմամեայ ,
Ոսկեբարձ լաստիւ լուծեալ 'ի յափանց հեռաձիգ Պերուայ .
Երբ յետ կոհակաց երբ յետ մրրրկաց խնդագին կարդայ ,
Ահա ինձ Ֆեռօլ ահա ինձ Կադէս դադար մօտակայ ,
Որպէս իմ ծփեալ ամիս երկվեցեակ 'ի ծով կենցաղոյս ,
Տեսի անագան ըղձաւահանգիստ նորամուտ տարւոյս .
Բարձին զաղաղակ լեզու եւ գրիչ նաւորդք իմ հոգւոյս ,
Ահա ինձ նոր ամ, ահա նոր բերկրանք հոգւոյս եւ մարմնոյս .
Սակայն ոչ նոր ամ եւ ոչ նոր բերկրանք ինձ համեղանան ,
Թէ ձիր առանձին ինձ այնք պարգեւին չեն քեզ սեփական ,
Ո՜վ բարեացապարտ կենաց արժանիդ եւ կենաց երկայն ,
Զոր սէր եւ պատիւ վարկ եւ մեծարանք ինձ փափաքել տան .
Կաղնիք եւ ագռաւք եւ միշտ թափառող աղինք եղջերուաց ,
Զըգխոեն ըզ յարդ յամերամ աւուրց եւ են բազմակեաց .
Մ՝խոյն մրտաւորք արգոյք պիտանիք այլոց եւ անձանց ,
Քան զանարժանիս յետնեսցին բազմօք 'ի հաշիւ ամաց .
Դեղձի մրրգաբեր չըքնաղ վարդենի ունին զիս պաշտպան ,
Ի համ եւ 'ի հոտ փափաքել նոցա ըղկեանս ընդերկայն .
Իսկ դու միայնակ գոցես առ ինեւ վըրէպ եւ ունայն ,
Որ հոտով անոյշ եւ 'ի միրգ գըչեդ գըրգես զամենայն .
Թէ լուէ եթեր զ'ի խորոց սրտէ նըւագեալ Ջընար ,
Այն որ 'ի Յեսսեան հովուական սըրնգ կանխաւ հեշտանայր ,
Յըսկըսեալ տարւոյս 'ի մէջ եւ յաւարտ երգեմ անդադար ,
“ Օրհնեսցի պըսակ տարւոյդ քաղցրութեան ընդ ամըս երկար ” .
Շընչեսցեն զեփիւռք օդ խաղաղաւէտ յառագաստ քոյին ,
Նաւ զեղածիծաղ անքոյթ ղեկավար 'ի քո եղեւին ,

Բայց թէ այնուցուն ալիք փոթորիկ յանսաստ կըրկնեն ,
Վիցեն նոյնակիր գեննեսարեթեան աջող ծովակին ,
Մինչեւ յամենածիր 'ի ժամանհոլով յՈվկիանոսէս ,
Ոսկեբարձ նաւաւ 'ի յաւիտենից 'ի ցամաք ելցես ,
Ուստի դիտեսցես անքոյթ հաճութեամբ զերկայն ասպարէս ,
Զոր հատեր անցեր սիրով անմահէն 'ի յարկած պէսպէս ,
Ուստի ժպտեսցես անհարկեալ 'ի վայր յայս հիւլէ փամաք ,
Այս այն կեանք իցեն յոր գլխ յամեցոյց տըգէտ հազներգակ ·
Բայց զընկեալ ըզգամձ անթարեալ յերկայն կենաց պարունակ ,
Օրհնեսցես ըզտուր առատ կենսատուին 'ի դար անքանակ ։

1812

---

## ԱՌ ՎԵՆԵՏԻԿ ԱՍՊՆՋԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ԵՒ

## Ի ԴԻՏԱՊԵՏՆ ՍՈՄԱԼԵԱՆ

### ԲՌՆԱՑԱՆԳ

Դըշխոյդ Ադրիոյ ցանկալիդ Վընէժ
Անթարձ զհինաւուրց կատար գեղաղէշ ,
Ընդ յաւէտածուփ ալիս ամենածիր
Յոյց ախոյենից զքո բաղդ ցընծալիր ,
Բան երբ զԱտտիլայ դու զայրացելոյն
Պաղթեալ ընկճեցեր ըզհեծելութիւն ։
Այգեա ոչ ըզլուր թշնամեացդ 'ի կոխ ,
Զոր բաղդ քեզ յարոյց զահոյից ոսոխ ·
Այգեա դու այսօր 'ի նըւագ երգոց
Բաստ զոր զանձեցեր 'ի քոյինըդ ծոց ։
Ի քոյդ տարեգիր գըրեա նոր նըսեհ ,
Զոր քեզ ընձեռէ հայկեան ազգ նըշգեհ ·

Կըղզեակ զոր ետուր զարմիս մեր կարօտ ,
Մըշակել քըրտամբք դարաստ մարգարօտ ,
Բուսոյց քեզ այսօր դալինի անթառամ,
Պըսակ քեզ կապել 'ի գունդ լուսերամ՝
Ըզվեհ Ոսկանեան ընտրեալ դիտապետ ,
Զոր մեծըն Լեւոն Սիսնեաց գահուն ետ ·
Զորս Մարկոսեան այցող գերաբուն
Օծ Հոգւոյն իւղով զճակատ սիրայնոյն ,
Զարդարեալ 'ի զարդ ըստ Ահարոնին
Ի թագ 'ի կոնքեռ 'ի շուք գըրապանին ,
Ընդանձս յօրինեալ ոսկեփունջ վառիւ ,
Ի ցուպ հեղութեան զերդ 'ի խաչն հովիւ ·
Ունէր նա վաղուց 'ի սիրտ ըզՅիսուս ,
Զիւղ նորա եւեթ թափեաց 'ի մօրուս ·
Խայտայ սերաստեան արդ հօյլ բարեբաստ ,
Յայս ծաղկազարդեալ խընդագին երաստ ·
Մերկացեալ յանձնէ զթաղծագին խորհուրդ ,
Լըրջանան երեւք միտք լըրջանան լուրթ ·
Կայտռեալ քերթողաց աշխոյժք ողջախոհ ,
Մի զմիով առնեն ելեել գըրոհ ·
Զայն տան եւ հիգոյս · Նուագեցաք մեք ,
Նու զի դուք անխօս 'ի խընջոյս լըռէք ·
Բայց զինչ այլ մընաց , նոր մեր Հայրապետ ,
Զոր ոչ քո հօրան քեզ մաղթեաց յաւէտ ·
Կացուրդ հանդիսիս պիտէր մեզ 'ի Հայս
Ո՛վ դասք քերթողաց , ուր յօտար 'ի կայս ,
Նոյլ վըտարանդիք յԱզգին աշխարհէն ,
Ի Սառակիննեան շողին բոցեղէն ·
Բայց ոչ թէ չիջաւ Նըրամեան ոգին ,
Նոյն սողոխք Մասեաց 'ի սիրտ ձեր ոգին ·
Ոն , մատեայց եւ ես թէ եւ 'ի վերջէ ,
Բայց ոչ իմ տաւիղ յակլի ճաճանչէ ·
Թէ եւ 'ի մորչ տիս աւի ինձ դայեակ
Զամն 'ի Պլիերեանց կուսից իններեակ ,

Բայց երակք պաղեալք ու բորբոքին հուրք ,
Ու իմաստք չքնաղք ու խորհուրդք յիս տուրք ·
Հոլովիդ սիրայնոյ արձան վաղանուկ
Նա ու ցանկանամ բաղձի տուրք խարխուլ ·
Իբր աշխարհաւեր արքայից հրոսող
Կանգնեցան երբեմն արդ կան աննըշող ·
Կարգեսցեն զուտղք ջոլիր անհապահ
Ի տայր նիզակաց զիւրեանց պահել դահ .
Բայց դու անկասկած ննջեա 'ի դահոյս ,
Ըզքեւ պահանորդք կան սէր և խրախոյս ·
Թէ հեզ հաղներգուի երջանկացի բաղդ ,
Տեսից զաւեյթդ յախտից միշտ անյաղթ .
Հեռի 'ի զաւթէդ զայլք արիւնարբու ,
Կազերց 'ւ առիւծուց ձիրանք ահարկու ·
Տեսից և առ քեւ զհօտ Բարթուղիմեայ ,
Դիմեալք մըտադիր 'ի փարախ նորա ·
Ի մարմնոյ քոյին տեղացէ միշտ ամբ ,
Հովիւք ընդ լերանց փըլթթեալք գագաթամբ .
Որ զետեղերօք տաւաղեսցին հօտք ,
Նա 'ի ձմերանի անվրտիտ արօտք ·
Իսկ դու ըզմիգովք 'ի յանհօգս անկեալ
Ու զքեզ սարսեսցեն զէնք աշխարհական .
Յորժամ ըզհովուաց զխոսեսցես դու կարգ ,
Որպէս գեղեցիկ զերթ նոցին քընարք ,
Նոր գառինք խայտան երբ զըրթցեն արջառք ,
Ըբասցես յանձին . կայցե՜ն համդոյն փառք ·
Բայց երբ անսաստեալ գառինք փոխոխին ,
Սուլեաց և ընթա համդէտ Յիսուսին .
Գոչեա աղերսիւ “Դարձիր դու առ իս ,
Հեռի 'ի հօտէս ձհ 'ի վիհ ձեղխ .
Յերկնից կարգեցայ հօտապետ և հայր ,
Ի ձեր զարդանալ կեցից ես յամայր ·
Թէ զիմ անձկանայք հասակ աղէզարդ ,
Ու ըղտիխ հաշուեմ, այլ զամբս զըւարթ .

Թէ 'ի ձեր ականջս այս հնչեսցէ ազդ,
Կեցի, ասացից, բաւական ես աստ,
Մշտերգս ընթացից ընկիզըն է այս պերճ,
Դուք բերկրեցուսջիք և ըղձորայն վերջ.
Նոր ըղձեղ տեսից պար ըղսեղանով,
Ոսկերք պարարին քան թէ յիւղ յոլով.
Փառք ձեր հընչեսցեն 'ի մուսս 'ի յելից,
Որպէս նորածագ ակն արևելից,
Թէ 'ի սուրբ կարգաց երբէք թողացայ,
Ունիս զմնասաակն անձին քում վարժեար.
Յիշեմ զգահեկան կողկողեալ այրւոյն,
Յիշեմ ըզզըրացեալ պատգամ խօսելոյն,
Նախիմ պահապան 'ի մուսս ես 'ի դրանց,
Ու ըստամբակաց, 'ւ ոչ գայլոց տալ անց.
Թէ յայս խնդութեան ժըպիրհ պահակաւ
Հասցէ չոյս կամ յամբ խնձ կառավարեալ,
Ո՛չ խս ոչ դըրդուեսցէ մանկաւ խիր 'ի հանձ,
Կեցից յիմ որդեակս և յորդիս նոցունց ,, .

1826



## Ի ՀԱՆԴԷՍ ԱԲԲԱՅՈՒԹԵԱՆ

## ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԵԱՌՆ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ

## ՍՈՒՔԻԱՍԱՅ ՍՈՄԱԼԵԱՆ

Որ խոյտայր երբեմն ընդ քաջի հովուին
Խաշն բարեբաստ յարօտ ծաղկածին,
Կորուսեալ ըզնոյն հարցանէր անձկաւ
Զամենայն հովիւս ըզսար և զանձաւ։
Զերկին և զերկիր լնոյր բառաչմամբ,
Պաքեալ անճարակ մայէր առ ափամբ.
Թափառ 'ի մայրիս լայր, բայց ոչ գտանէր,
Զայնեալ, “Ո՞ւր իմ քաջ հովիւ հօտասէր„։
Զօղբագին բառաչ ունայն արձագանգ
Կըրկնէր երեքկնէր, չըկայր ըսփոփանք.
Մինչ ձայն խանդակաթ լսեմ 'ի յերկնից,
“Խնդրես խաշանց ես ինքն հովուեցից։
Հովիւ դու խնդրես, հովուասէր իմ հօտ,
Ընտրեալ ըզքեզ դալար 'ի յարօտ,
Նշեց քեզ հովիւ ես ինքն 'ի բարձանց
Յերկրի իմ փոխան ըզՍոմալեան տաց։
Դա ըզքեզ հովուէ 'ի ջրարբի մարմանդ,
Զոր ցուցից մատամբ ճարակ արգաւանդ.
Թորգոմեան տոհմիդ օրհնեսցի մըթեր
Ի կաթն 'ի գըզաթ 'ի կոգի և սեր։
Ի դորա տուեալ հովուական սըրինգ
Հեշտացին և խոյք, որոջք և գառինք.
Մի այլ ոչխարակք ըստ ցանկ վազեսցեն,
Յորոտ մակաղեալք և կամ կայթեսցեն։

Զինուորացն բըլուրք գունդագունդ գառամբք,
Սորք սարք և հովիտք թընդեցեն գոչմամբք.
Բարձցէ դա 'ի յուս զանուանդ ոչխար,
Տայցէ աղ բուժիչ յըղեաց մըխիթար.
Բըզհեստ և զմըղար ածցէ 'ի գաւիթ
Ի ծոց իւր 'ի գիրկ, ուսք իւր անքըլթիթ.
Ճըրթիցէ յառաջ հօտին 'ի գըոհել,
Չերկիցէ իմ պէս զանձն իւր նուիրել.
Բարձրացուցից ես զիւր ցուպ հովուական,
Ըստուեր իւր անգամ գայլոց խարազան.
Խաշինք իմ սիրուն, հօրդան տուք համպա,
Ախրեա՛ն զիս, Ճօլլիւ, զհօտ իմ արածեա „ — ,
Արեւ մըտաղոյս, որ ինձ քերթողիս
Նուագեցեր զայս տխուր երգել ուետիս,
Կարգեա զիմ աղերս զիմ ձայն հրճուական
Գըրբիլ 'ի տուփոր մարգարէական.
Ըսուրք իւր բեղունք ձըգեսցին անդոր
Ջայլս ծերութեան ծաղկեալ լուսաթոյր,
Ընդր իսկ քան զարբուն յեսսեան քո հովուին,
Օ՜ր քեզ զատուցեր Այր ըստ քո սրտին.

1825



### Ի ՀԱՆԴԷՍ ԵՐՋԱՆԻԿ ՓՈԽՄԱՆ

### ՆԱԽԱՀՕՐ ՈԽՏԻՍ

## ԼՈՒՍԱՆՈՐՈԳՆ ՄԽԻԹԱՐԱՑ

« *Յիշատակ արդարոց օրհնութեամբ* »

*Ներեա դու Հայր, թէ ամօթխած մուսայք Մասեաց*
*Զոր զարթուցեր երբեմն 'ի քնոյ յամն Նշրասխայ,*
*Այլ ինչ երգեն քան զարժանիդ 'ի դըրուատել,*
*Զի քան ըզգոլ գիտեն ըզքեզ վեհ առաւել.*
*Նա թէ այսօր յեռանեալն 'ի գաս բանահիւսաց*
*Իշխէ 'ի տօն յիշատակիդ տարեկանաց,*
*Ոչ 'ի ներբող ինչ յանդըգնի յոր չէ հերիք,*
*Այլ համբուրէ գըլխիդ անձկով սըփռեալ ծաղիկ.*
*Յանմահ ճակատդ ունիս ըզթագ պանծանօք լի,*
*Կաճառակից Բենեդիկտեայ և Անտոնի.*
*Ըզտարեալ թող հիւսեսցեն քեզ ըզպըսակ*
*Թող մարգարտեայս և տողեսցեն ժըրաց դասակ.*
*Մեծանձըն դու ընդ քո վաստակս յապուշ դառնան*
*Ոչ սիրտք յըստակք, այլ և խեռող նախանձ դաժան.*
*Թէ հօրանցն որդիք սիրոյդ քեզ նըմանին*
*Հիմունքդ արկեալ յալեաց հողմոց ոչ սասանին,*
*Վըշտագըգեցիկ որդւոց Հայկայ դու Մըխիթար,*
*Ճըշմարտութեան սուրբ հաւատոց անշէջ ջամբար.*
*Իմաստութեան զոր արծարծեր չիջեալ ճըրագ,*
*Պայծառացի յազգ արամեան ծագէ 'ի ծագ.*
*Նա որ ըզգահդ ունի այսօր վեհ մեր Սոմալ,*
*Ըզքոյդ բերցէ զանյաղթ ոգի ծովածաւալ,*
*Ընդ անթարշամ խոր ծերութեան և հասակ ժիր*
*Նահապետիդ լինել ճըշգրիտ նըկարագիր.*

Մաղթեա աւուրս և բազմօրդին ալեզարդից ,
Որ ըղձախնեացս ունին պատկեր գործոց բանից .
Եւ ծաղկելոյն 'ի շնորհ տիոց և լաւութեանց
Հարիւրաւոր ատոքանալ 'ի հունձ արդեանց .
Տուն զոր ոչ զանձ կառոյց յայս ծով այլ սուրբ աւանդ ,
Ուր արծաթով այլ հըլութեամբ կացցէ անքանդ .
Ուր տեսանեն " Ահեղ է վայրս , երանեսցեն ,
Տուն Աստուծոյ և դուռն երկնից „ առձայնեսցեն .
Խաղաղութեան անուն անծան ընդ տիեզերս
Աստ հընչեսցէ աշխարհային նախանձաբեր .
Եւ տարագիրն յԱրարատոյ համամիտ սէր ,
Աստ ամրասցի իբրև յամրոց տիրանուէր .
Աստ արդարոյդ սուրբ յիշատակ միշտ օրհնութեամբ
Տարեորու նուագեսցի անեղծ դաշամբ .
Եւ աջակցաց , զորոց անուես պաշտեմ զանձին ,
Ընդ օրհնելոյդ երկք յիշեսցին յերգոցս հընչիւն .

1827

---

ԱՌ

# ՄԵՍՐՈՊ Վ. ՋՐԱՂԵԱՆ*

Դու տարրախոյզդ 'ի գանգատի ,
Թէ քեզ միայն քերթող համրի .
Չէ բոյդ բողք յանիրաւի ,
Բայց չէ դատեալ լուր իմ փաստի .
Նիւթք որ առ մօք յերես երկրի ,
Կաղ գոյանան միում յամի .
Ծաղիկք և բոյսք թառամելի ,
Նիւթք քերթողաց 'ի պատրաստի ,

* Ընկերակից քերթողին , հմուտ բնալուծական մակացութեան , որ 'ի Պաշպալով քաղաքէ 'ի Վենետիկ գաղթեալ .

Հիւսել նարօտ 'ի հիւս տաղի,
Կապել 'ի գլուխ անձանց յարգի.
Բայց հաւատա վաղ Թարշամի,
Նիւթ վաղատեղծ բոյս դալարի.
Իսկ ես յայլ մեծ որոճայի,
Խորասուզիլ 'ի ծոց երկրի,
Բըրբել քըրտամբք զանեղծ ակն,
Զառաջնաստեղծ ըզնիւթ յարգի.
Զըստել 'ի բով ձուլել անտի,
Ուշիմ զըլխոյդ Թագ գոհարի.
Բայց գիտեցես երկիւղ քանի,
Յայս խոր վատակ ըզգուշալի.
Կամ ո՞ր արհեստ յայս բաւեսցի,
Ձեռըն փափուկ և նուրբ գործի.
Երբ տեսանեմ 'ի վըտանգի,
Ճըշգրիտ փորձոյդ քո գինն ակն.
Ձեմ ապահով իմ քուրայի,
Ու խարտոցաց իմ արհեստի.
Զի քոյ ձեռաց ոչ պակասի,
Ու բովք քաջին Փուարուայի
Եւ ոչ լամպիք Լաւուազիէի.
Զըրնաղ կահիւք ազգի ազգի.
Ու ճիշդ քանոն Եւկղիդեսի,
Եւ ոչ կարկին Արքիմիդի.
Ու տուն փորձոյ քաջ Թընաէանի,
Ու նոր սիւնակըն Վոլթայի.
Եւ ոչ Թըլթուքըն քիմիայի,
Քակել ըզնոյն ոսկէս փոշի.
Սոքա առնեն զիս յերկեղի,
Մատունք առ գրիչ կան յերերի.
Ա՛հ, չեն պիտոյք նոր գոհարի,
Շատ են համբարք գանձեալ յոգի,
Գանձք գիտութեանց զըւարճալի,
Լուսին, մտաւ ինքնակալի

Վկայագիրք Ճեմարանի
Նաեւ արհեստից բազմազգին¹ ,
Որքա գըրուածք անջնջելի ,
(Թէ գոյ յատուկ նիւթ անջրելի .)
Օ՛ ինչ իմ զօրէ յարգ փոքրոգի ,
Ծանրել ըղձիւ քոյդ գովեստի .
Կամ զինչ զօրէ տալ ցընդելի ,
Նոր քեզ ծագել շող համբաւի .
Օ իմ տաղ անհարթ զանսուրբ ոսկի ,
Օ իմ հէգ արհեստ տաղ առաջի .
Բամբէ քանի երջանկութեան ,
Նշխեթք 'ի ծոցից ամբարեալ կան .
Ո՛ի զարտաքնոյք յօտար սահման ,
Նշխս նըմին խընդրակ ունայն .
Հաւատա ինձ սերտ բարեկամ ,
Բամասիրիս ըստ քեզ նըման .
Ո՛եք արարիչք երջանկութեան ,
Ո՛եք մեզ գըտիչք թըշուառութեան .
Թէ գիտացուք մեզ աստիճան ,
Կանգնել զխնոտս յերկնից կայան .
Հըպել յաղբիւր իմաստութեան ,
Բանալ տարփանք զպարքեալ բերան ,
Նայլ մեզ , ամա՛ղ , քըրտամբք 'ի ջան ,
Ծփիլիք 'ի թուղթ սարդք 'ի յստայն .
Ճանձք եւ մըժեխք խայծք ընդունայն ,
Նան օրապահ որք մեր 'ի յայն .
Կամք սոխտանջք 'ի գիտութեան ,
Կամ թէ զըստոյգ գոլ խոստովան ,
Թէ եւ իմաստք չէն բաւական ,
Օանյագ մեր քաղց լինել միայն .
Նայս թէ ոչ զի ընդունայն ,
Ընհետ կըրթիմք միշտ նորութեան .

¹ Քանզի Մեսրոպայ վարդապետի զաշխարհիկ օրէնս պատուոյ եւ վկայագիրս ընկալեալ էր .

Զառաջնոց փորձ հանել ունայն,
Եւ ոչ յետինք մերոց հաւան.
Երգ դու քան զիս լեր խոհական,
Հատոր հոգւոյս քաջ բանական.
Մ'ի առ երկրաւ քերեր միայն,
Յերկրէ յերկին անց իմ փոխան.
Ունիս քեզ թեւ սուր եւ երկայն,
Բարձր 'ի թռիչ եթերական.
Ընդ որմնեա սլրոնից տարտամ,
Իզճշմարիտ մէտ հանգրստեան.
Զայս քեզ երգէ տաղ բերկրական,
Քոյդ հազներգակ կըցորդ ուսման,
Յետ բազմամեայ օտարութեան,
Տարանջատեալ 'ի հեռաստան.
Երբ երկոքին պանդըխտացան,
Բաժակակիցք որ քառամեան,
Զջալար ափանք թըռնաւական,
Ի Պաշպալով Թորգոմական.
Այլ եհաս ժամ նոր բաժանման,
Ձեր քերթողիս գալ միաբան.
Զախորդ յաստեղս անդարձական,
Այսպէս 'ի գեր դըրոշմեցան.
Երթ դու բարեաւ երթ խընդագին,
Քեզ ուղեկից այս տաղ ընդ իմ.
Քեզ սուրհանդակ յերկայն ուղին,
Փող բարեմաղթ տարերց ընաւին.
Խոժոռ լերինք քեզ հարթեսցին,
Եւ գահավէժք ծաղկօք լըցցին.
Մայրեք հառերք թըռչնովք զեղցին,
Քեզ ընդառաջ տըխաոք նոցին.
Աջնանագայր գետք խոխորին,
Քեզ գլուրեսցին մարգագետին.
Խոնաւ ամպրոպք նոյեմբերին,
Յաղթել մայիս փոխարկեսցին.

Եւ ձիւնաբեր դեկտեմբերին ,
Իջցեն ըզքեւ ցօղ գարնային .
Եւ լըպըրծուն պաղք սաստկային ,
Ի՛եղ 'ի գաղզէն անուշեսցին :
Պաժան հիւսիսք Պըրանեօսին[1] ,
Ի սիւք զեփիւռ նորատեղծցին .
Եւ տըմասիկ մօրք Պանային
Ի մանուշակ գարնանային :
Ընիւք կառաց գէր փայլթանին ,
Ի ձոր 'ի բլուր թաւալեսցին .
Ա՝ի պեղասեան թեւք օդային ,
Ի՛ո նըժուգաց ժամանն լիցին :
Բայց երբ հասցես յիմ անձկային ,
Յիտալիոյ յարին առաջին ,
(Բամբէ , նոր ցաւ զարթնու յանձն իմ ,
Իտալիա՛ գեղեցիկդ իմ .)
Վայր մի քարշես ըզփոկ սանձին ,
Էջ 'ի կառաց հայցեմ ուժգին :
Տուր զիմ ողջոյն գորովային ,
Զիմ սէր առ նա պատմես նըմին .
Վեցեակ լուսինք են առորատին ,
Զի նըշդեհիմ 'ի յԸնտեալին .
Յարբըն նըստիմ Թըռնուային ,
Զերթ նոր Նասոն 'ի Պոնտոսին .
Ա՝երժեալ սաստիւ իմ Կեսարին ,
Տըխուր հայկեան լար 'ի ձեռին .
Խառնեալ զալիս իմ արտասուին ,
Ի զայրացեալ ալիս նորին :
Ո՛վ թէ զըժբաղդ կոհակք սորին ,
Իմ արտասուօք խառնեալ ուժգին ,
Ընդ 'ի Պանուք անդ զեղուին ,
Եւ յիմ ըրնիկ ծոցն 'ի Հանդըրին .

1 Գրանէօս և Պոնտոս . յորոց անցանել անէր ուղևորն :

Վազել գուժկան յիմ հայրենիս ,
Զդուռն բախել մենարանիս ,
Բայց աղաչեմ կողկողագին ,
Գէթ զայս շնորհել ձիր առանձին .
Զի երբ բացուստ նըշմարեսցին ,
Տարփող ականդ բարձր 'ի լերին ,
Ճերմակ փըրփուրք Աջխային ,
Մի ըզմիով դիզեալ յերկին ,
Գոչեա հեռուստ գոչեա ուժգին ,
Ըզ մամռապատ յունկըն նորին .
" Բեր վենետկեան կարապ լըծին ,
Տըխրաբարբառ երգէ մեկին .
Ոստ 'ի յոստոյ Թըռչնուայնին ,
Ի մէջ բըլրոց ցուրտ Աջռեալին .
Իբրև մեռեալ յափըն շիրմին ,
Ալեօրեալ մէջ հասակին .
Երգ գեղգեղէ բազմաղխմին ,
Բառ ոչ բարուց եղերագին ,
Մաշի անձկաւ առ ջերմ կըղզին ,
Մըխիթարեան խաղ հայրենիս .
Ջերմիկ գարուն երբ գայ նըրմին ,
Ընդ կըղընկանց փոխիլ 'ի նմին .
Ընդ խաղ բունիկ գոհ տաղաւար ,
Յոր միշտ երգէր ախորժաբար ,
Ընդ սարգենիք միշտադալար ,
Ընդ սոխակաց երգեցիկ պար ,
Փոքր էր այս իմ դաշտավայր ,
Այլ գոհ անձին շատ էր այն վայր .
Հովմ բարեխիչ որ զենն կայր ,
Միշտ երգակից ինձ թեւանայր ,
Ուսանէի միշտ նորաբար ,
Նըւագ երգոց գեղայարմար .
Որ արդ մերրիկ զիս բըռնաբար ,
Ահ 'ի բունոյս վարեաց 'ի տար ,

Ի Պակլոյ մայրեայ գագաթ,
Յիտալական մարգից օտար ։
Իսկ երբ տեսցես զիմ սուրբ ըղձայր,
Ի Պ ալարուն վրսեմ տաճար,
Մ՛ի ինչ պատմեր մի ճոխանար,
Յանկըն նորա մի ծանրանար ։
Բայց զիմ միայն համբոյր խոնարհ,
Տուր սուրբ աջոյն ողղխաբար ։
Նա չէ մի խուղ յատանդ քեզ տար,
Յինէն նըմին ձիր ողբաբար ։
Ոչ չէ նարգեան անուշաբար,
Ոչ խուղ վարդի զըւարթարար ։
Բայց զիմ ճենճեր սիրապատար,
Ընծաստուր մըգեալ յերկար ։
Ում քաղցրացի 'ի սուրբ բուրվառ,
Քան զարաբեան բոտաշխն օտար ։
Քաղցրիկ երկինք հովանացին,
Իմ ծերունի նահապետին ։
Պահել ընդ իւր գերդաստանին,
Յամբս նոյեան 'ի տապանին ։
Ըզեղն երկնից բազմագունին,
Մ՛իշտ ըղձըլխով իւր թեքեսցին ։
Մ՛ի ջրրհեղեղք վասնիւ զարկին,
Մ՛ի այլ զիւր տամբ ողողեսցին ։
Բայց մի անյուշ առ քեւ լիցին,
Օ՛ր պատուիրեմ կըտակ վերջին ։
Պատմեա զիմ սիրտ գորովագին,
Հրեշտակաձուն Գաբրիէլին,
Իմ բարեգութ քաջ ծընողին,
Ըզգօն խրատտուի իւր զաւակին ։
Տուր զիմ համբոյր տուր զարժանին,
Ընջինջ յիշող ողջոյն ազնիւ ։
Ոյր առեւեալ ուրախազին,
Ունկն իմ սպասէ միշտ կաթոգին ։

Առուրց նորա չափ ձիթենին ,
Եւ բազմակեաց արմաւենին .
Իւղով խորատուց ըզգօն ըեղուին ,
Բաջ պարարել զամենեսին .
Եւ արմաւոք յուռթի գըրչին ,
Տածել ըղտոհմ արամածին .
Իւր պատուական գըլուխ անձին ,
Ամփոփեսցի 'ի ծրար Նվին .
Բարէ , զհամբոյրն յիշեմ յետին ,
Յաւաղելի յիմ հրաժեշտին .
Տացե արդեօք համբոյր կըրկին ,
Եւ մոռացայց ես զառաջին .
Այլ զի՞նչ զանգ է յոր ես հայիմ ,
Բզնոր հիւրիւ զօրէն մեղուին .
Սըրընդակիցք , աւա՛ղ անձին ,
Իմ մըտերմնք յորոց մեկնիմ .
Հոգեհամբոյր գիրկս արկ նոցին ,
Տուր ըղհամբոյր և փոխան իմ .
Որոց պարգև անմոռայնին ;
Տուր մէն մի շիթ 'ի յաչացս իմ .
Բայց զի՞նչ լիցի թէ ես խերջնին ,
Ձեզ հնչեցից զիմ ձայն վերջին .
Թէ և հեռի բայց սիրտք մօտին ,
Սերտ սիրելեաց յանջատ մարմին .
Եթէ երկինք յիս հաշտեսցին ,
Դարձ միակցել ընդ ձեզ կըրկին ,
Զուարթացի զօս իմ մարմին ,
Որպէս 'ի ցօղ անմոռայնին .
Ապա թէ ոչ , կըմախք ոսկին
Ի ցուրտ դամբան աստ զանձեսցին ,
Օտարական 'ի յԱբռեալին ,
Յօտար շիրիմ յոչ հայրենին .
Այլ կենդանի թօշնեալ սիրտ իմ ,
Այգրէն ձախորեալ ձեզ յօդեսցին .

Միայն գրոշմածք թափուր շիրմին ,
Հայցեմ այսպէս գըրոշմեսցին .
Քնար , գըրիչ , գիրք 'ի ձեռին ,
Աշխարհ և թագ կոխանք ոտին .
Իսկ խորագիրք իւր առ նըմին ,
Այսպէս հակիրճ փորագրեսցին ,
« Մարմնով Մուսեալ սըրտիւ 'ի սմին ,
Հէգ հագներգուն նընջէ լուռին .
Էմմանուէլ անուն նորին ,
Միշտ եղիցի տէր ընդ նըմին .
Ոչինչ յաստեաց առ իւր բաժին ,
Հոգւոյն բաղձայ միայն զերկին » .

1814

---

# Ի ՀԱՆԴԷՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

# ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՒԱԶԱՆԻ

## ԵՐԿՈՒՑ ՆՈՐԸՆՏԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Ձեզ աւադիկ նոր առաքեալ
Երթայք մատաղ ժիր աշակերտք .
Եօթնարփենեաւ հոգեզինեալք ,
Ցուպ հովուական ձեզ զէնք և վերտք .
Մի սասանեսցէ ըզձեզ վիթխար
Գողիաթու յոխորտ իրան .
Ընդ հեզ խոնարհ զարշապարաւ
Ընկցի անդէն դի անկենդան .
Մանաւէն անգութ սըրտոյ
Մի արհաւիր ըզքեւ պատէ
Տես զհայր , ընդ շառաւիղ
Գողովատկաւ զԱստուած պատմէ .

Խէ գերեզմիր, Եզեկիել[1] ,
Եւ 'ի Բաբել տամ երանի.
Ձեռքդ 'ի շղթայս լեզուդ արձակ
Յազգ անօրէն ոտոտացի ։
Մ՛ի մանկութեան անհամարձակ
Նահանջեցէ ըզձեզ լեզու .
Եւ Դանիել և Երեմիա ,
Յուսան հոգւով պատգամատու ։
Նոր անդաստան լայնածաւալ
Ձեզ առաջի կայ արօտել
Փուշք 'ի քանդել ձեռամբացի
Սերմն արգասանդ ըմփուռ ցանել ։
Բզգլաարթութն այժմէն դիտեմ,
Աղբէ 'ի հունձ ըզզերանդին .
Եւ 'ի բլուրն ոսկի բաժակ
Զբիրան երեւայ քամել 'ի նրմին ։
Երթայք զուարթ ձեզ ուղեկից
Նախանձ փառաց աստուածայնոյն .
Բնքեցէ ձեզ զամենայն ,
Մեր Յիսուսի գորովագոյն ։
Երկիր է դա միշտ բեղնաւոր ,
Զոր նախ գործեաց Փրկիչն անձամբ .
Ոչ ըռկ բըրտամբք զայն ոռոգեալ ,
Բայց աստուածեան անդրին արեամբ ։
Երթայք զուարթ ձեզ երանեմ,
Ուր արամեան ազգն խմ թըշուառ .
Վարդղեմլիք զանուն Փրկչին
Բան զոաւրինեան ախանցն ըստառ ։
Բայցես երգէ խարտափկակ
Բռ ձեզ ամբ նոր մըշակաց ,
Զորս 'ի բեմին անձուկ ըղձմանբ
Մատոյց այսօր առ Հայր հարանց ։

1 Բանզի վարդապետացն անուանք են Եսայի և Եզեկիել ։

Այլ օրհնութեանն ճոխին բաշխող,
Այժմն ձայնէ « Հօտ իմ որդւոց
Երբեք զհօտ ցօղապատար
Ընդդ լեռ յաւուրս հրենձոց »:

1828

# Ի ՀԱՆԴԷՍ

# ՍՔԵՄԱՅՈՒԹԵԱՆ

## ՏԱՂ

Պսակնիդ յոր հայիս, ըմբիշ նորամուտ,
Կախեալ 'ի կամար թատրոնիդ 'ի մուտ,
Չէ այն զոր անձկաւ առնուլ զգաղաթանդ,
Որ արդ բոլորի յերկնից պատշգամբ:
Մրցման կոկոնից դեռ ըսկիզբն է դա,
Ուղեալք ճակատին քեզ ոսկիք դրժնեալ,
Մարմին և աշխարհ բելխար ճիգնին,
Նախանձու հաշեալք մրցընչեն ուժգին:
Մընան քեզ փուշք դեռ քիրան ապաժոյժ,
Հեք տօթ և արիւն յոր պխոխ աշխոյժ.
Բայց զինչ մեծագոյն մարտողիդ խրախոյս,
Հրեշտակք 'ի գըլխին մարտողիր քո յոյս:
Օ՛ն, 'ի սուղ ընթաց յաւօրեայդ կրկէս,
Լքիր նահատակ մարտիր քաջապէս.
Ու փոքր յաւիտեան, ոչ փոքր են երկինք,
Պըսակ քո անմահ ոչ դափնիք ոսկիք:
Թէ հանդիսադրիդ վառեսցիս 'ի սէր,
Ու քեզ ցուեսցէ տախացըդ վէր.
Արբեսցին արագ արիւն և քըրտունք,
Թագադիր ձեռօք յերկնից պաղպաջունք:

Հաւատ , յոյս և սէր զայս քեզ հաւատեմ ,
Ո՜ որ քո մարտակցիդ շըրթունք նըւագեն .
Ինձ , զոյգ ընթացուք կոչել մըրցանակ ,
Լըսել յերկնայնոց զյաղթութեան դըրուակ .

1826

# Ի ՀԱՆԴԻՍ

# ՈՒԽՏԱԴՐՈՒԹԵԱՆ

« Մին ասիցէ . Աստուծոյ եմ ես . և միւսն ևս գիր
նանցէ ձեռամբ իւրով . թէ Աստուծոյ եմ ես » :

ԵՍԱՅԻ

Երջանիկ պայման , երջանիկ նաւակ ,
Ուր ընդ Մովսիսեան ոչ փոքր ինչ տախտակ ,
Գըծեալ ինքնագիր մելանաւ արեան ,
Աստուծոյ եմ ես յանկէտ յաւիտեան .
Ո՛վ աստուածագիծ քարտէզ սերափին ,
Յորում ընթեռնում և ըզգիր Եւին ,
Ոչ ինչ անմըրման որ 'ի Սին տըւաւ
Ես եմ Աստուած քո բաժին ինքնաբաւ .
Ետուր ինձ նըւէր զոգի ընդ մարմնոյդ ,
Եւ ըզխանդակաթ ախորժակ սըրտիդ ,
Հարսն իմ կոչեցիս ոչ լոկ պաշտօնեայ
Սիրոյդ փոխանակ սիրտ իմ քեզ ընծայ .
Մուտ յիմ առագաստ , մի յայն սէր օտար
Իշխեսցէ երբէք սողալ գաղտաբար .
Շատացիր սըրտիւս որպէս ես քոյով ,
Թէ յիմ վայելել ցանկաս 'ի գոգով .
Լընուլ ըզքո սիրտ թէ չեմ ես հերիք ,
Կացցէ այն դատարկ ոչ լըցցի խըլէք .
Իբրև զկընիք 'ի սիրտ քո դիր զիս ,
Լեր հաւատարիմ և պըսակեցից .

Թէ գիս ոչ գըտցես երբէք յառագաստ ,
Լաց , այլ մի վըհատ , գամ դիւրապատրաստ .
Տարայց 'ի Սիոն յորում գոլեսցես ,
Վասն որոյ Թողի զայս ինձ պարգեւես .

1826

ՅԱՒՈՒՐ ՈՒԽՏԱԴՐՈՒԹԵԱՆ

# ԵՐԵՑՈՒՆՑ ՆՈՐԸՆԾԱՅԻՑ

## ՏԱՂ

Աշխարհ ամենայն շողեա զքո փառս , ընդ զըգամանցդ և ըզգամանձ ,
Եւ ըստ 'ի գալըս յոր զքեզ խառնեաց սուրբ Թեւերայիդ քաղջապանձ .
Այլ և 'ի մեր յանուրբ աւուրս , որ քեզ ըստպաս հարկանեն .
Տես հաւատով զօրացեալ այս , շողք քո պատիւք զօշատեն .
Եւ ըզխոստեան յիշեմ ըմբիշ ըզհաստակաւ կատարուն ,
Նա ոչ զԱրէն պալատական բեռամբք անցըն նըկուն .
Մուտ 'ի տաճար , երխ գըտցես գեռահասակ պատանիս ,
Քեզ տըրնհար իբր ըզնմանեանց գընտիկ զանիւ խաղալիս .
Զնազովրացւոյն խըլեալք 'ի յոյս ըզփայտ խաչին մահացու ,
Ի Գողգոթայն վաղեն 'ի գահ , 'ի դրախտն անտի երկնաչու .
Զոր ջամբեսցես բաժակ լեղւոյդ զայսն և կատակ զոր լուսոս ,
Եւ ըզնոցայն կանխեցուսցէ զանձնանըւէր զօրահաս .
Արդ երթ գոլեա գ յոյս հանդերձեալ մըտացածին առասպել ,
Լոյծ 'ի խաչէդ ծաղկափըթթիթ զաւուրց նըշխար վայելել .
Այլ զոր գոլես . խաչիլ այսպէս 'ի խաչ այսպէս մահանալ ,
Աստուածօրէն է մահանալ ընդ Աստուծոյ առ 'ի կեալ .

1827

Ի ՆՈՅՆ ՀԱՆԴԷՍ

## ՈՒԽՏԻ ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ

### ԵՐԳ

Զի՞ հեկեկաս, ո՛ ուխտաւոր քաջ Յեփթայէ,
Ի կուսական սիրտ միածնիդ մխել զաշտէ.
Զօրհորդացն ըղձոծ լռեա 'ի Գաղայադ,
Ընդ կուսութիւն ողբաւէր քոյին խանդաղակաթ.
Ոչ 'ի յարիւն ու 'ի ճենճեր մարդկան ազգի,
Երինատեաց ակն աստուածեան ոչ պարարի.
Այլ ուխտ խնդրէ, այլ ողջակէզ 'ի սուրբ սեղան,
Համապաղօր բոլորաձիր առանց արեան:
Հայեաց անդուստ 'ի նոր խորանս ու Սելովայ,
Ուր յանդիման ուխտանուէր կորեանք յընծայ,
Մատաղ մանկտի յառագաստից վազեալք 'ի բաց,
Սիրով ձօնեն զոգի, զմարմին, սիրտ ընդ կամաց:
Աստ ոչ կըրկնեն ձորք և բըլուրք կոծ տարեոր,
Այլ քաղցրաձայն ծերք և կուսանք խնդութիւն նոր.
Մանկունք նորոյ առագաստիս զուարթնոց գումար,
Ըզխրատուին եղանակեն երգ և ջինար:
“ Մոռացարուք ըղձապարանակ տուն հայրենին,
Նկայք մտէք 'ի յառագաստ սուրբ փեսային.
Զի խանդակաթ է ձեր սիրոյ արքայն անմահ,
Նա հարսնութեանդ անքակ է զօդ յերկնիցն 'ի գահ „ .

1827

## Ի ՆՈՅՆ ՀԱՆԴԷՍ

### ԵՐԳ

Կան յերկչաւիղ պողոտայ
Քրիստոսազօր Պատանիք.
Նստի մնացաք ափափայ,
Ընտի մարմանդք վարդենիք:
Յաջմէ սոխակք գեղգեղեն,
Ձախմէ կոչէն առուծունք.
Յուղին զըւարթ ըմբըք դիմեն,
Իսկ յառաջար նըւագունք:
Քան զամէն փորձ աշխարհու
Գեղափրթիթ մանկութիւն,
Նա տենչ կենաց սիրարկու,
Յոյս և փառաց պերճ շողիւն:
Նախ առ շաւղօք զարմանալ
Ոստայնութեան պատկեր սին,
Ի գեղ ու 'ի զարդ շըպարեալ,
Ձայնէ առ իւր հեշտ ուղին:
« Եկայք անմեղ պատանեակք
Յաջակողմեան յայս մարմանդ.
Ուր են զըրգանք անապակք,
Թողէք զանկոխ գահաւանդ:
Նշուըք տիոց մանկական
Խամրին որպէս մըրչ ծաղիկ.
Ի համանել ձըմեռան
Գնայ անգութ փոթորիկ:
Յափըն չիրմին երբ մօտ էք
Օ՛ւր արձակէք ապաշաւ.
Այն ձեր բաժին յոր վայլէք,
Ու՛ք 'ի գըբոյ ոչ դարձաւ »:

Այլ նահատակքն անվեհեր,
Այս 'ի յերկինս համբարձեալ,
Պայ խոյանայ առընթեր
Պչխոյն հաւատ խրախոյս տալ.
Զունայնութեանն ըղձխանկ
Ի բաց կորզեալ զայն մըրկէ,
Արմանիք սուրն անդոյակ,
Փայլակն օդոյ զի ծըխէ,
Յայտնէ նոցա մատընցոյց
Զկոխեալ փըրկչին նեղ շաւիղ,
Զոր իւր արեամբ կարմրացոյց
Յոր գունդք սրբոց դէպ ուղիղ.
Պահաւանդին 'ի կատար
Ագլուսեղէնն յայտնէ խաչ,
Զորով զուարթնոց հիւսեն պար
Զարմաւենին միշտ կանաչ.
Երանի ձեզ Պատանեաց,
Կարդայ դըշխոյս երկնաւոր.
Որք 'ի մատաղ հասակաց
Յունայնութեան անմոլոր.
Ահ ձայն ազգող երանւոյն
Կայտառեալ մանկանցըն կայտառ,
Ու 'ի դըժնիկ խըստագոյն
Ու վէմս հայլին առապար.
“ Օն, առձայնեն, երթիցուք.
Այդ փունջք այդ վէմք չեն անկոխ,
Թէ և հեղցին արտասուք,
Թէ և արիւն յառընփոխ.
Տես զԱնտոնին զաչաց ցօղ
Բենեդիկտեայ կարմիր փուշ,
ԶԲարթողիմեայ[1] սուր քերթող
Յաղթօղք կըրից փաղաքուշ.

1 Բարթուղիմէ, Կիւրեղ, և Բենեդիկէ, անուանք ունակալոյն զորս երգէ քերթողս.

Զի՛ կուրեղ պարզեալ 'ի խորոյն
Եւ վերկանգնեալ 'ի հաւատ.
Մեր խոր անշէջ զերթ պատրոյկ,
Սիրան առ Աստուած անարատ։
Զի՛ թեւափիլէ զի խայտայ
Ի հուր ւ 'ի գան զոր կրէ.
Ընդ քերանօք անըզգայ
Ի զխաչելեան յուշ բերէ.
Մ՛եզ զի պիտոյ կեանք պատիր,
Ունայնութեան սուտ կեղծիք.
Մ՛ընա բարեաւ դու, երկիր,
Երկինք են մեր Հայրենիք։

1827

---

ԱՌ ԱՅՐԱՐԱՏ

# ՆԱՒ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ *

Կաղնի յորնուղէշ երբեմն իջեան սիրուն սոխակաց,
Զոր այժ Ճարտարին մածուցեալ 'ի մի և թռուցիկ գործեաց,
Ճախրել փըրփրադէզ ղալեօք կուտեալք քաջառոյգ 'ի տիս.
Ընթա բերկրաձեւ նախկին ուղեւոր յանծանօթ ալիս.
Ո՛վ դու քաջաբաղդ 'ի տորմիղ նաւաց, գլխեա ըղձօ բաստ,
Որոյխի աւանդ ընդգոզեալ տանիս 'ի ծոց բարեբաստ,
Ի զհատոր սըրտիս արգոյ առ ինե քան զյակինդ փեկուայ.
Ընթա բերկրաձեւ բաց է քո կրկես երկին քեզ խայտայ.
Զամեհի ալիս մաղթեցի կանուխ, ահա հեզացան,
Ընտաստ փոթորիկք 'ի զուարթնոյն գերեալք 'ի բանտ ադխեցան.
Զամանին մրկանք, շընչեցէք և դուք զեփիւռք բարեբար,
Թռուցէք ըղձս 'ի միում աւուր տարայք 'ի դաշար.

* Վասն իմաստից գեղեցկութեան հաճոյ թուեցաւ մեզ և զանկատորս զայս պատառիկ Քերթողիս տալ 'ի լոյս, որոյ աւաղ թերի է օրինակն, և բնագիրն ոչ առ մեզ. զորոյն թերութիւն կրկնութեամբ իմն հետադայն Ա—ն—ի լցուցեւ. զոր և յօրինեալ է 'ի Ճանապարհորդել դասակցի իւրոյ Վ. Հ. Գաւիթ Վ. Ճերմակեան յնգիպտոս Նորակառոյց Նաւու Եռաստեփեան Պարոն Պետրոսի, որոյ կոչէր անուն Ա—ր—ա—տ.

Ահա տեսանեմ զանուանին փարոս քեզ լապտեր վառէ ,
Ի հեռուստ մատամբ զԱղեքսանդրիա քեզ նշանակէ .
Նաւաստեք 'ի կայմ ահա վազվազեն ընդերձան պարզեն ,
Զըղեն զառագաստ քարշեն ըզմաղուխ , Թնդանօթք Ճայթեն ,
Բայց զինչ . մի փութար կաց դու Արարատ լսել զիմ ցաւած
Ո՜ իմ հրաժեշտ յետին առ իմ սրտակից , զիմ սրտի զեղուած .
Այդ , սիրելի , յետ բազմարկածեան Թատեան կողզւոյն
Մնայր քեզ այցել նաև Նեղոսեան բազմարուեստ ափոյն .
Ով նահանգ չքնաղ հրաշից ապարեզ վայր նախանձելի ,
Բանի և քանի պատկերք հինք և նորք գան ինձ առաջի .
Ոչ բանք ինձ բաւեն ոչ ժամ և ոչ շունչ ոչ միտք մեղկաղէտ ,
Մտանեմ ըղձաւոր , տեղի տայ Նեղոս , ոչ մին է հանգէտ .
Մի զքեզ յամեսցէ Աղեքսանդրիոյ հրաշակերտ պատուար ,
Որ դու Մակեդոն կանգնեաց յիւր անուն , աղարտեաց Կեսար .
Մի վիթխարին սիւն որ յանուն Պոմպեայ երբեմն 'ի յոտին ,
Արդ հողմոց 'ւ ալեաց ծաղրը խաղալիկ տապաստ առ ափին .
Մի խուզեր ըզվայր ուր լուցաւ յետին խարոյկ դուզնաքեայ
Ըզմեծ Պոմպէին 'ի հուր տալ դիակն , անձեն Պտղոմեայ .
Մի և ըզտեղին ուր հեզ Կոռնելեայ լալեք խառնեցան ,
Յալիս զառնաղի ողբ զարիւնն արբին , և ոչ սոսկացան .
ԸզԿղէոպատրայ չըյիշեմ զանարգ զողորմ լուսամուտ ,
Պխսեմ չըհայիս , զի ո՞ր սիրտ ժուժայ ո՞ր աչք ժանտաժուտ .
Ընդ որ պարանաւ ձըգեր զկիսամեռ սեղեխ դիւազգեայ
Ո՛ իւր և ըզՀռոմեայ , զաշխարհի ժանտախտ , և զիմ Հայրենեաց .
Կափուցեալ աչօք անց ընդ սուրբ աւեր Մատենարանին
Ոյր պիղծ բաղանիք 'ի սուգ Եւրոպայ հըրկեզ վառեցին .
Ծուխ իւր խանձահոտ յետ այսչափ դարուց յունչս իմ հարկանի
Թուլիմ տեսանել զիւր բոց զիւր աճիւն զի դեռ մըրըրկի .
Մի դու , սիրելի , յամեր զայսպիսեօք , այլ վազեա երագ
Ողջունել զԱւետոս Եօթնաքերանեան ուր խոյթք և նըհանգք
Եւ նախ զընծեուջիր ըզմեծ բըզեշխին խորան նորափոր
Մեսատրի աւեմ և կամ Պտղոմեանց գործ արժանաւոր .
Ըզտեսիլ աչաց մըտաց ըզգըննին յաւարկայս անբաւ
Զըկտեսջիր փախուս 'ի Մեմփեան նահանգ ուժիւ և տակաւ .

՛Նահանգ նախագահ յետ իմ Էգինայ նահանգ գերապանծ
Մակացութեանց բոյն, արհեստից օրոց, խանձարուրք ուսմանց։
Ո՛ւր եղ գըլուխ թեքեաց սէգըն Հելլադա, Թաղէս և Սողոն,
Սամեան Պիւթագոր 'ի քոյդ պանդըխտիլ ընտրեցին թատրոն.
Թէ Կաստալիա և թէ Հելիկոն բըղխեցին շաքար,
Հըրակէ Նեղոսի և ոչ Պեգասու բացին զայն նեկտար։
Չերկընչիմ, Նեղոս, 'ի քոյդ յորձանաց, ոչ զի նահանջեն
Ու խոյթք կամ նըհանգք ոչ անդունդք ծովուն զի այլագունեն
Լինել նաւակից ինձ սիրելոյս նըշդեհ բազմաշխատ.
Սըրբազան վայրացդ որոց կաթոգնիմ, տուր զիս, Այրարատ։
Համբուրել կամիմ ըզդատարկ շիրիմ չքնաղ համբակին
Շինեալ դեռաղերծ պըրծեալ 'ի ձեռաց լկտի սեղեխին
Որում բանտ անպարտ ըզգահոյս ձուլեաց, և զաւազան եա,
Նու մտ ողջախոհ կըկնաթիւ ցեղից կացոյց ազգապետ։
Ու այլ ինչ հայցեմ, Նեղոս բազմահրաշ, բայց զննել ըզխաղ
Ուր միւս նորածնին կառեաւ պըտուեղէն տապանն 'ի ծանծաղ.
Ոյր ողղխեցեալ 'ի տուն զաւաղին զիւր ըզհայրագնր
Տուժէր լուծանել ըզմանկակոտոր նորաշխատ ոճիր։

. . . . . . . .

. . . . . . . .

---

ԱՌ ՆՈՅՆ ՆԱՒ

# Ա Ւ Ա Ն Դ

՛Նորակառոյց դու Այրարատ,
Տամ քեզ յաւանդ զիմ հարազատ[1].
Գանձ զոր տանիս չարժէ ըզսա,
Արգոյ առաւ քան շափիւղայ.
Բարեբաստիկ քան զամէն նաւ,
Ընթա աջող երթ հողմարշաւ.

1 Վ. Հ. Դաւիթ Վ. Ճերմակեան։

Հովք և ալիք գորովեսցին
Առ ձայն քնարիս հընչեալ յերկին.
Երթ խընդամիտ, քո նաւապետ
Չէ հողածին, այլ ծովուց պետ.
Գըրգեա ըզգա անդորրաբար,
Յաղեքսանդրեան մինչ 'ի դադար.
Իմ հարազատ դու ալեօր,
Միրուն նըշգեհ վաստակաւոր,
Յետ Թասոսեան՝ պանդըխտութեան,
Մ՚ընայր և վայրն եգիպտական.
Բայց մի աչօք անախորժակ
Գիտեր յայժմեան անշուք վիճակ,
Այլ խոհական 'ի դա հայեաց,
Մայր արհեստից և գիտութեանց.
Բըրգունք շիրիմք կոթողք 'ւ արձանք,
Տաճարք Մումեայք վըկայք անբանք.
Այսի ուսաւ և Եգիպտա
Թալէս Սողոն նըշգեհք 'ի դա.
Այլ անց յառաջ դու բարձրագոյն,
Առեալ 'ի վեր զաչս հաւատոյն,
Չըքնաղագոյն զՄեմփիս տեսցես,
Յետ Սաղեմայ զայդ պաշտեսցես.
Գա նախահարց պանդըխտարան,
Աբրահամու և իւր արեան.
Եւ արութեան պերճ ասպարէս,
Յոր ազգն ընտիր փորձեալ պէսպէս.
Գա պատանւոյն գեղապանծի,
Բանտ և գահոյք կըրկէս խանծի.
Երբ զիւր տեսցես դատարկ շիրիմ,
Մասն հանգոյր փոխան ընդ իմ.
Մինչ ակնարկես 'ի մեծ Նեղոս
Ի բեղնաւոր և եօթնահոս,

1 Քանզի նոյն ինքն Վ. Հ. Դաւիթ ամք յառաջ պանդխտութեամբ առաջիր մեկնեալ էր 'ի Թասոս.

Հարցջիր առ նա զմիւսոյ մանկան
Զողորմ ըղձեպ պլըրտուեայ տապան ,
Տեղիք ամէն ընդ որս անցցես ,
Եւ ծով կարմիր զոր գիտեսցես ,
Ընդըս պէսպէս քեզ կըրկնեսցեն ,
Ըզվայրս մասամբ ակնարկեսցեն .
Զմարգարէին եգիպտատառ
Ցուցցեն տանեակ պատիժ և սաստ ,
Ընդ հայեսցիս անձամբ անձին ,
Աչք և ականջք պարարեսցին :
Ըզնախահօրն իմ ծնողի [1]
Տեսցես ծընունդ և ըզտեղի ,
Տուր և սըմա համբոյր սերտիւ ,
Զուխտս իմ մատո՛ զաղերս պատիւ .
Սակայն զխօրդ ինձ մոռանալ ,
Զարժանագոյն յիշման քեզ տալ .
Դնա պաշտելի վայր ապաստան ,
Յոր գաղթեցաւ փախըստական ,
Տէրն իմ և Մայր աստուածածին
Ողորմ աղքատ ամենեցին ,
Հարց ըզմարդիկ , թէ չըյիշեն ,
Հարց ըզմայրիս , ծերքն ասասցեն
Յո՛ր շուք նըստաւ այն հեգ Մանկիկ ,
Զո՛ր հող թմնայր ցող իւր քաղցրիկ . . .
Եղկիր դու պագ ընդ իմ ուժգին
Աստուածակոխ այն սուրբ երկրին .
Գոյր ապաքէն , ով սիրասուն ,
Եւ քան անբաւ սրտիս զեղուն .
Չիք ժամ , ձայնէ ինձ նաւուղիղ ,
Խող գայ 'ի նաւ , կազմէ շաւիղ :
Արդ երթ ողջամբ ընդ քեզ առեալ ,
Զիմ զայս համբոյր և զերդ տողեալ

1 Ըզնախահօրն իմ ծնողի այսինքն զորդոյն Աստուծոյ արարչի :

Ո՞ւ ըղձալով ընկերակցաց,
Եւ զօրհնութիւն հօրըս հարանց.
Թէ քերթողիս երգք պատուեսցին,
Ա՛ Նայրապատ լուր ձայն յետին.
Եթէ ողջամբ դու տարուբեր
Ինձ մատուցես զոր այժմ առեր,
Քեզ հիւսեցից պսակ ծաղկեայ,
Քեզ երգեցից երգ տամաղեայ.
Ե՛րթ, կախեցից զխնըս քընար
Ընքոյդ խելաց յաւերժաբար.

1824

---

ՍԻՐԵԼՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏԱՓԱՌ

ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԽԱՉԱՅԷԼԻ ՂԱՐԱՄԵԱՆ

ՀՐԱԺԵՇՏ*

Մեկնիմ ահա, ո՛վ սիրասուն, յափըն կոչիմ Նեղաւեան,
Մարմնով եւեթ, այլ անպակաս խղճք եւ խորհուրդք 'ի Մնէժ կան.
Բաղդ չէտ ինձ թոյլ ակընկալուիս ըղձարձանորդ համբուրել.
Բայց սէր ձարտար յայլ ինչ դըրդեաց զիմ ըղձատտակ համձարել.
Ի հընդկային անխուռ կոնոն' տաւփ կամ սափոր պեղեցի,
Արմն աւանդ զիմ ըղհամբոյր զիմ ցօղ զիմ սիրտ պահեցի.
Ո՛չ ի մի յետնոց զանխըլլացի տըփոյս պատձառ սիրալիր,
Յայն յաւելի զերդ փող անլուռ զաղջողական խորագիր.
Ալեքսանդրէ, թէ զխնն համցես, զիր զոր կամիս աղամնոց,
Միայն եղեալն իցէ աղնիւ քան զամփոփեալ իմ Նուանդ.
Կամ զէթ ըղքոյդ զոյգ ամփոփեա, սիրտ եւ անոյժ ընդ իս կաց
Համարակաց լիցի մեր այս սափոր եւ տաւփ անմոռաց.

1824

* Զհրաժարականս զայս տաղ յօրինեաց քերթողս 'ի գնալն Վ. Հ. Դաւթի վարդապետի Ճերմակեան, յուղարկել նորա 'ի Վենետիկ քաղաքէ յՆոխիպատ, մեկնելովն 'ի բարեկամէ իւրմէ 'ի Պարոն Աղեքսանդրէ Ղարամեան, որ էրն յայնժամ անդ.

1 Զի ինքն իսկ ճարտարարուեստ վարդապետս ճախարակեալ 'ի Քաջուէ տաւփ ճարտար սափորանն, ընծայեաց նմին Պարոն Աղեքսանդրի.

ԱՌ ՊԵՐՃԱՊԱՏԻՒ

# ՄԵԿԵՆԱՍ ԱՐԱՄԵԱՆ

## ԱՐԴԱՀԱՏԱԿԱՆ ՇԷՐ

Պատանի ոք ուշիմ հզօր վայելչացեալ,
Բայց յարկածից գեղ իւր և ոյժ թառամ թօշնեալ։
Յետ հըրկիզման գերդաստանին կայր ՚ի սարսափ,
Զողորմ նըշխար առեալ ընդ իւր նըստեալ առ ափ,
Ակն ունելով իւր զքնար սատար,
Ակն ունելով իւր զքնար սատար։
Բաղդ ՚ի նաւակ ՚ի Մափորոն վարէր զիւր թի,
Բօղ ըղձիմքը զի կուրութիւն մի յայտնեսցի։
Մուլէր զողորմ ըղբարեբար զիւր յեղանակ,
Եկայք եկայք, ո վըշտատեսք, յիմս նաւակ։
Երանի այնմ որ ինձ ընկեր,
Երանի այնմ որ ինձ ընկեր։
Առեալ ՚ի կուր ըղձեց նըշխար գերդաստանին,
Մերթ ձեմէր յափն Ասխական մերթ յԵւուրային։
Հողմք զաշնաւորք ծով ծածանուտ ծիծաղանայր,
Եւ Ագկին անհոգ զորդւովք զաւակէ գըրգայր,
Բաղդ վերըստին առ ձեզ ժըպտեաց,
Բաղդ վերըստին առ ձեզ ժըպտեաց։
Մայր մի այսպէս ՚ի ծովագըոս յայն տարուբեր
Խայտայր նաւակն յոր բաղդ աջող թիավարէր։
Անմեղ սոխակք որք երկուստեք ՚ի նեղուցին,
Նըմանավիճակք բայց մեղեդեօք խընդակցէին։
Զի զբաղդ ունիք ձեզ նաւակից,
Զի զբաղդ ունիք ձեզ նաւակից։

Այլ բաղդ յողդողդ սասանեցոյց ըղձուրբ մանկոյն,
Ընդմին 'ի քերց 'ի ջուր հեղձոյց· վայեաց Մանուկ·
Այն ինչ ողբայր ըղձանհ միայն ծով յուզեցաւ
Սպառնալ այլոց· գոչեաց ողորմ և կականաւ·
Ո՞յս է բաղդիդ դըրժօղ հաւատ·
Ո՞յս է ծովուդ հողմոց հաւատ։
Իսկ բաղդն անգութ յետ դըրժմանց հեգնեաց կրկնակ,
Զայն հեգ նշխար 'ի գիշերի թող միայնակ,
Ի ժայռ ծովուն ուր ոչ ըսփոփ, այլ միշտ լալիք,
Ընձեր կրկնեն զոյգ արձագանգ վէմք և ալիք,
Բաղդ այսգունակ դաւաճանէ,
Ծով այսգունակ դաւաճանէ։
Այլ 'ի բացուստ նաւ ինչ հըզօր լուեալ զեղեր,
Խաչվառ 'ի կայմ հողմավարեալ առագաստէր·
Այր նաւաստիք կրկլին կուսանք ըսկայազօր,
Դիմօք կայտառ Հաւատ առ ղեկ, Յոյս ջահաւոր·
Երգէր Հաւատ զինչ յոյս 'ի բաղդ,
Երգէր և Յոյս զինչ յոյս 'ի բաղդ։
Զարթեաւ Մանուկն առ կուսական երգոց դըրուակ
Որ լոյս ջահին ծանեաւ ըզդրօշ ծանեաւ զնաւակ·
Երկիր եպագ սրբոյ կրօնին որ եկն 'ի յայց,
Բայց անմռունչ· ահ և զարմանք զլեզուն կապեաց·
Ո՛վ երկնային Յոյս և Հաւատ,
Ո՛վ երկնային Յոյս և Հաւատ։
Զայնէր Հաւատ լաց դու Մանուկ, չեն անարժան,
Աշխրական քոյդ արտասուաց որք մահացան·
Զայնէր և Յոյս լաց դու Մանուկ, ես ոչ խոտեմ
Գորով և ցօղ ձիրք են բնութեանց և քաղցր համեմ.
Բայց ցօղ գորով քրիստոսական,
Բայց ցօղ գորով քրիստոսական։
Ահա ոգի ձեր սիրուհւոյն զերդ Աղաւնեակ
Լուացաւ յալիս թըռեաւ յերկին համակ ճերմակ։
Եւ նա առ ձեզ այլ դուք առ նա վերաբերջիք,
Եղէք 'ի նաւ սրբոյ կրօնի, կրօնի որդիք·

Սա զարտասուս յաչաց սրբէ ,
Սա զարտասուս յաչաց սրբէ .
Ոստեաւ Մանուկն առեալ խրախոյս աստուածեղէն ,
Զեղբարց ըղձերց կալեալ զաջոյ . մտցո՛ւք ասէն ,
Յո և վարէ նաւակ Յուսոյն և Հաւատոյ ,
Զաչաց մեր ցոլ տարեալ Փըրկչին ընծայ արգոյ .
Ոչ եւս բաղդ մեզ նաւակից ,
Այլ Յոյս Հաւատ մեզ նաւակից .
Ո՛վ պաշտելի կրօն անուշակ , որ զիմ զիւրես
Ազդաւ սըրտի և շիթ աչաց խոստմամբն անտես .
Ո՛չ ես յուսամ 'ի խաղաղուտ երես ծովուն ,
Ոչ այլ մտեմ 'ի նաւ բաղդին ես զաղփաղփուն .
Մանուկն ուշիմ այսպէս երգէր ,
Այսպէս զիւր տոհմ արգահատէր .

1824

---

ԱՌ ՍԵԲԱՍՏԵԱՆՍ ·

# ՄԵԼԱՄԱՂՁ

ՑՈՒՑՔ

Դու որ ժըպտիս գեղատըխուր շնորհադէմ,
Արգահատէ զաղէտ չարեաց բազմադէմ,
Իջքս ըմնջքն երբ հառաչէ վըշտահար ,
Գըխտես ըղցաւ 'ի նիրհ ածել մեղմաբար .
Դու , Մելամաղձ , գորովական և քաղցրիկ ,
Թալուկ քոյին բերկրանմտոյց և գողտրիկ ,
Նորէ միայն 'ի կենցաղոյս 'ի վերայ
Շիթ բերկրանաց շիթ քաղցրութեան ըստ մասնեայ .

Ընդ հովանեաւ մենակեցիկ անտառաց ,
Ինձ քաղցրանայ հետեւանալ քոյդ շաւղաց .

Խորհրդազգած նըստեալ առ քեզ մտերիմ,
Ի յաշխարհէ և յիւր Թընդմանց ես փախչիմ.
Դու, Մ`ելամաղձ, գորովական և քաղցրիկ,
Թաւուտ քոյին բերկրամատոյց և գողտրիկ,
Ծորէ միայն 'ի կենցաղըս 'ի վերայ
Շ՛իԹ բերկրանաց չիԹ քաղցրուԹեան ըստ մաննայ.

Ո՛ խորդ ըղձոցդ սիրեմ զանոյշ ԹաղծուԹիւն,
Ըղձոցդ Թառամ ըղձոցդ նուաղ ԹալկուԹիւն,
Նա ըղձոյնըդ բիբ աչաց խոնարհեալ,
Պատրաստական զարտասուացօղ 'ի տեղալ.
Դու, Մ`ելամաղձ, գորովական և քաղցրիկ,
Թաւուտ քոյին բերկրամատոյց և գողտրիկ,
Ծորէ միայն 'ի կենցաղըս 'ի վերայ
Շ՛իԹ բերկրանաց չիԹ քաղցրուԹեան ըստ մաննայ.

---

Թէ 'ի յետին ձըգնիմք 'ի վիշտ դըժընդակ,
Սիրեմք զընդ քեզ խօսակցուԹիւն անուշակ.
Նա նոյն 'ի գիրկ խոկ 'ի սիրոյն բերկրական
Դու զքոյդ խառնես զըւարձուԹիւն ըստ նորայն.
Դու, Մ`ելամաղձ, գորովական և քաղցրիկ,
Թաւուտ քոյին բերկրամատոյց և գողտրիկ,
Ծորէ միայն 'ի կենցաղըս 'ի վերայ
Շ՛իԹ բերկրանաց չիԹ քաղցրուԹեան ըստ մաննայ.

## ԱՌ ՍԵԲԱՍՏԵԱՆՍ

## ԳՆԵՐԹՈՒԱՆ ՓՈՔԱՆԴԱՐՑ

Շատ են մեր թախիծք, քերթողդ Սենայ,
Գան նոքա անկոչ մեր խոկ ակամայ.
Վիշտք և Մելամաղձ քոյրք են հարազատ,
Ուր ըզմին տեսցես միւսն չէ անջատ.
Դու զիմ Ապողոն մի քում տըխրութեան
Ածցես ձայնատու, է նա խընդութեան.
Գիտեմ զի մայրեաց լըռութին հեշտին
Եւ մենաշըջիկ վըշտատես մարմին
Սողրեւ է կըրից տըխրակիր մասանց,
Լալիք անհրաման ծընանին 'ի յաչաց.
Սակայն միտք թխրեալ յամաժամայն լալոյ
Դիւրանալ կարծէ թէ յար 'ի նոյն գոյ.
Զարտօսր ոչ խոտեմ, բաղձանք է այն
Անառողջ մարմնոց ցաւոց հոգեկան.
Չէր է Ադամեանց 'ի մարց ուստր գայր,
Յանգ 'ի նոյն վարժիւք այս վերջին մեր գառ.
Բայց թէ կաթեցլին ցօղք առ մըշտ հանդոյն,
Ու մեզ բուսցեն և ջուրք Եփրատեան.
Այլ քան ուղղադատ լալեաց կարգադիր
Եւ առանձնութեան ճիշդ օրինագիր
Ու միշտ մըտախոհ յիւրըն երաշխեալ,
Գտանայ 'ի զըւարթ խորհուրդս 'ի գեղ,
Սըրտատուչ ցաւոց բըժիշկ իւր մատչի.
Թէ քան մեզ չօգնէ ո՛չ այլ ոք գըտցի,
Այսպէս և երբեմն յիւրական ալեաց
Հալման պերճախօս 'ի լուռ դիւրամէտ
Թողեալ ըղտարպեան բազմամբոխ տաճար
Ի քոյդ մենանայր Տուսկուլեան անտառ,

Աչ տատրակօրէն միայնիկ մնջել
Ընդ կեղծ Մելամաղձ զբանիւք անկանել.
Այլ յիւր մենարան յորժամ նա ձեմէր
Ի լուր սոխակաց և ջուրց տարուբեր,
Ունէր միշտ առ իւր ընկեր խօսակից,
Զիմաստասիրաց դըշխոյն սըրտակից.
Նուաղ ըմփոփէր ժըրմնայր նուաղ,
Խաբէր զիւր աղէտ մոռանայր ըզցաւ.
Այսպէս Թելադրեաց երգասէտ Փեբոս,
Որ ոտամբ Պինդեայ ինձ դեգերելոյս.
Նախնել սիրելոյս բերկրական կիթառ,
Ըզմէգ և ըզմաղձ փարատել խոպառ.
Յանառողջ մարմնի սրտիւ զուարթուն
Լինել կենակից Մուսայից դասուն.
Այլ թէ կոչեսցես բաց 'ի Կամենայց
Նա զայլ խոկուհիս նոյին գերազանց,
Զոր քեզ առաքէ տիրուանդ կըրօն,
Ըսփոփանք մըտաց բարէ քանիօն.
Զխորդ տիրապէս ըզմիտ կազդուրեն,
Ընդեղջ ցընծութեամբ զարտասուս սըրբեն.
Հաւատ անձթխած զինքը քօղաւոր
Քեզ մատամբ յայտնէ զգաւառ երկնաւոր.
Յոյս ապագայից տարփմամբ անկասկած
Փոքրիկ ցուցանէ զատեաց ըզդիպուած.
Իսկ սէր գեղեցիկ անձկով անմահին,
Յաւոց և մահու անբիծ սըրտին.
Բայց նոյն երգասէտ և զայս ետ պատուէր
Ազդել յիւր անուն քեզ այդր 'ի Տիբեր.
Ի քաղցրիկ քընար Լուտետեայ ըզգօն,
Զոր քեզն աւանդեաց երբեմն Ալքիգօն,
Որ քոյդ հագնելոգու արդ գեղգեղեսցես,
Յետ Մեղաքօլեայ և նոր ալեկուէ [1].

1 Գաղղիական են բառքդ, և Ծլօմոլ և Խոտոպեան 'ի մեր փոխեն.

Փոշոտեալ քընար անխօս երկամեայ
Ի խոյզ 'ի խընդիր նախնոյն մեր Հոմերայ,
Նըրգէ արդ ողջոյն անմոռաց սիրոյ
Սեպհին Պաւղոսի և իւր աղաւնոյ.
Նոյն և քաջազէն առ մեր ըմբշամարտ,
Ընդ նոր Ամլից ձըգնելոյ 'ի մարտ:

Ի ՆՈՐ ԴԻՏԱՊԵՏՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

## ԲԱՐԵՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ*

ՆՐԳ

Որ ըղձոյս հատեալ 'ի չափ և կըշիռ
Նա խորհրդական չունի յիւր վըճիռ,
Որ 'ի մէջ և յամփ ունի զիւր գահոյս,
Յոր 'ի նըշմարել արծուին կայ անյոյս,
Թըւեաց և ըղձո զարտասուացըդ չիթ,
Ա՛վ հօտ տառապեալ զաւշաց քոց քըթիթ.
Նհա աղջամուղջ վանեցաւ խաւար,
Ընորա հայիս դու վըճիռ պայծառ:
Մ՛ըրբիկ իւր արդար եհար ընդհանուր
Ըզհօտ ընդ հովուաց, արօտք իւր Թափուր.
Նոյն հողմ ահաւոր 'ի ծագաց երկրի
Յական 'ի քըթթել տարաղէ 'ի մի:
Նոր մեր այս Գարեհ արձակէ զգերին
Ըզհիմն արկանել հըրկէզ տաճարին.
Մ՛ի դու ինձ, Սիսին, մի Մաղրաբուզան,
Կըրճիմն արկանէք յարկին սըրբութեան:

* Որ յայց եկեալ էր Վանաց Ս. Ղազարու, անդուստ 'ի վիճակն իւր գերեալ հաստատեալ:

Աշխ օրհնական կոչի յաղքայէ ,
Պետ քաղցանայից 'ի յարևմտէ ,
Իջնորա պատուէ հոլուական ըղցուղ
Կարգել առաջնորդ նոր հօտին ընդ հույ .
Ուսկըն գիք իշխանք 'ի տանէն Պլևայ ,
Ընդ ձեզ Մնդեա և Օպաբրիա .
Լիցի ձեռընտու և Օջրաբարել
Որ ըղձըշմարիտ գիտաց ներբողել .
“ Ո՛վ դար բարեբաստ , դուլեսցեն դամբանք ,
Յոր այնչափ անձուկք , և չեղաք ժամանք .
Ու նախանձիմք ոչ , Թոռունք մեր յետինք ,
Զեզ են վայելուչք այդ ձիրք երկնայինք ” .
Ի նոր տաճարիս ելցեն արդ օրհներգք ,
Պատգամաց վեհին մեկնիչք անպըղերգք .
Մանկունք օրհորգք կընքեալք յուսադան ,
Ուսցին ընդ կընքոյն զսիրոյն պատուիրան .
Յօղեսցին յատակք 'ի ցօղ արտասուաց
Հընչեսցեն շըրթունք , օրհնութիւնս յԱստուած .
Ո՛հ , բարի յուսալ յԱստուած քան 'ի մարդ ,
Ուստայն է յոյս մեր զոր ստայնեաց սարդ .
Կայցէ ինչ յաստիս , ով դու նոր Աշխրաս ,
Ըներկրանք զուգակիր , նոյն և անբաժբաս ,
Տեսող դոլ դարուս , դոլ և կամարար
Աշխնից աղքային վըձնոց բարեբար .

1830

ԱՌ ՆՈՅՆ

ՀԱՅՐԱՊԵՏ ՏԵԱՌՆԱՊՍԱԿ

Ի ԳԼՈՒԽ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԵԱՆՑՆ ՀՌՇԻՈՍԻ

*Ու նիրհեն Նշկինք առ ողորմ կական ,*
*Զոր արտասուագող հեծէ լուռ բերան ·*
*Շնորհեաց Նշանայ Հովուապետ արհի ,*
*Հովուել զոչխարակս 'ի վայր դալարի ·*
*Նա Սեբաստացւոյն ահա սուրբ ոսկերք*
*Թնընդան 'ի շիրմին , լեզուն պարզի յերգ ·*
*« Ողջամբ քո ծագումն , այցելուդ ազգիս ,*
*Յոր առ կենդանեօք հեղի ես լալիս » ·*
*Յայս ձայն հայրենի որդիքն հարազատ*
*Դոփեն 'ի կայտառ յերգոց 'ի գլուատ ,*
*Ի զօրութեց զեղուած ու հոգւոց ցընդել*
*Նայլ զարուց անջինջ յայս Նշնան կանգնել ·*

1830



## Ի ԼՐՄԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

## ՌՈԼԵՆԻ ԳԱՂՂԻԱՑԻՈՑ

### Ի ՏՐԻՏՈՒՐ ՍԻՐՈՅ ԱՌ ՍԻՐԱՆՈՒԱԳ ՔԵՐԹՈՂՆ*

*Սիրտ բերկրապատար գիտէ հագներգել և առանց փերեայ,*
*Ոչ ծաղիկք պիտին Պառնասեայ բլրոյն ու ջուրք Կաստալեայ.*
*Ուր սիրտ բարբառի ձայնս է լեզու և առանց Տուղղեայ,*
*Անկեղծ պարզութիւն գիտէ ամբել քան շուրթն Աթենայ.*
*Լուայ հեշտալուր զսիրոյդ յաղթանակ, քերթող անպատրաստ,*
*Երբ իմն 'ի յանդորր եհաս բազմածուփ խոնջեալ առագաստ,*
*Քան իմ Աւգոստոս յետ Ակտեան արեանց կործեալ բարերաստ,*
*Երբ 'ի Տարպէան էառ յաղթանակ ծերունեացն յերաստ.*
*Յորժամ 'ի Հռովմեան իմաստից խորխուխ առցեն ըղձաշակ,*
*Քաղցրացցին և բիմք, մարզեսցին և միտք գոչել համարձակ.*
*Օ խորդ գեղեցիկ համագոյնդ մեղուաց Աթենական փեթակ,*
*Նա լցէ՛ն յերկրի ձեռնք քարածիր յայս գործս պարուակ. . . .*
*Այնչափ առ յինէն շնորհք սրբատառուհք, քրմնակից գումար,*
*Որչափ են կայլակք յայս զբաղթածին Ալիպրեան նեկտար.*
*Ծաղկեսցի 'ի մեզ բուրումն անուշից սիրոյն գեղապար,*
*Որչափ 'ի Կիպրոս ծաղկեսցին այգիք յաւիտ բերկրարար.*

1818

* Քանզի Պատմութեանս այսորիկ թէպէտ և Վ. Հ. Վրթանէս Վ. Ասկերեան եղև թարգմանիչ, այլ զի նորա յիտալական թարգմանութենէն արարեալ էր զեւրն, և զծանօթութիւնս ևս թողեալ 'ի բաց, ապա եղև քերթողս բաղդատութեամբ նախ ընդ գաղղիական բնագրին ընաւ զթերին յիտալականէն 'ի մերն ածանցեալ, և ապա յաւել զծանօթութիւնն զամենայն մեծավայելուչ ջանիւ. Վասն որոյ և յաւարտ տպագրութեանն յիրաւի էր խնդակից լինել ընդ նմա. որում քերթողս ա՛փ յափոյ զայս պատասխանեաց.

Ի ՄԵԾ ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

# ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԵՒ Ի ՍԱՏԱՐԻՉ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՆ

ԵՐԳ ԲՈՆԱՅԱՆԳ

*Յանքուեաղատ Միրոյ :*

*Ոչ ու, Հռոմ, չեն ժամք դատարկ*
*Նորգովք շահել սիրոյդ ըղձարկ .*
*Թէ և խուճապ տաղք ու Թըւին*
*Ինձ արժանիք յիւղ Նըղեւին .*
*Բայց յերգ արկից զոր ինչ տայ տուն*
*Պեղջուկ Մուսայն յանոյշ իմ քուն .*
*Թէ և զինե պատին խուժանք ,*
*Հայկեան բառից երկունք դաժանք[1] ,*

*Նորգել խնդրես զանշուք Խորնի ,*
*Որ առ ինև պերճ քան զՆնի ,*
*Որ զՀռոմեան զարմ և համբաւ*
*Պայծառացոյց 'ի շուք ամբաւ ,*
*Հայր հնչեմ կերկեր 'ի փող*
*Քերթողահօր խմում ներբող ,*
*Որ զխմն երգէ դիւցազուն Հայկ*
*Տոհմիս որդւոց արև և այգ .*
*Որ ինձ վկայէ ըզքաջն Հռոմ*
*Հիւսեալ նըմին հիւսք անթառամ ,*

1 Հայ – Խտալական բառարանն :

Բարենըշան մեզ այս տարի,
Որ խուր եղիտ բազուկ արի,
Զնորայն կանգնել արձան արդար
Ի տիպ աչաց գործոց տեսպար,
Տալ յընթերցուած ազգիս Հայոց
Զորս են 'ի փառս և զոր 'ի խոց,
Զոր նայն սուլեաց քաղցր 'ի յաւաչ,
Եւ զոր կլնքեաց յողբ ու 'ի թառաչ.

Զնոյն արտասուեմ և ես անբոյժ
Երբ ըղձախնեայն յիշեմ աշխոյժ.
Եւ բողոքեմ. ո՛ Արարատ
Ե՞րբ քո սուխք լիցին փարատ.
Բիւր մագաղաթ զոր մեզ եսուր
Ո՞ր խուժադուժ կապտեաց գեղգուր.

Ինձ զի՞ պխտին կոթողքդ և սիւն,
Զոր հուր վառնեաց ներկեաց արիւն.
Ինձ աւիմՀ խոյր քո և բարձ,
Զոր աջ անգութ վաղուց եբարձ.
Ոչ ըղձախնեացս յուզեմ մեհեան,
Եւ ոչ զանդըրխ դիցն 'ի գեհեան.
Այլ ըղվարժեալս որ զերթ աստեղք
Եւ ըղմատեանս որ քան հեղեղք
Ողողէին զաղատ Մասիս,
Յորոց այժմուս յետնեալ դասիս.

Զհամբրամայն ողբամ ըղձով,
Յոր կաղ սարմատ բազմանըզով
Սուզեաց զՄոփերս յորձանս անել,
Երբ արշաւեաց զՀայս 'ի վանել.
Ինձ զի՞նչ թողաւ բայց սին արտօսր,
Եւ այս նշգեհ մրմունջ անօսր.

Ո՞ւր այն բազուկ փրկիչ զՀայաստան ,
Որ խաչանիշ 'ի սուրբ Նպատ
Մահու մատնեաց զՄ. խրոխտ մահուամբ՝
Որ տայր Մոփերս հըրոյն կրկուս ։

. . . . .
. . . . .

Ըզպերձացեալ զխումբ ըզՕտուր ,
Մակեդոնեն մատնեալ 'ի թուր .
Գխում և զմեծ փառօք Օտայդան
Ըզախնորդութն եղեալ զընդան .
Բայց զինչ կորեաւ . վաճառք ու աննատ ,
Հնախաղաց լաստիս վըտաւ ։

Իսկ յիմ Մասիս եթերաճեմ
Է՛հ , զխուռթեան կորեաւ եղեմ ,
Այլ ձիոք նշխարք յատոցն 'ի բևր
Զոր կաճողեաց այցելուն հեւր ,
ՅԱզբխական փոքր այս դարատ
Յանբուն 'ի տունկս յօղին պատուաստ ։

Դու , Մխակեանդ , Խորնոյ զաւակ ,
Հօր քում արդեանց անխոնջ հաւակ ,
Որ զընդ զըրուաւ լուսոյն անօթ
Բացաղրեցեր մեզ յերեկօթ ,
Ի քերթողէս առ դպրըն վաշխ
Յուսթի քրտանցդ արժանաբաշխ .
Եկ պըսակեմք զանուանին Մարդ ,
Նա 'ի սաղարթ , և դու 'ի վարդ ։

1827

## Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

## ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՑՒՈՅ ՔԵՐԹՈՂԱՀՕՐ

### ՆՈՅՆԱՅԱՆԳ

Դու 'ի բիւրուց շնորհց Խորենի
Ընտրեալդ առաւ վեհ քան զԱնի·
Անեղծ կացցէ քո պերճ համբաւ
Ի տուն Հայկայ 'ի շուք ամբաւ·
Լսաւր նըմին չքնաղ զաւակ
Վիպօղ ծագման նախահաւակ·

Թէ չէր Մովսէս, ով Արարատ,
Ո՞ զմէգ գլխոյդ առնէր փարատ.
Կամ ո՞ ընդ քեզ պճնոյր, Մասիս,
Ի բազմակոյտ լերանց դասիս.
Զբելայաղթն ո՞ երգէր Հայկ,
Որ աշխարհիս ծագեաց մեզ այգ.
Ո՞վ և հըզօր Տիգրան ու Արամ
Պըսակէին յոստ անթառամ։

Այլ զնորհ անբաւ երգէ իմ փող,
Բագրատունիդ, քեզ 'ի ներբող,
Որ զԽորենեան ծանեար ըզվարկ,
Ոչ տալ մատեանցըն նիւթ դատարկ·
Թէ հիւսք պտղանցս ախորժ թուին,
Ընկալ պըսակ բայց յԱշըղէն·

Այն ինչ այսպէս յուզիմ յաշխոյժ,
Օ՜ ինչ չիմանամ վէրք յիս անբոյժ.

Ճախրեմ ոգւով բարձր 'ի Նըպատ
Պարագիտել ըզ յաղթ Նըփրատ.
Ա՛հա թնդիւնք, սըմբակք խուժանք,
Ա՛հա շողիւնք գուպարք դարժանք.
Նըշո՛ւկ զինու. հըրդեհ մահու,
Որոյ անյագ բոցոյն կըկուտ
Եւ Տարօնոյ մոկաց անտառ,
Այլ բարդք գրեանց վըտառ վըտառ.

Լափեաց, Մ՛ուշեղ, անգութ գեղջուր
Զօսկեհատ շեղջ զոր մեզ ետուր.
Եւ զամբարտակս և ոչ ըզախին
Ոգեամբ յարտօսր ողջամբ յարին.
Զոր բաղդ ձօնեաց բաղդն և երարձ,
Ըզթագ ազգիս զգահն և ըզբարձ.
Ըզպատմագիրդ միայն Հայոց
Զերծոյց զխպուած, բայց սիրտք մեր խոց.

Ո՛ւր այլ հատուածքն 'ի ձահ 'ի ձեմ.
Ո՛ւր վէպք վայրացն՝ որ հուպ յԱկըզեմ.
Աւա՛ղ քըրտանց ամացդ անքուն
Յոր ծնգեցար մենակ 'ի տուն.
Ո՛ւր հարիւրեակ երկայն տարի,
Զոր մըշակեաց ոգիդ արի.
Ո՛ւր տաղք չափեալք քաղցր 'ի յաւաչ,
Զոր ցանկ՝ լացի յանպէտ թառաչ.
Լուր, աղաչեմ, զիմ կոծ արդար
Յայտնել ինձ զայն մեզ 'ի տխպար.

Ու զիա՞րդ ոչ լալեաց հեղեղք.
Լըսել լըսեն, լուռ կան աստեղք.
Կա՛յ դեռ, տեսէք, գոռ հեն մեհեան,
Պատուլին և այք որք 'ի գեհեան.

1 Քանզի 'ի ցանկի պատմութեան Քերթողահօրն պահի մակագիր ևեթ տաղին, զոր արարեալ էր նորա լափա յենէն և 'ի Սահակ Բագրատունի կորուսեալ 'ի սպառ քերթուածն այն.

Ի Աղգնունեան յափանցն 'ի ծով
ԶՀամբրամայն տեսէք նըղով ·
Պետ ոտտան պարեխքն անել
Զիմ գեղաղէշ զՀրայն վանել ·
Սակայն գրենոյդ նշխարք անմահ
Պետ անպատիւք՝ խլուխւք անշահ ,

Ամիլսածին գուժէ ըղՈւր
Քաղդէացւոյն մասնեալ 'ի թուր ,
Աղծովափնեայն հարուստ Ոայգան
Ջըրգանք ցանցից ցըռուց զընդան ,
Ես լռեցից 'ի թել բանին ,
Ուսով սրտիս գէթ ցաւք վանին ·
Զիւր ըղձեւտող խայթէ լուռ վարդ ,
Եւ զինչ զարմանք ըղնոյն թէ մարդ ,

Լուր արդ , պանդուխտ բարեկար հիւր ,
Թէ՛ երթաս Սըրբոյս 'ի լուսաղբիւր ·
Երբ առ շիրմաւ կաս յերեկօթ ,
Իւղ արկ ընդ իմ լուսոյն յանօթ ,
Հազար և բիւր տուր ըղհամբոյր
Յաճիւն ոսկոյս ամենաբոյր ·
« Քերթօղն , ասա , դալար 'ի տխ
Որ արբ երբեմն զանոյշ Փասխ ,
Արդ 'ի Հանդըրին ծաղկեալ 'ի գէս ,
Ազպատմութեանըդ տիպ եսես ,
Զբարթացան , այլ ոչ զարտօր
Սնել ժուժեաց մնջել անօր ,
Ասա , քրտանց չեղև իւր բաշխ
Յայնժամ յազգէն բայց ցաւոյ վաշխ ,
Զոր յողբս ազգին կական բառնայ ,
Յորքան Տիգրիս ալեօք կոծայ ,
Այլ զիւր աւանդ թէ ինձ յայտնէ ·
Ախիւր զոմեատուք ըղնա երգէ ·

Գիտեմ զի գան Մուսայք գողթան
Ի լուր Սրբոյդ ցնծաղ անուան ,
Բերել առ իս ըզսուրբ ջութակ
Զոր յիննակնեան կախեալ վտակ ․
Տացէ 'ի տիպ ոսկեքանդակ
Ընմաց գործել զիւրեան վաստակ ․
Բայց աղերսէ ընդ նմին կեալ
Յողբոցն 'ի վերջ շարամանեալ ․
Զի հիւսուածոյս անզօր պատուաստ
Զշիրմն նորա պատեալ միշտ աստ ,
Որպէս բաղեղ գետնանախանձ
Որ ուրովի չունի ինչ պանծ ,
Սողոսկեսցի մահարձանին
Մինչ 'ի գագաթ պըսակ նմին ,
Թէպէտ ինքեանք անգոյ ումպէտ ,
Կեցցէ նովաւ կեցցէ յաւէտ ,, ։

1827

---

## ԱՐՁԱՆԱԳԻՐ

## ԱՌ ՈԳԻՆ ԵՂԵՐԵՐԳԱԿ

## ԸՆԴ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳԱՀՈՒ[1]

Ոգիդ վսեմ, զթագն և ըզզարձ
Թէ ինձ տրեաս զոր բաղձն եղարձ ,
Մ՝ի լար ․ բաղձքն բարքն են անդարձ ․
Թէ ըզզարձման սըգաս դու խանձ ,
Լա՛ց , սա և զիմ արտօսր անսանձ ․
Ո՛հ , լա՛մ ըզձեզ Հեռ և Նախանձ ․

1 Զարձանագիրս զայս յօրինեաց քերթօղս յաւարտ տպագրութեան Խորենացւոյն փոքրագիր (1828), որ յետկուսէ ունի զպատկեր եղերերգակ Ոգւոյս Հայաստանեայց ․

## ՆՈՒԱԳ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ

## Ի ՀԱՆԴԷՍ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՈՐԱՏԵԱՆՑ

### ՈՂԲԵՐԳԵԱԼ Ի ԹԱՏԵՐ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Գանձացիր Հռոմ, ու այլ նախանձիր
Ընդ յաղթողական կամարըս քոյին.
Հնչեաց Լիւեայ և փող Մարոնին,
Բայց ոչ հատուցին դըրուատ զարժանին.
Գանձս զի քո քաջք գըտցին յաղթական,
Ոչ ըռկ Կամայեանց այլ երկրի համայն.
  Նա պըլետոնկոս ծընունդըս վերջին,
Փոխեցայ տեսլեամբ 'ի յամն առաջին.
Զոր ինչ ընթերցայ յաղօտ պատմագրին,
Նոյնք ինձ անաղօտ յանդիման եկին.
  Տեսի ես վեցեակ ախոյեանս արի,
Զօրէն բանակաց հարեալ 'ի դիմի.
Զ Որատեանց առեմ հարազատս արի,
Նա ըզԿուրատեանց զարմ ալբայեցի.
Ընտրեալքըս յազգին ճապաղիս արեան,
Դիմադրաւք 'ի մահ առ սէր հայրենեան.
  Նոր էր ասպարէզն և հանդէս մարտին,
Յոր և դէք Հռոմայ կային 'ի գընին.
Բայց տեսիլն ողորմ, եւս 'ի պատկերին,
Նըրբ ընդդէմ երից կենդանի կայր մին.
Մինչ քան զարութիւն յաղթեալ իմաստին,
Տանէր զյաղթանակ մին քան զերեսին.
  Առ քեզ են աչք իմ, ու ոչ 'ի յաղթանակդ,
Ով Որատիէ անյաղթ նահատակ.

Զխորդ սիգաձեմ ներկեալ կարմրորակ,
Եւ պըսակ 'ի գլուխ խայտաս 'ի բանակ·
Կապտեալ զանկելոց զասպար և նիզակ,
Զամպան նըկարէն արկեալ ըզթիկամբք·
Ասպարէզ մարտից ոռոգեալ յարիւն,
Ի գօրըս գօրուց կացցէ բազմարդիւն·
Բուսուսցէ մայրիս դափնեաց անձեցուն,
Ծածկել առ յապայն զտիեզերս համբուն·
Բայց ոչինչ ընդհատ գոլեմ յիմ քընար,
Ըզմահ Կուրատեանց անկեալ 'ի պայքար·
Նոյն սէր հայրենեաց նոյն սիրտ քաջափառ,
Վառէր ըզնոսա 'ի մարտ զօրաբար·
Եւ թէ յալբայեանց վրիպեաց յաղթանակ,
Ոչ մեղ Կուրատեանց այլ բաղդին վրիպակ·
Դու, Մըրկոլինէ, պատանեակ Հռոմայ,
Դըժբաղդ կաթօղին 'ի սէր Կուրատեայ·
Գոհ լեր ընդ ապտակ քաջին Որատեայ,
Ուր քոյդ նախատիպ սըրով անկեալ կայ·
Զի դըժնեայ 'ի Հռոմ յանցանք են դժնեայ,
Սէր առանձնական թէ յաղթէ Հռոմայ·
Այլ քեզ, Պոպլիէ, ծերունիդ ցաւած,
Քեզ են վայելուչ ողէշք սարդենեաց·
Երից ազգասէր ծընող դիւցազանց,
Երեքումբք պճնեալ պըսակօք քաջաց·
Մի լար ընդ անկումն երկուց Որատեանց,
Որով կանգնեցաւ Հըռոմ գերապանծ·
Դըրեալ են անջինջ անուանք քաջազանց,
Յիշեսցեն յետնորդք 'ի ձայն տամնաղեաց·
Բայց ահա 'ի ստուէր մարտիս Թատրոնեան,
Զայլ ոք Պոպլիոս հայիմ բազմամեան·
Ոչ զերիս ծընող այլ ըզվեշտասան,
Վարժիչ 'ի հրահանգ 'ի տիպ որատեան·
Լինել հայրենեաց անվըրկանդ պաշտպան,
Ոչ 'ի տայր սըրոյ այլ 'ի սէր ու 'ի ջան·

Որում անձկացեալ յուսով զուարճանանք,
Տեսանել 'ի ձեզ ըղձիցս նշանակ.
Ճըշմարտել յանձին ըղձին օրինակ,
Առ սէր հայրենեաց գտանել 'ի վերանց.
Զի ոչ վասն անձանց միայն հաստեցաք,
Եւ որ կեայ անձին, կեայ ընդհանրական.

1804

---

Ի ՆԵՆԳԱՒՈՐԱՑ ՄԱՀ

# ԽՈՍՐՈՎԱՑ ՄԵԾԻ

## ՅԱՒԱՐՏ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՆ

### ԵՂԵՐԵՐԳ

Մատիք տարանաղեան զարք ողբականաց,
Յօղեցէք կականս ըղձետս արտասուաց.
Հեծէ տըխուր պուրակս ընդ բանակաց,
Զի որսացաւ հըզօրն 'ի ցանց պատրանաց.
Անկաւ Արարատայ հայրըն բարեխնամ,
Ըզզօն և ահարկու Պարսից ախոյեան.
Գլխացախտան գեղեցիկ ծընունդ Մահազնի,
Ի վերուստ վայրիջեալ 'ի վեր փոխադրի.
Զեղն որ քան ըզսա շըքեղ բարեփառ
Եւ ոչ 'ի կատարած օրհասին թըշուառ.
Եղեն զարմանական գազանք անտառաց,
Ըզմիայն զարժանին ծախեալ 'ի կենաց.
Արդ ո՞ւր մեր թագակալ թըշնամեաց վանիչ,
Ո՞ւր աշտարակ զօրաց, թագ պանծացուցիչ.
Արի, գլխացաւն արքայդ, ճակատ յաղթարեա,
Եւ մի թողուր գերի 'ի ձեռս Սասանայ.

Լքեալ կայ անժառանգ գահ քո ողբացեալ,
Եւ դու, ո՜հ, յանտառի յարկին թաթաւեալ...
Բայց մի՛ դուք մարդադէմ ընտել բորենիք,
Ը՞ր ոչ 'ի մեզ փոխան ըղձանիս արկիք.
Զխո՜րդ ըղձեան հարկք յոգլն վեհապանծ,
Ալ ակն անձել յալեաց յորմէ մահ տարեաց...
Բ՛ո ըղձեւ քող սըգոյ մայրդ արխացեալ,
Զի հայր ազգանուէրեան կայ տապաստ անկեալ.
Մինչ կարծեալ յանդորրու յանկարծ ծըփեցաք,
Նաւուղիղն հեղձամահ 'ի յարեան վըտակ.
Մերժեցաւ 'ի մէնջ յոյս քոյ և մեր կենաց,
Դու մնանեալ յախտ մահու մեք յերկաթ վըշտաց.

1789

---

## Ի ԹԱՏԵՐԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՐՈՒԱՆԴԱՅ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՅԻ

Կեղծիք են այս այս դէպք Երուանդայ,
Կեղծիք սըտայօղք սեթեւեթք նորա.
Բայց սակայն 'ի թատր երկրիս բազմամեայ,
Ի քանի քանիս արդեամբք լըրանայ.
Եղեւէջք ներհակ զարմանք երեւին,
Զարմանք անմըտաց ոչ խոհականին.
Եւ մեք խաղարկուք արքայք և ռամիկք,
Թատրոնական են որ ըղձեօք լօղիկք.
Փաղփիւն որ վնդքօք նոյնպէս դիւրանցիկք.
Բառնայ 'ի մէնջ բաղդ երբ հաճին երկինք.
Խաղալ վարկանիմք խաղ հանդիսապէս,
Բայց մեք խաղալիկք բաղդին տիրապէս.
Տեսի ես տեսի նորոգ տեսարան,
Ըզմեր Հայկազանց վեհին Երուանդեան.

Փառօք ամբարձեալ զահ յաղթական ,
Շնութեամբք լցեալ զերկիր արամեան ․
Բայց իւր կատարած ողորմ էր , քա՛ւէ ․
Դարձայ 'ի քննել զինչ պատճառն իցէ ։
Ասացի ընդ միտս ․ Երուանդ փառաւորն ,
Թէ ըզքեզ համբարձ քոյդ քաջութիւն ,
Թէ զքեւ բոլորէր սէր և գոհութիւն ,
Թէ քեզ յաջողեալ էր միահաղոյն ,
Հիմ խարխուլ արկեր գահուդ աղբունեայ ,
Ի կլանս զարմին հեգ Սանատրկոյ ։
Միթէ չէր անքոյթ ծիրանւոյդ արկուած ,
Թէ չէր այն արեամբ կըրկնակի ներկած ․
Եթէ քաջութիւն քեզ կայր թիկնակաց ,
Ո՞վ զայն առ 'ի քէն կողոպտէր 'ի բաց ․
Աւա՛ղ Հրգօրիդ , վըրիպեցար դու ,
Երբ ըզգօնութիւն չէր քեզ խրատու ։
Խարխուլ են գահոյք թէ և ոսկեղէն ,
Որոյ պատուանդանք յոճիր յեցեալ են ․
Խէթք և ահափէտք կան միշտ գահակից ,
Բարապանք յաճախ տաղտուկք ամբոխից ․
Թըռուցիկ վարանք ճախրեն անպակաս ,
Ոսկէզօծ ձեղուամբ 'ի քոյին գարպաս ։
Թէ և վեհերոտ ընկճեալ ժողովուրդ
Չիշխէ զայն պատժել առ իւր արձակուրդ ,
Բայց խիղճ քո դահիճ տանջօղ անյագուրդ ,
Ըզցայգ և ցերեկ 'ի նըսեմ խորհուրդ ․
Չանսայ մոլութիւն օտար սուսերաց ,
Անձամբ յեսանէ 'ի ճահ իւր լանջաց ։
Այլ 'ի տեսանել ըզՏէր նախարար ,
Ի պալատական արհեստ հըմտավար ,
Ի վերին երես շընթել լըրբաբար ,
Ի տէր իւր սուսեր սըրել ծածկաբար ,
Ասացի ընդ միտ ․ Սուսեր այդպիսի
Դըրժօղ իւր սըրտին 'ի դէպ մըխեսցի ։

Տեսե՛ր, երբ լուար զխորտ բռնակալ,
Մ՛ինչ 'ի շունչ յետին յանձն երջանկացեալ.
Գոռ պատերազմունք ըղձալիսն զեղեալ,
Գործութիւնք կենաց 'ի վեր երեւեալ.
Հարց դու զառաջնոց մատեան Հռոմարիտ,
Ըզմիտ միոյ զանձնաջէր 'ի միտ,
Նստի մոլութիւն առ ժամն 'ի յանդոր,
Անի զիւր զխոժք շըլպար եւ սընգոյր.
Բայց կաց դու մնա զի քիրտն եւ կամ ջուր
Բացցեն ըղձորայն երանգ սեւաթոյր.
Բայց 'ի գարշումն, անձին նողկալի,
Երբ 'ի քննութեան տեսցէ հայելի,
Վրդովմունք, ծիծաղմունք, սըգամք եւ կոծմունք,
Կարեաց մոլութեանց միշտ նըշաւակմունք.
Հզօրք 'ի հզօր մոլութեանց ձռնչմունք,
Տըկարք 'ի տըկար ախտից ըղձածմունք.
Երկոցունց մնայ դերեւ ելանել,
Անձին եւ այլոց 'ի ծանակ լինել.
Ի սուտ դըպրոցէ տեսլեանց թատրոնից,
Ասայ հաւատոյ ըստոյգ իմաստից.
Ոչ միշտ տէրութիւն անդրուած ախտից,
Ոչ արքայանայ 'ի նիստ գահոյից.
Բանըն դատախազ առնէ դատապարտ,
Թէ եւ 'ի յայլոց դատեսցի անպարտ.
Մանկունք կըրթականք, ուսայք, ուսուցէք,
Խաղացեալ այլոց, 'ւ անձանց խաղացէք.
Զոր ինչ միանգամ քաջ նըկարեցէք,
Մ՛ի արգեամբք ըղձոյն 'ի յանձին բերէք.
Երկաց ժամ երկու Երուանդեան ձեր խաղ,
Բայց խաղ մեր կենաց ձըգի մինչ 'ի թաղ.
Երկերք գիւցազանց դարուց առաջնոց,
Ծախեաց են համարք, 'ւ Բարքայից դըպրոց.
Ոգք ոչ ուսանին յանցից եղելոց,
Ասցին թող Ըռլեա 'ի տխպար յետնոց.

Զանձանց ըղձլըխպակ դրոշմեսցէն անջինջ,
Թէ անկան ննջեանք գլխոյդ և առ Նինչ:
Թշմնուկք և քընար դըրուատիք ողբ,
Ոչ լռեցուսցէն ըղխողձին բողոք,
Թէպէտ և գըրոցին փառատարանք շողմոգ,
Այլ ոչ յաղթեսցէն փառուք ոլնոտեօք.
Հատցեն ըղձըձիւ միտքըն դատաւոր,
Անձըն մըլեկան եւցէ պարտաւոր:
Սկիզբ կըրից ոտնք, կնիք կըրից յաղթող,
Հուսկ յետոյ յաղթէն և գլխըրեանց պաշտող.
Գերի վարին միտք այն որ նախ տիրող,
Անդերծ կաշկանդեալ յանուր 'ի ձընշող.
Այդպիսեօք և մեք խաբեցնիք ըստէպ,
Լինիցնիք այլոց խաղալիկ 'ի դէպ:
Արդունք շըքեղք մըտք նախանձարկուք,
Իջնից մահացուաց ապաժոյժ բարուք.
Այլ նենգ և դարանք և շըրթունք քըսուք,
Անդէն որջանան բանք շողոմարկուք:
Այդպիսեաց անձուկ մըտացին կալցի,
Յորոց ճըշմարիտն արտալած լինի:
Անմեղ էն երկինք, անմեղ և աստեղք,
Մինչ բըռնակալաց տապալին եռեղք.
Մոլութիւնք նոցին մըլթերք բազմամեղք,
Զըգէն 'ի յերկնուստ ըղձանթիս անհեղգ.
Զազգ հարըստահար կորզեալ 'ի ժանեաց,
Այնպիսեաց հըեշից մարդոց վայրենեաց:
Իմաստ այսպիսի շնութեան պատճառ,
Մատաղ մեր [1]Բերթող՝ երգեաց յիւր կաճառ.
Խառնեալ զօշարակ առ լեզուըն պատառ
Ի ջամբ մըտաւոր ճաշակաց գիւրառ.
Զվրաժիր ձըգամբ ողեալ տարացոյց
Զարգանալ բազմօք խըրոց վարժելոց:

1 Քանզի ողբերգութիւնն այն ճարտար և հոգեշարժ էր՝ քերթուած ուրումն 'ի կար-գակցաց քերթողիս նա ինքն է Աւան Միսակեան, 'ի մատաղ տիս յօրինեալ:

Գերութեան փոխան քերթուած խուճապաւ ,
Զօնեսցի այսօր սիրաշարժ գրչաւ .
Սատարաց խաղուդ շնորհք մեր լեզուաւ ,
Ութ դերասանից քաջալերք ամեաւ .
Լինել երկրպագումբք աշակերտք ընտիր ,
Ի հոգի և գրիչ 'ի բան և 'ի յիր :

1815

Ի

# ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՍ

## ԲՈՆԱՑԱՆԴ*

Ըզհայկազեանց եղանակեա ինձ Մուսա
Ախորժալուր առ քեզ ազին իմ յուսայ .
Օ քերդողահօր բեր ըզկախեալն 'ի ոռնար
փղոսկրաձոյլ գողթնալարեալ սուրբ քընար :
Հանիրեա 'ի թև ոսկեփետուր յԱյրարատ ,
Ըծեալ ըզքեւ կուսիցն ըզպար անարատ .
Ու զարամեան երգաձայնել ինձ բաղդ յոյր
Ըզքաջայաղթ նախապըսակ կամ Պարոյր .
Նաւ ոչ զայրն վեհապայաղթ զօռ Տիգրան ,
Ճամիրեալ ըղթոց 'ի նիզակին սուր Ճիրան :
Այլ Վարդանանց արեան զոր հեղ զօռ Սասան ,
Լէր զլուագօք բարձրաձայնիւք վկայասան :
Գոգցօք պանծա քան տապանաւ սուրբ Մասիս ,
Որոց արեան ծաղկիլ ցօղով ոչ կասիս :
Գոյա արիւն չիջոյց ըզկրակ և եհատ
Ըզմեխրանոց և զձուլածոյն թարահատ :

* Սոյին յանգք վարեալ է քերթողիս և 'ի բազում յայլ տաղս զանազանեալս խմատիւք նիւթոյն :

Կորօք ուսու պահել անշէջ մեր Թորգոմ
Ի ճշմարտին սրբում սեղան խունկ և մոմ.
Եւ պաշտպանեաց Քրիստոսապաշտ զարազած ,
Զոր զրադաշտեան խնդրէր ջընջել պիղծ արած ։
Զի գեղեցիկ , զի քաջազէն այս երամ
Զոր ոչ երբէք նախնին ետես քաջն Արամ.
Յորոց բանակ ըղձըրօշ խաչին զի ձօձի
Քան ըղձըքնաղ սարոյն զխոեմ և նոճի ։
Ոչ մարդ գոգցես զոսա տըկար այլ առիւծ ,
Գոռալ ըզհետ նապաստակաց երկչոտ հիւծ .
Հանդէպ դոցա ոչ արձակել զօրէն ձիկ ,
Եւ ոչ վաղիցն ըզհետ պնդել ձիք տաճիկ ,
Յո և զխմեն յահեղ փըղաց խիտ վոհմակ
Զհեծեալն 'ի նոյն կարեն 'ի տեգ ընդ գաւակ ։
Զարեան նոցա գայլ լափլիզէ սեաւ մակարդ ,
Ի գլխակոյտ խայտան անգեղք և քարարդ ։
Ո՛վ երջանիկ սրբոյ զարուն գերդաստան ,
Ի դա պանծա 'ի դա ողո՛րմ Հայաստան .
Ու թէ 'ի Հայկ ոչ 'ի Տիգրան կամ յԱրայ
Ու 'ի բերրի դաշտ զոր ցանեաց քեզ Շարայ .
Ընկաւ Վարդան և քաջքն ընդ իւր 'ի դաշտ աստ ,
Թռեան ոգիք անմահութեանցն 'ի դարաստ ։
Բամբիշք նոցա գաղթեն յայրից դարափա ,
Բազկատարածք առ այցելուն յՍզիխմեա .
Թափեալք զօրէն 'ի ձիրանաց խիտ վագեր
Տըղայք մատաղք կոյսք և հարսունք առ տայգեր ։
Նաշիհ գերմակ անդ չերեւէր . լոկ գարի
Ուտեն զըւարթ ոչ 'ի պատառ , 'ի քարի .
Փոխան խորտկաց տըւաւ գեղջուկ տափնաթան ,
Արտօսր և ջուր փոխան գինւոյն 'ի գողթան ։
Ա՛հ . ծուր ազատք ընդ ոստկան բարակ շուն
Ի նետ 'ի սուլին մխեալք յանտառս ընդ աշուն ։
Զանկաւ նոցա օշնան և ջերմ աւազան ,
Ալլխորդ և պահք և երկնառաք գաւազան ։

Նոցուն հըրկէզ բարձր ապարանք 'ի Պոլին,
Խուզք և պաշտողանք արդ առ երկնիւք զոյգ Թալին.
Ազատորդւոց Թօշնեալ աշխոյժք ժիր և հրատ,
Յորոց կանխաւ դողայր Տիգրիս և Եփրատ.
Քանիցս անգամ սաղարթացաւ նաւաստորդ
Յոր խայտացին որոջք ալոջք ասպազարդ.
Աշուն գարուն քանիք անցին առ երի,
Քանի՜ սոխակ երգեաց յամենեան մարերի.
Եւ դարձադարձ քանիցս եանց խորդ Թըռչուն,
Սուրբ վարուժնեակք չառին ըզլուր յանդարձ չուն.
Ո՛վ սէր անմահ սէր աստուածեան բոցավառ...
Կարկեա Մուսայդ զայդ չիմանայ քո կիթառ.
Սուրբ Մարգմանք, զայս երգ ձօնէ իմ գուսան
Ընդ փունջ ծաղկանց որ յարենէ ձեր բուսան.
Վարձ ոչ հայցեմ զահ Պալհաւկաց հաւասար,
Եւ զԱրծրունեաց զոր հիմնարկեաց Սանասար.

. . . . . . .

. . . . . . .

Նըստի մըշակ ընդ հովանեաւ 'ի բարտի
Լայ զիւր վաստակ ծածկէ զլալս զոր պարտի.
Հայի 'ի քիրտն յամառայնի ու'ի գարուն,
Եւ իւր մնայ մեղուացն անմեղ գունդ պարուն.
Օ՜ հօտ իւր խլէ Մար հուղկահար շըյտ 'ի քայլ.
Եւ թէ ըզմին որպէս նեղող քան զայն զայլ...
Դարձցի մաղթեմ անդրէն Մասիս և Մարանդ,
Կանգնել ձեզ սուրբ տաճար 'ի կորդ 'ի մարմանդ.
Եւ ես առեալ զիմ կընդընդոց ընդ լարի
Յանդըլին ալեաց ցոտս անդ Մասեայ դաշտի,
Նուագեցից զերկնից առ մեզ սուրբ օձան,
Երգոց պարուց հիւսել նըւագ անվախճան.

1828

ՀԱՏԸՆՏԻՐ ՔԵՐԹՈՒԱԾՔ

# ՏԵԱՌՆ Հ. ԵՂԻԱՅ ԹՈՄԱՃԱՆ

## ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՈՐ ՊԱՃՈՒՃԵԱԼ ԱՆՈՒԱՄԲ

ԱՆՏԻՂԻՈՍ ՍԻՐԱՑԻ

### ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ

# Ի ՄԵԾՆ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ

Ինչ, երկին, զՄայրն երգեա, որ յազգէ հողածին
Վերացեալ հրաշացաւ որպէս մարդ երկնային.
Ինքն ողջոյն լուսազգեաց եբր արփի զերակայ,
Եւ զերկրորդն ըզխաւար փարատեաց Թորգոմայ.
Ինձ դարձեալ զայն ասա. այրն անյանց զի՞ է զի
Նազանդէմ ըլկանօք տանջեցաւ յաշխարհի.
Բայց և ձեռ զիւր ձըգեաց 'ի նորոգ զերդաստան,
Ներկրեցաւ ծընընդովք, բերկրեսցի և յապայն.

Պերճ երկիր բարձրաբերձ կայ յելից արեգին,
Նստուածեան լուսալիր աչք 'ի նա դիտեցին.
Ո՛վ թէ են այլ սահմանք հաստողին գործ ձեռաց,
Սա նորայն հրաշարուեստ մանրակրկիտ գործ մատանց.
Դարաստան տընկեցաւ. նոր էր հողն, նոր էր ջուր.
Ո՛վ անդ տունկք ծախս յաստոյ տան սօսիւն հրաշալուր.
Նմբէ, հող տխպ բերեր զանմարմին աշխարհին.
Նուածինն տայր համձար ըզբարուս և չարին.
Տունկ ջրածին զխորդ տայր զանմահին ըղտխպար.
Քաջ ուրեմն հրաշարուեստ զայն կոչեաց իմ քընար.

Մարդ մարմնով ապաղէն կայ անդէն թագաւոր,
Ճիրանաց և ժանեաց երևի ահաւոր.
Քառոտնեայց ժողովուրդ, ամեհեաց գերդաստան,
Մագլաւոր գիշախանձ երկոտնեայց բազմերամ
Ընդ խմբերն կարգ 'ի կարգ և մնան Արքային,
Զո՛ր օրէնս, զո՛ր հրաման տայ իւրեանց երամին.
Եւ անձնիւր ընկալեալ կարգ զիւրեանց և զանուն,
Կէսք 'ի յորջ բայանան, կէսք սրաթև զօդ հերձուն,
Ընդ բնութիւն փոփոխեալ, զոր զարդիս տեսանեմք,
Չքնա՛ղ էր կերպարանն, ոչ ցուցաւ այլ ուրեք,
Ունէիր, այն երկիր նորազգի կենդանեաց
Վերբերիչ հրաշացաւ 'ի ծոցոյն նորաքանչ.
Զի վագերք, առիւծունք, են գառանց համգունակք,
Ինձք պիսակք, ընձառիւծք են ձեռաց ընդելակք.
Չէ այս շատ. ո՛վ, այլ ինչ տեսանեմ հրաշազան.
Հողն երկրիս խառնեցաւ ընդ պատկեր տիրական,
Պանծացիր դու, երկիր, զի և մարդ առաջին
Ընդ սմաւ, անդ քայլեաց, զօդ ծծէր ըզքոյն,
Զուարթացիր, իմ քնար, և յերկրորդ ըստեղծման,
Երբ երկինք և երկիր 'ի կայից սարսեցան.
Ջուրք յորդեալ Դեւկալեանք զափեզերս պատեցին,
Եւ սահանք երկնահօսք ըզբերանս պարզեցին.
Նաւագործ Նահապետն ա՛ռ 'ի քեզ ըզկայեան.
Մեր Մասիս էր յայնժամ աշխարհի որորան,
Ի Մասեաց այն դարէն էջ բնութիւնս նորաստեղծ,
Եւ աշխարհ կայ յակձիռս յիւրն 'ի մայր երկնաբերձ.
Նա 'ի սա ակնարկէր իբր յերկրի 'ի յերկին,
Զի բազում դիւցազունք զօդ սորա ծծեցին,
Ընդ քայլէր Քսիսութրէս դիւցազանց նահապետ,
Ընդ Տիտան և Զրուան, անդ արին մեր Յաբեթ.
Եւ անդ մեզ, իբր 'ի բնոյ քաջազանց դարաստին,
Գեղեցիկ շառաւիղք ո՛վ զիա՞րդ շաքլեցին,
Ընդ կոխեաց մեծ հսկայն մեր նախնին դիւցազանց,
Գանգրահերն այն խայտակն եւ վերջ Տիտանեանց.

Յետ սորա քաջազունք, որ 'ի վէպս հռչակման.
Եւ թէպէտ փոքր յանձու, գործ ցուցին անմոռման.
Մ՛եր Պերիթէսք, Կենէոսք, Պողիւփեմք դիւցազունք,
Լեռնաստան ընդ Պարկաց կռուեցան անմրկունք.
Ահ արկլին մահագոյժ չարաթոյն վիշապաց,
Եւ զեռնոց մուխ արեամբ տէգ շարժեն գեղարդանց.
Ուր պարծանքն առաջին հայրենեաց մեծն Արամ
Նիւքարայ արհաւիրքն ընդ հսկայն մեծ Բարշամ.
Ուր զունեանն Երուանդեան Հայկածին Աքիլլէս
Վիշապին ըզգըցունս ենթադրէր սուկապէս.
Ուր Վահագն Հերակլէս զոր երկին և երկիր
Երկնեցին ախոյեան վիշապաց մարտադիր.
Ո՛հ այլ շատ, իմ քընար, զիմ ըզքաջս յուշ ածեր,
Օ՜ ի մի յերգ քո յապայն ցաւ ածցես կարեվէր.

. . . . . . .

Ո՛վ այգի սիրելոյն, ցանկաստան, զարդարուն,
Տընկեցար յերեւան աշխարհի, ոչ յանկուն,
Տէր, ըզմէ քակեցեր զցանգ նորա ձողաբարձ,
Եւ ըզնա կըթեցին անցաւորք աշխարհաց.
Վա՜հ, խոզից անտառաց առաթուր նա հարաւ,
Երեոց վայրենեաց 'ի յարօտ կարգեցաւ.
Այսպէս տուն և դարաստ դիւցազանց երամին
Քակեցաւ, և Թորգոմ արտասուեաց ընդ Հայկին.
Եւ որպէս յանկարծոյն 'ի տաճար գեղապանծ
Շանթ հրացան բարկութեան հասեցէ 'ի բարձանց,
Անդ մարգակք հաստաբունք և պշրակք գեղեցիկ,
Եւ որմունք և պահանգք հրաբորբոք, և տանիք,
Կահք չքնաղք զերթ գերբուկք կուտեսցին 'ի յաճիւն,
Ահարեկ խուճապեալքն ողբ ասցեն և ճչիւն,
Սոյնգունակ հարուածեալ տուն Հայկայ դիւցազին,
Ահ, 'ի սպառ խորթնացաւ, հետքն անգամ չերեւին.
Կամ որպէս ճարակեալ ախտ 'ի մեծ գերդաստան,
Ախտ, սարսափ երկրածնաց, ախտ նըսեմ կուրութեան,
Անդ հարսունք և փեսայք, ծերք, որդայք բազմահոյլ
Յարեւու խարխափեն իբր 'ի ցայգ անըշող.

Սուգ և մութն համակեալ ընդ որմունս տաճարին,
Ձեռն 'ի ծնօտ գերարտօսր յորդ հեղուն 'ի յարկին,
Ձայն յողողմ այր ընդ այր կողկողին, ո՞ւր է լոյս.
Այսպէս ազգն իմ Ներսէր լալագին և անյոյս...
Գութ հարաւ Արարչին. «Մ՚ինչև ցե՞րբ այդ խաւար
Թախծութեամբ պաշարէ զԱրամեանն ըզգաւառ»:
Ձայն հնչեաց աստուածեան, «Հապա լոյս եղիցի».
Եւ եղև լոյս արհի ՄԽԻԹԱՐՍ արփենի:
Յոր ուղէշ քաջատունկ 'ի դրախտէն Սեբաստեան,
Աջն ըզսա Տէրունոյն մշակեաց հրաշազան:
Օդ սորա շնչելի, սիւգ դրախտին երկնաւոր.
Ջուր սորայն ոռոգիչ ցող Հոգւոյն արփաւոր.
Արմն յերկիր հաստատուն, բունն աճեալ տարածէմ,
Եւ գլխակ իւր առոց ծածկի յամպս երկնաճեմ:
Ազգերինս բարձրայօն բա ծածկեաց հովանին.
Եւ ըզմայրան Աստուծոյ բարունակը ծածկեցին:
Զի մինչ չև սա եղեալ՝ ծանուցաւ յԱրարչէ.
Ան ինչ մօր ընչեալ զօդ՝ ընտրեցաւ յարգանդէ.
Փորձեցաւ բազմադէմ ելանել ձոյլ ընտիր,
Բազմատանջ վըշտատես միշտ կենօք խաչակիր...
Վշտացաւ բազմատանջ իբր անօթն ընտրութեան,
Զի բնութիւնս համախուռն էր նորին ախոյեան.
Հուր և օդ դաշնակից, ծովն ահեղ և ցամաք,
Տան ճակատ դիւցազնս զու յուզեալ ըզժընդակ:
Վիշտ բազում 'ի գետոց յորդահոս 'ի ծըփման,
Մ՚րցեցաւ ընդ յաղթ ջուրս մինչ յոգխս ապաստան.
Վիշտ բազում և յալեաց լեռնաբերձ Պոնտոսին,
Զոր փըլոյզ Պաւղոսն եռարձէն 'ի ձեռին:
Փորձեցաւ համբերողն յարութեան պերճ հանդէս,
Կռուեցաւ անընկուն քան արին Ոդիսևս.
Վիշտ բազում և յաղցից 'ի մարմնոյս ախտակիր.
Տանջեցաւ, ժուժկալեաց այրն Հոգւով ծայրալիր.
Վիշտ անչափ և 'ի սուտ առ յեղբարց համազգի,
Եւ ժուժայր և ներէր նահատակն Յիսուսի...

Այն տայ 'ի փորձեալն յաւէտ տէրունեան ,
Առ ըղձա և չլքնալ եղ գործի չնչական ,
Ո՛վ , գործի փորձ զըստու 'ի ձեռին Աստուծոյ ,
Եւ տոլաւ գործք ցուցան հրաշակերտք և արգոյ ·
Ո՛ ըղձոյ , տուն Հայկայ , եղ խաղաղ ըղձահմանս ,
Եւ պարարտ ցորենով լից ըղձօ անդաստանս ·
Ո՛ ընխիղըս զրանդեացդ հաստատուր զօրացոյց ,
Եւ զորդիս քո 'ի քեզ առ Աստուած մերձեցոյց ·
Ի մըտից մինչև յեղոդ զլուրն ըղձան առաքեաց ,
Եւ պատգամքն ընթացեալք ձայն եասուն աւետեաց ·
Ո՛ ըղձեղ որպէս զար խըլու ձիւն բովխտակ
Յարդարեալ , և սրբեաց 'ի ժանգոյդ զըժընդակ ·
Շնչեցին հողմք սորա 'ի դաշտ քոյ արօտից ,
Եւ գնացին զետահոս ջուրք յորդեալք խնամոց ·
Ա՛ւ փոխան կորուսեալ քո զդրախտին փափկութեան
Նոր զարաստ քեզ 'ի մեւսս զայս տնկեաց Աենարան . . .
Զայս այսպէս արտաքոյ արուեստեալ այս ճարտար ,
Եդ տայ հրաշակերտս և զներքին իւր տաճար ·
Ի զէն զարդ սուրբ Հոգւոյն վառեցաւ տալ ճակատ
Ընդ հրեշից Ճիւաղաց 'ի հանդէս մենամարտ . . .
Կեանք խոնարհ վեհագոյնս խէթ ընդ ակն հըպարտին ,
Անըշխնեաց զշանթընկէց բիբս աչաց գազանին ·
Ա՛ կոխեաց զբարձրայօն պերճութիւն աշխարհի ,
Ջորձ փառաց արկ զանձամբ զըձձութիւն Յիսուսի . . .
Նա այսպէս 'ի հանդէս բազմացցի փորձութեան
Աուտ և եւ բաջաղէն արիւեան յաղթական ·
Իսկ կրօնից սրբութեան յինքն առեալ տոհմական ,
Զերկնաւորն ըզվարուց մեզ եթող ըղձերմանս ·
Որպէս մեծ անդաստան արմըտեօք ակաղձուն ,
Ընդ միոյ երեսուն , ընդ միոյ եւ վաթսուն ,
Ըամբէ , նա եւ 'ի ծայրն · ընդ միոյ և հարիւր ,
Եւ զամբարն լից զերկնից 'ի հատից բազմաբիւր ·
Նա զհաւատ իւր պահեաց , և զընթացսըն ելից ,
Եւ պըսակ զանթառամն առ 'ի գըլուխ անմահից ·

Կայ յերկնից և 'ի մեզ անքըթիթ ակնարկէ.
Եւ հրաւէր 'ի բարձունս հեշտալուր ձայն ազդէ.
“Ո՜հ, որդեակք, մի կարծէք, թէ խընդամ անվըթար
„Զև ըղձեղ իմ առեալ աստ սըրբոյն 'ի կաճառ.
„Թէ շաւիղ ըղձըրոց դուք կոխէք 'ի յերկրի,
„Կերձեմեալ նաւեսջիք և յերկնից տաճարի.
„Օրինակ ձեզ եսու նըժդեհեալս յաշխարհի,
„Զիմ դշխոյն տիրածին միշտ կալեալ հոլանի.
„Թէ միայն կեանք խոնարհ ընդգըրկէք, և ըղձէք,
„Ձեր երկինք են յաւէժ, յուսացէք անվեհեր.
„Լուայք դուք ապաքէն տէրունեան զբանին.
„Լիք աղքատք դուք հոգւով. ձեր է թագն երկնային.
„Թէ խնդրէք, զրոյց սիրոյն 'ի խանդից ձեր հոգւոյ
„Բորբոքել բարդ 'ի բարդ մինչ յաթոռն Աստուծոյ,
„Դուք 'ի ձեր հաստատածոյ մինչ յատակն 'ի ներքին
„Խոնարհեալք, և անդէն վերելջիք 'ի յերկին.
„Օրինակ ձեզ եսու և մարդից գիտութեան.
„Ո՛հ, որդեակք, հուրն 'ի ձեզ մի շիջցի աստուածեան.
„Արծարծեալ զերթ փըքոյք կայծակունս ըղձմանի,
„Եզձըրաղն իմաստից խուն նըշոյլ վառեսցի.
„Դուք արդ զամ քան ըզզամ մեծաջահ ղամբարք
„Ըզկայծակն յորդեցէք վառ յաւէժ և բորբոք.
„Եւ որպէս յիս տեսէք ձեզ տիպար գեղեցիկ,
„Ի վարժից անդ Հոգւոյն մի ուսմանք հոլանջիք.
„Վիրաժիր տուք ձեր զաջ 'ի յայգին տէրունի,
„Մըշակել տոհմականս ըղհոգւոյն արդանդի.
„Տուք աստ և զահեակ ձեր 'ի մարդս իմաստից.
„Եւ զազգին վարժարանս դիք արդեամբք պտղալից„.
Արդ լըւայք դուք, Արդյք, զհայրենին յորդորակ.
Մաղթեսցուք առ 'ի գործ մեզ օժան երկնաւորք.
Տեսանեմ կարկառեալ զաջ մերոյ Նախահօր,
Խանդակաթ տալ որդւոց զօրավիգ մեծազօր.
Եզէ, քաջք, զայս ձիր Հօր քաջանուր զէն առեալ,
Ոն ելցուք 'ի հանդէս նահատակք քաջախայլ։

Նահատակք 'ի կրծից կանանց պընդապահք ,
Նիզ նեցուկ տաճարիս լեալ յաւէժ պահապանք ։
Նահատակք երկնաւորք 'ի յընթացս հոգևոր ,
Հեզ խոնարհ Նախահօրս հետևեալք անխոտոր ։
Նահատակք և 'ի վարժս ըզմխեռանք ելանել ․
Շատ են վարժք իմաստից ․ քան , անտես մի առնել ․
Ոմն յիմաստս աստուածեան , ոմն 'ի վարժըս բնական ,
Կեան յաշխոյժ Պառնասին , կեան 'ի գիր Հայկական ․
Մի՛ և զայն մոռասջիք ․ նահատակք մեր յազգին
Ըզգաստեր բարոյիւք մեր նըման վեհազին ։
Օ՛վ դու , Հայր , որպէս երգն իմ երգեաց 'ի սկըզբան ,
Ընկերեցար ծընընդովք , ընկերեսցիս և յապայն ․
Բայց և ինձ գութ արկցես 'ի խանդիցդ , ով Հայր իմ ,
Զիր առատ տացես զաջդ ինձ որդւոյ քոյ վերջին ։

1843

---

ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՅՆ

ԱՐՁԱՆԱԿԱՆ

Ե՛կ աւիւն , հուր յերկնածին եկ վառեա սիրտ զանաւաղ ,
Օ՛ երջանիկ զիմ Նախահօրն հանդիսիցն առնուլ նըւագ ։
Բա՛րէ , տէր , զինչ տեսանեմ՝ Նոր դիւցազն այս Փարոսին ,
Ո՛ն և ո՛ն , ջրածին հընոցն գերաբուն 'ի հանդիսին ։
Նա 'ի փայտն 'ի յանտառէն շունչ հնչեաց , բայց և ամբան ․
Սա զերեսն ըզմարդակերպ առ փոխեաց եդ բանական ․
Թէ 'ի ցուպն իւր հովուական նա ըզմարդ սուզեաց 'ի Թափ ,
Սա 'ի փայտն տէրունական զանմարմին ջախեաց վիշապ ։
Ոչ ամաց յետ հարիւրոց զայս ծագեաց սա անվըրթար ,
Ու խաւար ըզհազարաց եղծ այս մեծ ՄԽԻԹԱՐ ։
Թէ զՅակոբ նա միանգամ ջուր անցոյց ընդ վայրափակ ,
Յանդ անթաց ըզծովն անհուն տայ կոխել այս Նահատակ ։

Եւ յերկիր 'ի ծաղկընկեց խաշին իւր տայ ըղձորդան ,
Բայց յաւէժն 'ի կայս փոխէ անմահիցն երանութեան ,
Ով ըղձեղ վէմ անձնուէր նահապետ այս ընտանես .
Եդ սանդուղս ձեզ ո՜ հրեշտակք , ել և էջս 'ի նոր հանդէս .
Իջանել 'ի բունըն մեր , զխոնելով զհողոյն հաստուած ,
“ Քանզի էջք խոնարհ հոգւոյն , են և ելք 'ի վեր յԱստուած „ ,
Զայս ուսոյց մեր Նախահայրն յարգասեացն իւր հաւատտիս ,
Թէ “ որ շուք առ յԱստուծոյ , նախ խոնարհ գլուխ յատտիս „ ,
Մեզ , ո՜վ քաջք , այս մեծապէս է այսօր նաւակատիս ,
Թէ 'ի վարս մեր Նախահօրն միշտ նորեմք ըղձեր հոգիս ,

1832

---

### Ի ՀԱՐՍԱՆԻՍ

# ՄԵԾԱՑ ՊԱՅԱԶԱՏԱՑ

### ԲԱՐԵՐԱՐԱՑ ԱԶԳԻՍ

Եւ ինձ Հիւմենէս նուագ բերկրանաց ,
Նոր ինձ հար քընար ահա եհաս քաջ .
Պըսակդ են ծաղիկք ջահդ է բոցավառ ,
Քօղ յաջ և յահեակ արկցես լուսազգեաց .
Եհա քեզ կուսանք , ահա քեզ փեսայք ,
Սրբօք քընարիդ ըղլար զարդարեաց ,
Ընտիր 'ի քոյոցդ հայցեմ ինձ նըւագ ,
Հեշտեակ ինչ մեր մի տար լսելեաց ,
Դաշնայ Օրփեւոս , սիւզք անոյշք դառնան ,
Դըլեան ձըմերուհք , գայ արիւն գարնան .
Իբր 'ի բուրաստան քաղցըր գերդաստանք ,
Քերթողըն դաշնոյն երգէր , թէ խայտան .

Ծիծաղին և մարգք և օդքըս փայլէն ,
Մի լացցէ Պրոգնէս , մի և Փիլոմէն ։
Ի մի սոսկապան Փեբոս և Աստղիկ
Հոլովին զաշնան կառքըն քառաձիգ ։
Օդ , ջուր , և երկիր , ո՛հ , հուր տարրական ։
Ամուլք երեքին , թէ դու չես օձան ։
Զի և անքըննին վըճիռ աստուածեան
Սահման զայս հաստեաց սեռից շնչական ։
Ահա դառնայ կոյս , դառնայ և փեսայ ,
Մեծին քերթողի ձայն տուք Վիրգիլեայ ։
Պարէ Տիբերիս յալքայից հանդէս ,
Հիմ , ծընունդ Գեղփեան , և ոչ Եփրատէս ։
Եւ իմ քերթողիս ժըտեցայց թարգման ,
Աչք իմ զոր տեսին , ոչ լըռէ բերան ։
Չասեմ ես արքայ , որ թագիւ պանծայ ,
Զի և անուագք են 'ի նոյն սահման ։
Չեն առ իս արգոյք ծիրանեաց ծընունդք ,
Այլ որ արժանի է գահ յարքունեան ։
Արժանք անարժանք արքայ ծընանին
Եւ ծնեալն արժան է առաքինին ։
Արդ դու ինձ Մասիս լերանց թագաւոր
Խնդա վերբերող Բոսուսիթրեայ լատին ։
Խաղացեն ծաւալ աղբիւրք Բիւրական ,
Պարծցի իմ Նախնոյն դարաստ Եղիսեան ։
Հալեսցին անզբաւ ձըմեռք Կովկասայ ,
Յանդ զալար մնասցէ մարգն Այրարատեան ։
Անդ և փառազուն յաւերժահարսունք
Պճնասցեն խայտալով 'ի դաշտըն Մասեան ։
Բայց և այլ նուագ առցես ինձ ով քաջ ,
Զի և մահուն ես եղէց յաղթական ։
Ո՛վ անգութ զօրող դեղնեալ կերպարան ,
Զի ըզգոյն գեղոյն թափես ըզմարդկան ։
Ահա ես մահուդ մահ անմահական ,
Ընդ իմ ըզհամբաւն՝ յարուցիչ դամբան ։

Ձեր սիրտք, ով քաջք, պատմուճան փառաց
Արկեալ սիգասցեն հանդէպ թշնամեաց.
Կամ լիցին նոքին 'ի բարեկամաց,
Եւ կամ ըղձեսցին զամօթ կողմանց,
Արդ թողեալ զերկիր, զի սուտ ամենայն,
Դարձ, երգ իմ, դարձիր յոգւոյս պահապան.
Զօրս ուղիղ սիրեմ, Ուղղոցըս մաղթեմ
Գանձ ոչ ցեցակեր, գանձ անապական.
Յօղ դոյա, երկին, ցօղեա օրհնութեան,
Որ աւազք ծովու և աստեղք խանդան.
Բարգաւաճ սոցա ծընունդ քաջազգի,
Տեսցեն ազգք, տեսցէ ազգն իմ Արամեան.
Ո՛վ, եթէ սոցա բիւրուց դիւցազանց,
Շատ դիւցազնուհեաց կայցէ զերդաստան.
Ճրագ եօթնաջահեան յանդիման Եփդ
Վառ կայցեն իբրև ըզզարմըն Դաւթեան.
Յանդ մեր տուն Ուղղոցն եղիցի ով տէր,
Եօթնարփի լուսով անշէջ յաւիտեան.

1840



### Ի ՍՈՒՐԲՆ

# ԴԱՒԻԹ ՄԱՐԳԱՐԷ

## ՏԱՂ

Սրինգ անման դու աննախանձ համասփիւռ
Շնչեցեր յանդորրաւէտ 'ի զեփիւռ.
Երգ և զարդ մութ անդընդոցն ահաւոր
Դողդողալով ետուր տխուր լուսաւոր.
Դարձ և յիս խնդամիտեալս 'ի յանունդ,
Կերպացո զանկերպարան զիմ անդունդ.
Ո՛վ զիարդ միտք վարանին հողածնաց
Ի լսել ըղձել քոյին նուագաց.
Նըգերաւք անդ խղճեցին տասնաղեաց,
Եւ հնչմունք կերկերեցին սրընգաց.
Ոչ բամբռանց ոչ կիթառաց հանդերձանք
Բաւմ ձայնի ոչ կրկնեցին արձագանք.
Զինչ ասաս, վառեալքս անշէջ քեզ տալ շուք,
Ըզքոյին գէթ սիրելեաց թելն հարցուք.
Սերափին հասս կացցէ 'ի միջի
Նայն արանց “Նայն ըստ սրտին տեառնի”.
Բայց համայն միտք իմ դարձեալ դեղեւին,
Ի սորայն բազմաբեղուն պարգեւին.
Որպէս մարդ յոգնաբուրեան բուրաստան
Ընձկայրեաց դիտեալ 'ի մեծ հեռաստան.
Մօտ եկեալ և անարգել մտանէ,
Ճեմ առեալ և անքթթիթ ակնէ.
Ի խորհուրդս իւր վարանի 'ի զընին,
Զոր վերջին կամ զոր տեսցէ առաջին.

Զի հանդուն լի է ծաղկօք համատարած,
Եւ բուրումն յեթերն հարեալ է անգամ.
Ես Դաւթի երգ զո՞րն առից 'ի տաւիղ,
Համասփիւռ զայն արփենւոյն շառաւիղ.
Ո՞ տայր ինձ ըղնոյն գաւթեան տամնաղի,
Որ գլեալ զձգէ զքընար փեթողի,
Սեղ Դաւիթ վեհ դիւցազանց 'ի դասուն,
Վեհ փառօք, վեհ զօրութեամբ և հոգւոյն.
Գուշակաց համագումար վեհ գուշակ,
Ըզչեղեալս գիտէր իբրև նախեղակ.
Ասա՛ դու. Աւետարան, ու Սաղմոս,
Զի երգէ ու իբր Յովէլ կամ Ամոս.
Թնել բախէ յիւր ապարանս արքունի,
Եւ ինքն է 'ի Գողգոթա առ խաչի.
Բազմեալ կայ ծիրանեփառ 'ի գահին,
Եւ ձորձք իւր 'ի մէջ դահճաց բաժանին.
Բայց քայլէ բազում շարժէ անվեհեր,
Եւ ծակին ձեռք իւր և ոտքն 'ի բեւեռ.
Ծարաւեալ ճաշակ առնու քացախին,
Եւ խաչեալ գոչէ զէլի և զէլին.
Ո՛վ հրաշից սրտառու ոգւոյն զերարփի,
Որ յանգոյն իբրև յեղեալ ինչ յառի.
Զինչ ասեմ զառաքինւոյն ես ամբիծ
Ըզգենաց զարմանազան հանդերձից.
Վեհ ինձ բարքն անոխակալ առ Սաւուղ.
Ըզզրժանն համարեցաւ իբրև շիւղ.
Ո՛վ, տեսիլ մեծ էր յայրի անդ կրկնում.
Ուր Կփսեայ ննջէր որդին խոր 'ի քուն.
“ Զինչ գործես. կարճեա ըզձեռնդ Աբեսսա.
„ Դա սուրբ. բայց և օծեալ է արքայ.
„ Այդ վիրաց արեան խնդ ծարաւի.
„ Ես զորա փրկեմ զմարմինն և զոգի „.
Հիացաւ խառն ընդ երկիր և երկին,
Նորաքանչ ընդ հեզութիւն դիւցազին.

Ո՛վ, քանի և հուր սրտին բոցակէզ
Հիացոյց զերկնաձեմիցն ըղձանդէս .
Սերափի վառեալ սիրով անմահին ,
Ի մարմնի անկէզ իբրև անմարմին .
Այլ ընտուից երգն իմ' գլուխ գեղյարգոյ .
" Այր է նա Այր ըստ սրտին Աստուծոյ ,, ․
Այս հանդէսք նորա յաւէժ ձօնք երկնի .
Բայց և զայլ խնդրեն մանկունք աշխարհի ․
Քաջ է ․ Ո՞չ բիւրուց վեհ էր 'ի մարտին ,
Որպէս երգն էր պարանցիկ գուսանին .
Ո՞չ և վեհ քաղաքագէտ կառավար ,
Ո՞չ ներհուն ընտրեալ բիւրուց զօրավար .
Սիրտ նորա իբր առիւծու հաշեսցի ,
Բաշապանծ որ մռնչէն 'ի դաշտի .
Մէհ 'ի մէջ երեսաւոր կորովեաց ,
Ահ արջուց և առիւծուց ամեհեաց .
Հերակլէս 'ի համանմանն ոչ խնդայ ,
Աքիլլէս , թէ զոյգ ունի ոչ խանդայ ․
Բայց ծն մեք յառաջ անցցուք յայլ հանդէս ,
Զոր և դարս այս համբաւէ մեծապէս .
Ո՞չ Ճարտար Յեսսեայ որդին իմաստուն ,
Եւ քերթող 'ի Սաղմոսին գերարուն .
Ո՞ւր Սոփոկղ , ո՞ւր Եւրիպիդ , ո՞ւր Պինդար ,
Թէ յանկարծ հարցէ Դաւիթ զիւր քնար .
Օ՛ն և օն կամ 'ի փախուստ խուճապին ,
Կամ ափշեալք ըզպարտութիւն դաւանին ․
Երգահան դու Բարձրելոյն քնարահար ,
Յաղթական բանահիւսիցն 'ի գումար .
Ի ձայն քո զուարթունք երկնից պարեցին ,
Եւ զմբեալք Նեսալք և Այսք սաքրէին .
Ի ձայն քո իբրև յառուին գեղահոս
Ըզմայլեալ յակձիոս կացցէ Պինդարոս ․
Աջէկէղ կոծն և աշխար , զոր քերթես ,
Եւ ըղձեհն յոգի հարցէ Սոփոկղէս .

Երբ կըցին քըյն ակերք 'ի մարմին ,
՝Ըմմնեալ հաւալըսան 'ի վայրին ,
Եւ լինիս որպէս ըղձու յաւերակ ,
Եւ տքնիս իբրու ճնճղուկ 'ի մարդակ ,
Բշմնիկր ուտես որպէս նըկանակ ,
Եւ խառնես քո արտասուօք ըղբաժակ ,
Օ խո՞րդ ոչ աղէք մարդոյ գալարին ,
Լըեալ զողբ նժդեհացեալ քում անձին .
Իսկ թէ լաս գքոյդ Յովնաթան նահատակ ,
Լացուսցես և զԽուրխվիդ ողբերգակ .
Հրաշալի երբ մասն հարուս յողբերգել
“Ո՛ն , յարտօր , արձանացիր Իսրայէլ .
Ի լերինս ելեալք Գեղբուայ յերեւան ,
Զայն ողորմ առէք 'ի ջայլ դառնութեան .
Յովնաթան , աւա՜ղ , ողւոյս իմ հատոր ,
Ընկեալ կայ յարտեանիդ վիրաւոր .
Զայն կարդաս . զի՞նչ գործեցեր , մահ անգութ ,
Եւ լալեօք զարիւն ջնջես նազելոյդ .
Ո՜հ , Գեղբուայ լերինք խոժոռք մարդախանձ ,
Գոյք անջուրք խորխորեօջիք 'ի հինանց „ .
Այսպէս սա շնորհին Ողբերց բիւրակնեան
Վերընկալ իբրև Եղեմ շնչական .
Եւ յոգին և 'ի մարմին և 'ի բան ,
Հրաշացաւ իբրև գիւցազն աննըման .
Արդ Դաւիթ յորժամ ասեմ , զո՞ ասեմ .
Ով ըղմարդ , յերկրէ Երկրոք երկնամձեմ .

1841

ՅՈՂԲԵՐԳՈՒԹԵՆԷ

# ՍՐԲՈՅՆ ԱԲԳԼՄՍԵՀԻ

## ԵՐԳ

Դալարագեղ սօսեաց անտառ,
Շարժեա զըստուերդ յանդիման.
Մանկանցս երանք ընդ հովանեաւդ
Պատէին հոգւով միաբան ցնծութեամբ.
Քրիստոնէից մանկունք մատաղք
Յարօտս ելեալ զուարճանան.
Փունջ խուռներամ ըզվարդ շրթանց
Վերառաքէն յերկնաձեմ այն խորան.
Այն օդագնաց երկնից բնակք
Թռչունք խօսնակք բերկրաձայն,
Որք սաւառնեալ յեթերս վերին
Նստայք 'ի ծառս ձագախառն բազմութեամբ,
Ընդ մեր տաւիղ ըղձէր քնար
Դուք շարժեցէք բերկրաձայն.
Որով օրհնի յերկուց գոյից
Ստեղծօղն էից անմահից մեծ Արքայն.

1802

## ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՅՆ

Նա՛յ մեր եղբայր ցանկալի, սիրտ մեր սիրովդ այրի.
Լռեալ նստար 'ի յարեան, հեծէ տրխուրս մայրի.
Նայս քո եղբարց ցաւագին Թանայ արտօսր զանտառ,
Շուշան ծաղիկ լուսաւոր, գունով արեան ներկար.
Նա՛յ լուսափայլ մարգարիտ, ցօղով արեանդ ծածկեն,
Նայն ոսկեթել հոյլք վարսիցդ, յարեան քում թաթաւեն.
Մեր շառաւիղդ լուսարփի, յերկնից ծագիս խորան,
Նայք մեր աչս խաւարին հեղլով զարտօսր արեան.
Նայլ դու անմահ ողջակէզ, սիրով սրբով զլինեալ,
Լէր քո եղբարցդ բարեխօս, լիցուք ընդ քեզ դասեալ.

---

ՅԱՐԿԱԾՍ ԻՒՐ

# ՈՂԲ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԲՌՆԱՑԱՆԴ

Երգ իմ և քնար դարձաւ յաւաղ
Օ խմբդ հօտիս կարդամ տաւաղ.
Նա քողազգեաց ցաւով այրի,
Մանկտիս թափառ յանշէն վայրի.
Թէ յօգն ինձ չէ բաղուկ քաջին,
Իմ միակ յոյսն է 'ի խաչին.
Նորքէն ընդհօտս ասցէ փարախ,
Նա և ես փնտրայն սրբեմ Թարախ.

Դարձցի մանկութիւն իմ քաղցր անոյշ,
Օ՜ֆ չէն 'ի բերդն յղեալ Անյուշ.
Նա աշխարհիս տամ երանի,
Որպէս երբեմն էր մեծն Անի։
Ա՜հ, ծնգասէր գեղջ հարսին,
Պերճ ծամանկալքն առան վարսին.
Յառագաստին չէր անդ փեսայ,
Նա արհաւիրք 'ի նմա տեսայ.
Յանկարծ զայն պիղծն հարսը սեղեխ
Տապարն ուժեալ յիւրն 'ի մեղեխ։
Պըղլինձ սարեօք անդ յարգելան,
Դփռեմ աղկք նորին գելան.
Իւր ներքինեաց սեւոց դասուք
Ընդ Թափեցլին դառն արտասուք։
Շըշուկ մահու ձնոլաւ հարաւ,
Խանձեաց խորշակն որ 'ի հարաւ.
Ո՞ւր է, ողբայր, իմ ծիրանի,
Որ այժմ 'ի մութ թուխ ներկանի.
Նա իմ պայծառ ո՞ւր առագաստ,
Չիք խոյր վարսից, և չիք թագ աստ։
Յարեան որբոցըն, անօրէն,
Սասանեցար դու յայն օրէն.
Ճարակեցեր մահ յԱզուլս,
Հարամանւոյն նըման մոլխ։
Օ՜ֆ իբր ըմբիշ զափ ընդ աւաղ
Շըփեաց և առ մեծ փարաւաղ.
Կարծեաց յաւէժ նստել արքայ
Ողջ աշխարհի, որպէս Հարքայ.
Կարծեաց զիմ ճեռան առնել աւեր
Դարշ յապահարն իւր անվաւեր.
Ընդ ծիրանւոյն արկեալ կապերտ,
Դարձի յանյուշ բերդն 'ի Բաբերդ։
Արդ ո՞ւր իցեն ձեր ճեմելիք,
Ո՜չ շատ խակ դուք 'ի ճեմ ելիք.

Արբջիք նստեալ մանկեայ յակումբ
Ըզմօղեխինդն 'ի միակ ումբ .
Ապա անդամ յօշեք անդամ,
Նոր աշխարհի լեցի անդ ամ . . .
Զերծան նեղեալքն 'ի Մելիտին,
Իբր ըղձ Յովնան 'ի փոր կիտին ։
Նաւքըն թեւեան հողմոյն յօձան,
Առագաստիցն հարսն ձօձան .
Անդ մօտ նոցա ծափս հար Աթոս,
Մեծ հեռաստան ցնծայ Պարոս ։
Սա գետահետ մերն յԵփրատէս,
Տայ աւետիս մինչ 'ի Գանգէս ։
Խայտայ եւ մեր Երասխն աղբիւր,
Նուաղ ընդ գետ գործէ խաղ բիւր .
Անդ ծառք փարեն ըղձափինայ,
Լուսին պատար տայ զարփ 'ի նայ .
Մանկունքն արձակ գընան Հայոց,
Զի արջն ահեղ մուտ 'ի բայոց ։
Նա մեղ 'ի թաւ սոս յանտառին,
Կայթ, գիլ, գոփիւն, քաջքն անդ առին ։

1828



# ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

## ԽՐԱԽՈՅՍ

### Ի ՎԱՐՏՈՒԹԻՒՆ ՏՈՒՂՐԻԼԱՅ Ի ՄԱՆԱԶԿԵՐՏ

### ԲՌՆԱՑԱՆԳ ԵՒ ԲՌՆԱԿԱՐԳ

Զարթի՛ր նիրհեալդ իմ սէգ առիւծ ,
Հար ըզգազանս մանրեա և հիւծ .
Զահեղ կորիւնդ 'ի գարան մայծ ,
Նա յարագաղ շաղեա յանդայծ :
Գոչէ ըզգայլոց արկ ըզվոհմակ ,
Բաշխիք ձեռովդ հար ըզգաւակ .
Ի գէշ նոցայն , յարեանց մանկոյդ ,
Նկայք արծիւ , անգղ , և քարարդ :
Գըլուխ տարւոյդ հաս նաւասարդ ,
Վառեաց հայկազն 'ի զէն 'ի զարդ .
Հաստահարուստ իբրև բարտի ,
Ճօճեա ըզտէգդ որպէս պարտի :
Թագիդ , բա՛բէ , եհաս գարուն .
Դու յարքայից անց 'ի պարուն :
Քո երկնաձեմ սար 'ի Մասիս .
Եհ արկանել ազգաց կասիս .
Զի ցնծասցէ քաջն իմ Արամ ,
Նա մանկըտոյն նորուն երամ :
Ո՛չ լխասցին իբրև Շարայ ,
Իցիւ աւէգք կանգնեն զԱրայ .
Զի գող մեղուդ Տուղրիլըն բոռ ,
Տապաստ մեղուացն անկցի 'ի գոռ :

Եւ դու ըղձագդ առցես, Թորգոմ,
Ճաճանչ հասցէ չիջեալըդ մամ.
Դու բարձրասցիս գեղով նոճի,
Որ 'ի զեփիւռ անուշ ձօձի.
Օ՜ի սանդարաց ահա 'ի գիւղ
Իբր ըղկապար սուզաւ Տուղրիլ.
Յանդ անդ կաղկանձ հանցէ այն շուն,
Դարուն, ձըմեռն, յամառն, յաշուն.
Իսկ դու արի խնն անարատ
Դըղուխ ազգաց մեծդ Արարատ.
Յորոյ ձակատն ակամբք 'ի յոյր
՝Նախկին ըղձագ կապեաց Դարոյր,
Արա գունեան խարտեաշ Տիգրան
Որ վիշապաց արկ ըղձիրան,
Իբր ընդ եղէգ բոցոյն հըրատ
Տարաւ ըղձագն անցոյց զԵփրատ.
Փառք մեր և Թագք, Անի, Դուին,
Ձեզ առանցիկ ձառք մեր Թուին.
Ի Մանազկերտ այր 'ի Կեղտաց
Հրացան յանկարծ ետ բաբանաց.
Դիւտ փրկաւէտ յայն ձարտարին
Ձայն Մանուաղ ետ առ խընդին,
"Ահա զանդիկն յիւր ատրուշան
Խանձողեցաւ 'ի պաշտամանն".
Արկ Հայն 'ի Պարսս ահ զիւր և հոյն,
Նըրբեք այնպէս ոչ սարսեաց Յոյն.
Այսպէս հրապարակն անկան տապաստ,
Խաղեալք 'ի շանթն յայն մեծասաստ.
Դիւր և վշտիդ տամ հաւատար,
Դերիդ արքայդ իմ Սանասար.
Ահա ոտիդ ոչ տայ ըղձիկ,
Իբրև ձագար աղգըն Պարսիկ.
Օ՜ի իժ վըիժուն ըղբաժակն արբ,
Եւ իգակերպ Թովեցաւ քարբ.

Կարդա զնոսա և յայլ տարաղ,
Մազր, և յոլաղ, խնձ և վարաղ.
Զմանկունս նոցա հար ըզքարի,
Եւ ոչ քաղցուն տացես զարի.
Քանզի գրեցան 'ի կրօն անպէտ,
Որպէս մոգեաց Զրադաշտ դենպետ։
Յերկնից արփի նոր ծագեաց աստ,
Երվան, Դավրէժ, դարձան զարաստ։
Հետք չերևին ընձուն, վագեր,
Զայս աւետէ հարսըն տագեր։
Բայց դու երից մեծ գերդաստան,
Թագաց կապող իմն Հայաստան.
Ու ըզմանկութիդ նոր արարած,
Ու ժողովեա ցուն Արագած.
Որկ ըզգըրգըլն նոցայն 'ի փոս,
Տուր ձորձ պայծառ, հան յԱլխմբու։
Զինչ այս Մ ըրցըք նորք մեզ բուսան.
Զինչ առ տոքոք իցէ զուսան,
Ահա արձակ շարժեն ըզքայլ
Զի Պարս ոչ այլ կաղկանձէ զայլ.
Խորտիկ խնդրեն, ոչ տապնալթան,
Բաժակ քամեն զինւոյն Պողթան.
Ի կողմն անկեալք բարձին սընար,
Հարուն բամբիռն և ըզքընար.
Յընչաց քերեն զաղցըն Սասան,
Զանոտ Բիւրասպն այն վիպասան։
Յաւերժհարսանց կան առ երի,
Աոյգք քան սէգք 'ի Մարերի.
Դփտեն զիւրեանց գեղն յաւազան,
Դափնւոյն դանձան 'ի զաւազան.
Կեպն 'ի դաշնակ բամբռան լարի,
Եւ այլք տան կայթս 'ի դալարի։
Զի բուռն Աստուած զարտօսրն եհատ,
Արկ ցիր զտոհմն իւր յուսահատ.

Տապաստք 'ի դաշտս անդ 'ի Սարանդ,
Գունեն յարիւն ըզգեղ մարմանդ...
Այս թըշնամեաց մեր կատարած
Յերկրէ յերկնից դող վըտարած....
Լուր զայս, Թորգոմ, յերգն իմ յուսա.
Զայս ինձ եցոյց իմս Մուսա.
Արագ արագ երկնից օձան,
Գներայդ Հայկայ անցէ վախճան.

1828

---

### ԱՌ ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ՊԱՏԱՆԻ

# Յ. ԳԱՐԵԳԻՆ ՏԱՏԵԱՆ *

## ՏԱՂ

Զո՞ր նըւագ քեզ առից, հրաշակերտ Գարեգին.
Զո՞ր սրտիս իմ պարգեւ քեզ ըղխենդ բերկրագին.
Արծաթոյ չիք իմ ձօն, չիք իմ մէտ եւ ոսկւոյ.
Զի՞նչ ոսկի, զի՞նչ արծաթ. չիք ընծոյ պըղնձոյ.
Խերեւէշ զայս ուսմկէտ ըղշափեալ զիմ ձօնեմ,
Զխղձս անկեղծ յարգեսցես նաղելիս Գարեգին.

Արդ վըտակ առ վըտակ խայտայ յիւրն 'ի Վարդգէս,
Բարձր 'ի գլուխ քան Սենա, քան Թամիզ՝ Եփրատէս.
Ընդ ուրեմն 'ի դայեակն իմաստից յԱթենայ,
Թորգոմեան պատանիք սանք ուշիմք Մեսրոպայ.
Յաղթանակ կանգնեսցին մանկըտւոյն Եղլադայ...
Ո՛վ դար ինձ տարփալի քան զոսկին Սոփերայ.

* Որ ուսումնական յաղթանակաւ ալքունի հրովարտակին գարձ առնէր 'ի փարիզոյ 'ի հայրենիս անդր ընդ Վենետիկ անցեալ յայց Վանացս.

Իսկ և արդ, նախ երկին 'ի յերկիր կըցեսցի,
ՙՆախ յԱտլաս և յՈւրալս Սկանդինաւոյ խառնեսցի,
ՙՆախ Հնդիկք 'ի սպիտակ աճառաւ ձիւնասցին,
Ապա զարմն Յաւանայ գըլեսցէ թէ զՀայկեն.

Մ՛ի գրաւէք, մի հանքու, մի արծաթ կամ ոսկի,
Մ՛ի և շուք, գրաւեսցես զսիրտ ազնիւ Գարեգնի.
Որ ըստեղծ զսիրտ նորա, նա նորայն է ժառանգ.
Արարչիդ, ով Որդեակ, տուր ըզսիրտ քո միակ.

Դու օրհնեալ շառաւիղ տնկեալ յաջ Բարձրելոյն,
Երկնուղէշ իբրև ծառ, տունկ պտղովք ակաղձուն.
Պահ դիցեն քեզ սրովբէք զերթ ծառոյն Եդենայ,
Սրապարփակ բոցարձակ պատնըշաւ գերակայ.
Դրժեսցէ քեզ ոչ մարդ, և ոչ օձն անմարմին...
Լուր, երկին, պաղատիմ, լցցես զուխտ իմ սրտին.
Այս ընտիր Պարմանի ազգիս փառք յաւիտեան
Իւր և մեզ առբերցէ երանիս անպայման.

1846

### ՅԱՆԿ ՔԵՐԹՈՒԱԾՈՑ

### Բ ՀԱՏՈՐՈՑ

# ՏԱՂԻՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

## ՏԵԱՌՆ Հ. ԳԱԲՐԻԷԼԻ ԱՒԵՏԻՔԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ


Ի մենամարտութիւն Տրդատայ և Հաչէի . . . . . . . . . 7
Ի դուստրն մեծին Վարդանայ յերանուհին Շուշան . . . . . . 9
Յաւէնին Յաղթերգի Գարեգին Սրուանձտեան . . . . . . . 10
Ի մեծ սպարապետն Հայոց քաջն Վարդան . . . . . . . 12
Վահանայ 'ի յաղթական չու առ Նիխոր . . . . . . . . 14
Մօրն որդոյն Աշխարհանոսի Նշերերդ . . . . . . . . 15


## ՏԵԱՌՆ Հ. ՄԱՆՈՒԷԼԻ ՋԱԽՋԱԽԵԱՆ

### ՎԱՐԴԱՊԵՏԻ


Յաղթանակ Աւարայրին, բանայանդ . . . . . . . . 19
Ի վերայ լեզուի բան . . . . . . . . . . . 21
Ի պարաւագիրս Նախնեաց Երգիծաբանութիւն, բանայանդ . . . . 25
Մուսայն առ Արամեան քերթողս, բանայանդ . . . . . . 33
Առ Աւան Սիսակեան գանգատ Պաւանոսեայ, և դատաստան Աղուանի . . 41
Յանուսումնասէր բարս մերազնեայց որդեաց, բանայանդ . . . . 42
Յարգ ուսումնականաց յԱզգին . . . . . . . . . 44
Քերգողն առ Մուսայն, բանայանդ . . . . . . . . 46
Ի պէսպիսութիւն բարուց և վիճակի . . . . . . . 48
Առ ուրացողս աստուածային անեղութեան, բանայանդ . . . . . 49
Յանձն ապրինի, բանայանդ . . . . . . . . . . 50
Առ Մենակեաց . յաղթող անձնայնի աշխատութիւն, բանայանդ . . . 51
Գեղջկական և քաղաքական կեանք . բանայանդ . . . . . . 52
Յեց ոսկերաց սիրտ հոգած . . . . . . . . . . 55
Առ Մենակեաց քերթողակից, բանայանդ . . . . . . . 57
Բողբոջ կեից կուրացուցիչ մեայ . . . . . . . . . 59

Ընտանութիւն, առ Մենալքաս . . . . . . . . . 61
Գովեստ Յուդայ, բանայանգ . . . . . . . . . . 62
Պարսաւ Յուդայ, նոյնայանգ . . . . . . . . . . 64
Առ Աւան Սիսակեան վէճք ընդ պարսաւն Յուդայ, նոյնայանգ . . . 65
Լիկիտաս առ Ալեքսիս, բանայանգ . . . . . . . . 67
Մահ. բանայանգ . . . . . . . . . . . 68
Հարսն աղաչաւորող առ Յիսուս մանկիկ. 'ի նոյն յանգ բանագրոս . . . 69
Յիսուս մանկացեալ առ հարսն աղաչաւորող. նոյնայանգ . . . . 70
Ի ծնունդ փրկչին. նոյնայանգ . . . . . . . . . 71
Առ նոյն Յիսուս, 'ի նոյն յանգ . . . . . . . . 72
Առ Մահ' յիշատակաւ Տէրունեայն . . . . . . . . 73
Յիսուս ձգեալ բանտարկ 'ի Գողգոթա. 'ի նոյն յանգ . . . . . 74
Ի ծնունդ սրբոյ Աստուածածնի. յառաջին յանգս բանագրոս . . . 75
Ի նահատակութիւն սրբոյն Ստեփաննոսի. նոյնայանգ . . . . 75
Առ Սոխակն, 'ի նոյն յանգ . . . . . . . . . 76
Մեղու. 'ի նոյն յանգս բանագրոս . . . . . . . . 77
Համաշունչ երկասիրութիւն' առ Վրույր Քերթող. յառաջին յանգս . . . 77
Ունայնասիրութիւն, 'ի նոյն յառաջին յանգս . . . . . . 78
Յերթ Ղարամեան Ռափայէլի ասպետի 'ի Պոլիս նուագք քառեակ 'ի նոյն յա-
ռաջին յանգս բանագրեալ . . . . . . . . . . 79
Տօնակք Մեհեանդին, առ աւանդատու Քերթողն, 'ի նոյն յանգ . . . 81
Յետադարձ Մեհեանդին, առ Վրույր տուիչ յանգայն . . . . . 82
Ունայնութիւն մարդկային անարժակաց . . . . . . . 83
Աշխոյժք 'ի Քերթողութեան. բանայանգ . . . . . . . 84
Ի տատարիչս Ռոլենեան հնախօսութեան, բանայանգ . . . . . 85
Ի նոյն, բանայանգ . . . . . . . . . . . 86
Ի նոյն բանայանգ . . . . . . . . . . . 87
Վիճակ Քերթողաց. բանայանգ . . . . . . . . . 88
Առ Սիսակեանն Աւան. բանայանգ և բանակարգ . . . . . . 89
Առ Սիսակեանն. նոյնայանգ պատասխանի . . . . . . . 90
Յուսով խաբինք . . . . . . . . . . . . 91
Յամենայնի խոհեմութիւն . . . . . . . . . . 91
Գարուն . . . . . . . . . . . . . . 93
Ի ծնունդ փրկչին. Արտավար առ մեղու տուարածական . . . . . 95
Կատակ մեղուաց . . . . . . . . . . . . 99
Ի տապան Աբէլի եղբերգ . . . . . . . . . . 100
Առ Աստուածապատիւ Հոգևոր Տէր. 'ի մուտս նորոյ տարւոյ . . . . 102
Առ մեծարգոյ Տէր Հ. Գաբրիէլ Այվազեան վարդապետ, Արժան սիրոյ . . 104
Առ Աստուածապատիւ Հոգևոր Տէր Սիւնեաց նախագահապետ . . . . 107
Առ յարգոյապատիւ Տէր Հ. Գաբրիէլ Այվազեան վարդապետ . . . . 109
Առ Վենետիկ ասպնջական Մխիթարեան Ուխտին, և 'ի գլխապետն Սոմալեան . 110
Ի հանդէս Արքայութեան գերապատիւ Տեառն Սուքիասայ Սոմալեան . . 114

Ի հանդէս երջանիկ փոխման ՚նախահօր Ուխտիս Լուսանորոգն Մխիթարայ . 116
Առ Մեսրոպ Վ. Ջրպալեան . . . . . . . . . . 117
Ի հանդէս ընդունելութեան վարդապետական գաւազանի երկուց Նորընծայ վար-
դապետաց . . . . . . . . . . . 125
Ի հանդէս Սքեմաւորութեան . . . . . . . . . 127
Ի հանդէս Ուխտադրութեան . . . . . . . 128 . 129 . 130 . 131
Առ Արարատ Նաւ Նորակառոյց . . . . . . . . 133
Առ նոյն ՚նաւ . . . . . . . . . . . 135
Պարոն Ալեքսանդրի Ռափայէլի Ղարամեան հրաժեշտ . . . . 138
Առ պերճապատիւ Մեկենաս Արամեան . . . . . . 139
Առ Սերաստեանս . Մելամաղձ ցուցք . . . . . . . 141
Առ Սերաստեանս քերթուած փոխադարձ . . . . . . 143
Ի նոր Դիտապետն Հայաստանեայց . . . . . . . 145
Առ նոյն Հայրապետ ուսանողական . . . . . . . 147
Ի լման տպագրութեան Համաձայնական պատմութեան Ռոլէնի գաղղիացւոյ . . 148
Ի մեծ Քերթողահայրն Հայաստանեայց Մովսէս Խորենացի . բանայանգ . . 149
Ի տպագրութիւն պատմութեան Մովսէսի Խորենացւոյ Քերթողահօր . նոյնայանգ . 152
Արձանագիր առ ոգին եղերերգակ ընդ կործանումն Հայկազեան գահու . . 155
Նուագ յաղթութեան ՚ի հանդէս ձեռնադրութեան Որսանեանց . . . 156
Ի նենգախուշ մահ Խոսրովայ Մեծի . . . . . . . 158
Ի Թատերական Ողբերգութիւն Երուանդայ Հայոց արքայի . . . . 159
Ի Ս. Վարդանանս . բանայանգ . . . . . . . . 163

---

# ՏԵԱՌՆ Հ. ԵՂԻԱՅ ԹՈՄԱՃԱՆ

## ՎԱՐԴԱՊԵՏԻ

Տաղերգութիւն ՚ի մեծն Մխիթար Աբբայ . . . . . . . 169
Դարձեալ ՚ի նոյն . Արձանական . . . . . . . . 175
Ի հարսանիս մեծաց Պայազատաց բարերարաց ազգիս . . . . . 176
Ի Սուրբն Դաւիթ մարգարէ . . . . . . . . . 179
Յողբերգութենէ Ս. Արգլմենի . Երգ . . . . . . . 183
Դարձեալ ՚ի նոյն . . . . . . . . . . . 184
Յարկածս իւր ողբ եկեղեցւոյն Հայաստանեայց . . . . . . 184
Առ Հայաստան խրախոյս , բանայանգ և բանաչափ . . . . . . 187
Առ ազնուազարմ պատանի Յ. Գարեգին Տատեան . . . . . . 190